

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6318.



05 SEP 20

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Յ. ԽՈԲԻՆԵՆՅԵՐԻ ԽՈՎՉԵՄԵԴԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՅԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1928

5(47.925)
F - 24

5(47-525)
F-24


24 JAN 2006

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1921 թ. փետրվարի 15-ից մինչեւ հուլիսի 13-ը Պատմարտի, Գյաղագ-Զանգեզուրի նախանձերում և նույնականացնելու համար պատրաստված ուղարկան գործությունների ուղմական-հնական վերլուծման մի փորձ

Ը. ԱՄԵՐԻԿԱՆՑԻ ԱԹԵՇԵՐԵՎԱՆ



ՊԵՏՉՐԱՏ

1928

ՅԵՐԵՎԱՆ

28 FEB 2013
2009 MAR 4

6318



ՊԵՏՏՐԱՆԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
 Պատվ. № 1392 Հրամ. № 879
 բառ. № 833 թ. Տիրագույն — 2,6

24145-59

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ

Յ. թղ հայկական (ներկայում 1-ին հայկական ընկ. կիպարիտ Մխչյանի անվան հրածից) գնդի իմ մարտական ընկերներին, այն գնդի, վորք յերիտասարդ հայկական Կարմիր բանակի առաջին զրամասերից մեկն եր, յեզ վորի հրամանատարությունը յես վարում ելի 1921 թվի փետրվարից մինչև հուկտեմբեր ամիսը:

ՀԵՂԻՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԱԿԱԿԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

«Ճնշել բուրժուազիային և նրա զիմանքությունը դեռևս անհրաժեշտ է: Մանավանդ այս անհրաժեշտ եր Կոմմունայի համար, վորի պարտության պատճառներից մեկն այն է, վոր նա այդ բավականաշափ վճարականությամբ չարեց»:

(Լինին, Յերկ. ժող., ա. մ., էջ 330).

I

Հայաստանի քաղաքացիական պատերազմի պատմության մեջ 1921 թվի վետրվարյան դաշնակցական հականեղափոխության շրջանը հատուկ հստաքրքրություն եներկայացնում վոչ միայն գուտ պատմական տեսակետից, այլև քաղաքական-գործնական, քանի վոր Դաշնակցություն կուսակցությունը դեռևս մնում եմեր հիմնական դաստկարգային ներքին թշնամին:

Դաստկարգային թշնամու, թեպետև հաղթված ու ընկձված թշնամու դեմ մղված պակարի փորձն ուսումնասիրեն ու հաշվի առնելու անպայման ուստակար ե վոչ միայն այն պատճառով, վոր դեռ հնարավոր ե ընդհարումն այդ թշնամու հետ, վորի թիկունքում կանգնած ե համաշխարհային հականեղափոխությունը, այլ և այն պատճառով, վոր նման պատմական յերկույթների ուսումնասիրությունն ու մարքսիստական վերլուծումը մեծապես կնպաստե այն մանը յերկրների ու ազգությունների ճնշված աշխատավոր զանգվածների ազատազրության գործին, վորոնց բախտն ըստ եյության միանման ե՝ այս կամ այն առանձնահատկություններովը հանդերձ:

Իր ավագ սերնդի հարուստ փորձառության ոգտա-

գործումը, սխաների հաշվառությունը, անհաջողությունների, պարտությունների և հաղթությունների պատճառների ուսումնասիրությունը, հերոսական պայքարի լավագույն արագիցիաների պահպանությունը, — ահա նոր աճող հեղափոխական սերնդի համար վոգեորության ու նախազգուշացման, նորանոր ուժերի հավաքման ու կազմակերպման աղբյուրը, ահա լավագույն յերաշխիքը՝ հաջող առաջադացության և նոր հաղթությունների՝ դեպի սցիսլիզմ տահող ճանապարհն:

Բայց մարդկության պատմական գարգացումը բոլոր յերկրների համար համաչափ չի ընթացել ու ընթանում մի շարք պատմական, անտեսական, աշխարհագրական և այլ պատճառներով:

Մի շարք յերկրների ու ազգերի անտեսական ու քաղաքական նվաճումները դեռ նոր պիտի ձեռք բերեն ուրիշ շատերը:

Նույն եւ յեղել և համաշխարհային պրոլետարիատի դասակարգային հեղափոխական պայքարի նկատմամբ:

Յեթե վերջին համաշխարհային պատերազմից առաջ Ռուսաստանի բանվոր դասակարգը շատ բան ուներ սովորելու յեփողական պրոլետարիատից, այսոր արգեն շատ բան կա, վոր Յեփողայի և ազ յերկրների բանվորներն ու աշխատավոր գյուղացիները պիտի սովորեն Խորհրդային մեծ Միության բանվորներից ու գյուղացիներից:

Յեթե պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայի իրագործման հոկտեմբերյան մեծ փորձը կատարյալ հաջողությամբ պսակվեց, դրան քիչ չողնեց Պարիզի Կոմմունայի առաջին, թեև անհաջող, պատմական որինակը, Կոմմունայի, վոր գրավեց ամբողջ բանվոր դասակարգի և նրա մեծ գաղափարախոսներ—Մարքսի, Ենգելսի և Լենինի ուշադրությունը:

Փոքը ու հետամնաց գյուղացիական Հայաստանի աշխատավոր գանդվածների խորհրդային իշխանության հա-

մար մզած հեղափոխական պայքարի ծավալով փոքր, բայց բովանդակությամբ հարուստ փորձի ուսումնամիրությունը, պատճառական վերլուծությն այն ճանապարհի, վորով ընթացավ ու զարգացավ Հայաստանի աշխատավոր գանգվածների պայքարը խորհրդային իշխանության համար, ուսումնամիրությունն այդ պայքարի ետապների, պարտությունների, հաղթությունների և այն, — աճուր կերպով կկապէ մեր աճող հեղափոխական սերնդն պայքարի լավագույն արագիցիաների հետ, նոր հետաքրքրական մումնաներ կմացնի բանվորության ու աշխատավոր գյուղացիության հեղափոխական շարժման պատճմության մեջ, հեղափոխական շարժման՝ հեղափոխական պրոլետարիատի դեկարտական հարստանարիչների և համաշխարհային կապիտալիստների դեմ, և ազատագրության ուղին ցույց կտա փոքր ճնշված ազգերին, վորոնք, մեր փորձառությամբ զինված, կարող են կրծատել և դյուրացնել այդ ուղին:

Հակառակ այս բոլորին՝ մենք մինչեւ որս ամենափոքր չափով անզամ չենք կատարել մեր հեղափոխական միջազգային պարտականությունը: Հիշյալ իմաստով մինչեւ որս վոչ միայն նույնիսկ աննշան փորձ չենք արել ուսումնամիրելու, վերլուծելու և պատճականորեն գնահատելու Դաշնակցության փետրվարյան հականեղափոխությունը, այլ մինչեւ անզամ չենք հրատարակել անհրաժեշտ փաստաթղթերը կամ նույնիսկ սովորական պարզ հիշողություններ, չենք զբաղվել գեթանցքերի նկարագրությամբ, փաստերի պարզ շարադրությամբ և այն:

Իսկապես այս վիճակի մեջ եւ ընդհանրապես Հայաստանի հեղափոխական շարժման պատճմությունը, յեթե մի կողմ թողնենք «Խորհրդային Հայաստան» լրագրում ապագրված միքանի թույլ հիշողություններն ու յերկու փոքրիկ գրքույկ (ընկ. Ա. Հովհաննիսյանի և իմը) մայիսյան ապստամբության մասին, ինչով պետք երացատրել այս

լուռթյունը։ Կարծես թե փետրվարյան հականեղափոխության պատմության մեջ մեզ համար ինչ-վոր մի «նշանակյի» բան կա, վորի մասին պետք է միայն լսել, այն ինչ, ընդհակառակն, այդ պատմությունը՝ մեր սխալների հետ միասին, վոր արդյունք եյին մեր անփորձության, լի յե Հայաստանի բանվորների ու գյուղացիների պահանջման սխրագործություններով ու անորինակ հերոսությամբ։ Կամ կարծես թե բանվորներն ու գյուղացիները վորեև բանում մեղանչել են, այնինչ, ընդհակառակն, չնայելով խիստ դժվար ու դաժան պայմաններին, նրանք ամենակատաղի դիմակություն ցույց տվին իրանց գասակարգային թշնամիներին, վորովճետե չեյին ցանկանումնորից կաշկանդվել դարավոր ճնշման շղթաներով, վոր նոր եյին թոթափել։ Իսպիսին ել վոր լինեն մեր այդշափ թուլության որյեկտիվ պատճանները մեր իդեոլոգիական ճակատում, այնուամենայնիվ խիստ ակներեւ ե նաև սուբյեկտիվ հանդամանքն այս գործում։

Յեվ ահա Հայաստանի փետրվարյան անցքերի վերաբերյալ «լուռթյան ճակատն» առաջին անգամ պատառում ե Ղամարլուի ճակատի (գաւակների վեմ) հրամանատարներից մեկը, հրամանատարը այն հերոսական յերրորդ գրնջի, վորը բանի-քանի անգամ վրկել ե գրությունը ճակատում, ազատել ե մեզ դժվար կացությունից։

Ընկ. Բաղդասարյանը հարցին մոռեցել ե գուտ ուղամակն կողմից։ Այդ գիրքը նվիրված է պատերազմական անցքերի և դաշնակցական հականեղափոխական ու մեր հեղափոխական հրամանատարության ստրատեգիայի ու ստակտիկայի վերլուծման, և վորպես այդպիսին՝ գիրքն արժեքավոր է վոչ միայն վորպես փետրվարյան հականեղափոխության զուտ ուղմական կողմը շոշափող առաջին գիրքը, այլ և ըստ իր բովանդակության և վորակի։ Ինարկե, ուղմական գիտելիքների վերաբերմբ յես ձեռնամ, բայց ինկատի ունենալով քաղաքացիական պա-

տերագմի գործնական փորձը թե Ղամարլուի և թե այլ ճակատներում, ինձ թվում ե, թե ընկ. Բաղդասարյանին հաջողվել ե առաջ փետրվարյան ուղմական զեպքերի ուղիղ վերլուծություն ելության և հաջող գնահատականը ուղմական առաջակետից։

Շատ լավ կլիներ, յեթե մեր ուղմական գործին զիտակ զինվորական բնկերները, մանավանդ վորոնք կը ուիթերին մասնակցել են, իրենց կարծիքը հայտնեյին այս գրքի առթիվ, լրացնելով ու խորացնելով վերլուծումը կամ շոշափելով վիճելի մոմենտները։ Կարելի յե, ինարկե, հակագըել և այլ տեսակեաններ, յեթե կան։ Այդ անհրաժեշտ ե մանավանդ հիմտ, յերբ բնակչության և մասնավորապես յերիտասարգության ուղմականացման խնդիրը կա մեր առաջ։

Գիրքը գրված է զինվորական լեզվով, հակիրճ, պարզ, առանց ավելորդ բառերի։ Ընդհակառակն, այնտեղ, ուր կարելի յեր հետաքրքրական ու զրավիչ պատկերներ տալ, հեղինակը խուսափում է գրանից, բայց այդ պակասություն չե գրքի համար, վորովճետե պայմանավորվում է հեղինակի նպատակով, վորը և վորոշում է շարահյուսության բնույթը։ Այս հանգամանքը վոչ միայն չի դժվարացնում գրքի ընթերցանությունը, այլ ընդհակառակն, ավելի յե զրավում ընթերցողին, վորի առաջ բացվում են արունակ նոր գործողություններ, գրության արագ փոփոխություններ ճակատում, հարձակումն, նահանջ, մանյովը, զորաթերի կողմից շուրջ անել (օճօռ), առանձին ու շեշտակի հարվածներ, վոր ձեռնակուի յեն փոխվում և այլն։

II

Գիխավորն ու հիմնականը, վոր գրքի հեղինակն ուղիղ ե ըմբռնել, և վոր առանձին ուշագրություն ե գրավում, այդ մարտական գործողությունների տակափիկան, ձը-

բազրերն ու բնույթն և թե Դաշնակցության և թե մեր կողմից: Իսկ այդ բոլորն, ինարկե, սերտ կապված և յերկու կողմերի քաղաքականության և ընդհանուր տակտիկայի հետ:

Հայաստանի խորհրդայնացման նախորեյին ստեղծված պատմական փորոշ և առանձնահատուկ կացության հետեւ վանքով, փորի մասին հողվածի ծավալը թույլ չի տալիս կանգ առնելու, գաջնակցական կառավարության գորքերի հրամանատար՝ հայտնի խմբապետ Դրոն առաջին շրջանում (մոտավորապես 1 և կես ամիս) Հայաստանի էերիտասարդ կարմիր բանակի հրամանատարը յեղավ: Այդ Հայաստանի աշխատավորությանը վոչ անծանօթ տիրահոչակ պատմական հերոսը միանգամայն ի չարք գործադրեց սկզբնական շրջանում խորհրդային իշխանության իրեն ցույց տված վերաբերմունքը:

Դաշնակցությունը Դրոյի միջոցով հենց խորհրդայնացման սկզբից փետրվարյան անցքերն ոկտեց պատրաստել: Այս նպատակով Դրոն յետ ուղարկեց Ադրբեյջան ոռուական հեծյալ զորամասերը կերի և պարենի բացակայությունը պատճառաբանելով: Նա սրանով չբավականացավ. Յերեանում կար լավ կազմակերպված մի առանձին հայկական գունդ, վոր կազմված եր բացառապես Դավախի շրջանի մայիսին ապատամբած գյուղացիներից: Այս գունդն առաջին շրջանում խորհրդային իշխանության ամենավրատհելի հեղափոխական նեցուկը պիտի լիներ Հայաստանում, քանի զեռ դաշնակցական կառավարության նախկին բանակը հիմնականորեն վերակազմված չեր: Դաշնակցականներն ամենից ավելի կարող ելին վախենալ և վախենում ելին այս գնդից:

Ուստի Դրոն սկսեց համոգել մեր ուղամիրմիսսարին, թե անհրաժեշտ ե ցրել այդ գունդը և վաշտ-վաշտ միացնել ին դաշնակցական գնդերին. Դրոյին հաջողվեց իրագործել իր ծրագիրը՝ հակառակ գնդի վարչության և

ուային հերթին գնդի հրամանատար ընկ. Բաղդասարյանի գիմագրության:

Դրոյին հաջողվեց նաև Յերեան քաղաքի պարետ նըշանակել վոմն սպայի, խմբապետ Սալգայանին, վորը մառուղերիսաների խուժը եր պատրաստում քաղաքում:

Դրոն բանակի շտաբում պատասխանատու պաշտոն տվեց իր մերձավոր զինակիցներից մեկին, նախկին զընդապետ Թարխանյանին, վորը մեր բոլոր գաղտնիքներն իշմանալով՝ ապատամբությունից մոտավորապես յերկու շարաթ առաջ փախավ Բաշգյառնի, խմբապետների բունը, վորտեղ դաշնակների զինվորական կենարոնն եր գտնվում:

Այս Թարխանյանը դաշնակ խմբերի գլուխն անցնելով և լավ տեղյակ լինելով իրերի գրությանը Յերեանում ուղամական տեսակետից և մեր զորամասերի դասավորությանը՝ դաշնակցական հականեղափոխության տեսակետից զործողության բավական հաջող ծրագիր կազմեց՝ նպատակ ունենալով նեղ ողակի մեջ փակել Յերեանն ու վոչնչացնել մեր բոլոր կենդանի ուժերը կենարոնում:

Միայն Թարխանյանին չհաջողվեց իրագործել իր ծրագիրը՝ շնորհիվ այլասերված ու փչացած խմբապետական ու մատզերիստական տարրերի, վորոնք չելին կամենում հնազանգվել միմյանց և տարգած ելին թալանով, բոնություններով, հարբեցողությամբ և այն:

Այսպիսով թշնամին իր ուղամական փորձառության ու խորամանկության հակառակ սոցիալական ու քաղաքական հնարավորություններ չունեցավ իրագործելու իր գաղանային խորամանկ ծրագիրը:

Իսկ ի՞նչ եր մեր տակտիկան ու մեր զործողության ծրագիրը Դաշնակցության գեմ: Դեռ մոտավորապես տասոր ապատամբությունից առաջ Արտակարգ Հանձնաժողովը նախազգուշացրել եր բանակի հրամանատարությանը, վոր դաշնակների զինված ապատամբություն և պատրաստվում, պահանջելով շտապ և լուրջ միջոցներ ձեռք առնել: Սա-

կայն Արտակարդ Հանձնաժողովի տված տեղեկությունները հրամանատարությունը խիստ չափազանցրած համարեց, համարելով դաշնակցական բանդաների թիվը վոչ ավելի հիսուն հոգուց Բաշգյանին շրջանում։ Այսուամենայնիվ Արտակարդ Հանձնաժողովը կ. կոմիտեյի համաձայնությամբ վորպիս նախագործության միջոց վորոշեց քաղաքի ակտիվ դաշնակցականներին ձերբակալել, վորոնց թվում և վրացյանին, վորը հետո դաշնակցական «փրկության կոմիտեյի» գլուխն անցավ։

Չեսնարկիցին նաև միքանի նախնական, և գժբախտաբար թույլ, սազմական միջոցներ, ինկատի ունենալով գործ ունենալ միայն մոտ 50 հոգուց բաղկացած մի բանդայի հետ Բաշգյանին շրջանում։ Արտակարդ Հանձնաժողովը յերկու-յերեք որպա ընթացքում ձերբակալեց քաղաքի համարյա բոլոր ակտիվ դաշնակցականներից մոտ 300 հոգի և դրանով կանխեց ապատամբությունը քաղաքում, վոր Դաշնակցության ընդհանուր ապատամբության ծրագրի մեջ եր մանում։ Սակայն Վրացյանը կարողացավ ժամանելին թագնվել, և նրան չհաջողվեց ձերբակալել։ Դրության լրջությունը մենք բոլորս, մեզ հետ և բանակի հրամանատարությունը, լիովին գիտակցեցինք շատ ուշ, այսինքն՝ համարյա Քանաքեռի անկումից և դաշնակցականների Եջմիածինն առնելուց հետո, մոտավորապես վետրափարի 16—17-ին, իսկ 18-ի առավոտն արդեն ստիպված յեղանք թողնել Յերևանը։

Թշնամու ուժերին ու նրա գործողությունների ծրագրին իրազեկ վիճելը հարավորություն չտվին մեր շտարին ամեն կողմից համառությամբ հարձակող թշնամու գեր գործելու կանոնավոր ծրագիր կազմելու։

Մեր զորամասերից շատերը կտրվեցին միմյանցից շտարի հետ հաղորդակցություն ունենալուց և ստիպվեցին անձնատուր լինել կամ փախչել զանազան կողմեր։ Հակառակ այս պարագային մոտ 3.000 լավագույն հեղափոխա-

կան մարտիկներ գուրս յեկան Դաշնակցության ողակից և մարտական ուժ զանալով՝ վոչ միայն պաշտպանվում ելին, այլ և յերկու անգամ հաջող հարձակում գործեցին քանակով վոչ պատկաս քան յերկու անգամ ավելի ուժեղ թշնամու վրա, ջարդեցին և փախտի մատնեցին նրան։

Բայց վերջնական հաղթությունը հնարավոր յեղավ միայն, յերբ Հայաստանի ուրիշ շրջաններում բանվորներն ու զյուղացիները մարտական ուժեր կազմակերպելով Կարմիր բանակի զորամասերի հետ միասին ողնության յեկան Ղամարլուի զորախմբին։

Թշնամին դուրս շպրտվեց Յերևանից Դարավագյաղի և Զանգեզուրի լեռները և ապա այնաեղից Պարսկաստան։

Դասակարգային թշնամուն լավ չճանաչելը, թերագնահատելը, կամ ավելի շուտ սխալ գնահատելը, վոչ միայն սազմական, այլ և քաղաքական տեսակետից և որա հետեանքով դաշնակց։ հականեղափոխության վոչ այնքան վճռական ճնշումը փետրվարից առաջ, բավականաշափ ուժեղ կոմբաջիների բացակայությունը Յերևանի և Եջմիածնի գավառներում, վորտեղ ուժեղ կուլակության, ապագասակարգայնացած տաճկահայ փախստականների, չարչիների ու սպեկուլյանների գոյությունը հնարավորություն տվեց Դաշնակցությանը հավաքելու իրենց հականեղափոխական ուժերը, — առա հիմնական պատճառը մեր ժամանակավոր փետրվարյան անհաջողության, վոր այնքան թանգ նստեց մեզ։

Դասակարգային թշնամին յերբեք այնպես հեշտ անձնատուր չի լինում, ինչպես այդ սկզբում թվում եր մեզանից շատերին Հայաստանում։ Ահա թե ինչ է զրում այդ առթիվ կենինը. «Ամեն մի խորունկ հեղափոխության ժամանակ կանոն ե՝ յերկարատեվ, համար, կատարի (ընդգծումը կենինին ե) զիմագրությունը շահագործողների, վորոնք մի շարք տարիների ընթացքում պահպանում են վաստացի խոշոր առավելություններ շահագործվողների վերա-

բերմամբ: Շահագործողները չեն հպատակվում շահագործ-
վողների մեծամասնության վորոշմանը, առանց փորձելու
իրանց առավելությունը վերջին հուսահատական կրվի, սի-
ւարք կրիվների մեջ»: (ընդգծումը մերն ե. — Շ. Ա.) (Ե-
նին, յերկ. ժող., հ. 15, էջ 457): Յեվ այստեղ իսկ Ե-
նին ուսուցանում ե մեզ, թե շահագործողների ճնշումը,
պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելուց հետո,
անհրաժեշտ ե շարունակել մի շարք տարիներ:

Այս քաղվածքի մեջ ասված ե համարյա այն բոլորը,
ինչ վոր հիմնականն ե ու գլխավորը, Հայաստանի փետրը-
վարյան հականեղափոխության մասին, ինկատի ունենա-
լով, իհարկե, ստեղծված պատմական կացության թե որ-
յեկափ և թե սուբյեկտիվ առանձնահատկությունները:
Դաշնակցականները «վերջին հուսահատական կովի» մեջ
փորձեցին իրանց առավելությունը ժամանակավոր հաջողու-
թամբ, բայց վերջիվերջո վերջնական պարտության գնով:

Յեթե փետրվարյան հականեղափոխության սկզբնա-
կան շրջանում Դաշնակցության մարտական ուժերը մեռ-
ուժերից մոտ յերկու-յերեք անգամ ավելի ելին (Դամար-
յուի ճակատում), ապա այդ վոչ թե այն պատճառով եր,
վոր նրանք յերկրում վորեե քաղաքական գերակշություն-
ունելին, այլ այն պատճառով, վոր, ոգտվելով մեր սիստ-
ներից՝ նա, Դաշնակցությունը կարողացավ սաղմական մի-
ջոցով մեր ուժերի մի մասն անջատել կենտրոնից, իսկ
մյուսը՝ իշխանության և բանակի կենտրոնական որգան-
ների հետ միասին վանեց ամբողջ Հայաստանից միանդա-
ման կարգած Բեռք-Վեղիկի փոքրիկ շրջանը, վորտեղ վոչ
բնակչություն կար և վոչ ել ամենափոքր չափով անգամ
ապահով թիկունք:

III

Իսկ 500—600 սպաների վարումը, Յերկանում կա-
տարված սեկուլիգիաները և այլն—միթե այս բոլորը չեր

գրգռում մանր բուրժուազիային, միթե այս բոլորը չեր հա-
կասում մեր արևելյան ազգային քաղաքականությանը: Մեր
կուսակցության արևելյան ազգային քաղաքականությունը
պահանջում եր վոչ թե այն, վոր մենք հրաժարվեյինք
ակտիվ հականեղափոխությունը կղզիացնելուց և խորհուրդ-
ների իշխանությունը նրա հնարավոր հարվածներից ապա-
հովելուց, այլ այն, վոր ըստ կարելույն մեղմացնեյինք
ուղմական կոմմունիզմի մեթոդները, խուսափեյինք ավե-
լորդ սեկուլիգիաներից ու կոնֆիսկացիաներից, զգուշա-
վոր վերաբերմունք ունենայինք դեպի զյուղացիությունը,
մանր-բուրժուական մտավորականությունը և այլն:

Սակայն հացի գրավումը Յերեան քաղաքի ուներ
բնակչությունից մի միջոց եր, վոր ստիպված եյինք գոր-
ծադրել, քանի վոր Թուսաստանի հացն ուշանում եր: Բը-
նակչությանը հայտարարված եր, վոր զրավված հացը կը-
վերադարձի, յերբ վոր տեղ հանի Թուսաստանից ուղարկ-
ված և Վրաստանի սահմանում ժամանակավորապես բըռ-
նրված հացը:

Այսուամենայնիվ կարելի յեր ավելի լավ կազմակեր-
պել այդ գործը, քան կազմակերպված եր, չպրակելու հա-
մար քաղաքի մանր բուրժուազիային և Դաշնակցության
ձեռքը ազիտացիոն զենք չտալու մեր դեմ, վոր և տեղի
ունեցավ: Իսկ ինչ վերաբերում ե սպաների վտարմանը,
այդ միակ ուղիղ միջոցն եր, վորովետեւ յեթե հականեղա-
փոխական սպայությունը կղզիացած վիճեր, փետրվարին
մեր գործն ավելի ևս կրարգանար: Ակտիվ հականեղա-
փոխական սպաներին վանակելը վոչ միայն բացասորեն
չազգեց բանվորների ու զյուղացիների տրամադրության
վրա, այլ ընդհակառակը՝ ավելի շուտ հասկանող տվեց նը-
րանց, վոր իսկական խորհրդային իշխանություն և հա-
տատվում Հայաստանում:

Վորոշ բացասական գեր խաղաց մեզ համար նույն-
պես սայլահարկը Յելենովկայի ու Սխտայի շրջաններում,

վորտեղ խորհրդային իշխանության տեղական որդանների մեջ սոլոսկել եյին թշնամի տարրեր, զիմավորապես դաշնակցականներ, վորոնք դիմամբ հանել եյին տալիս վոչ թե կուլակների սայլերը, այլ ավելի միջակ և աղքատ դյուզացիների և զրանով աշխատում եյին զրգուել զյուղացիներին մեր դեմ:

Առհասարակ Յերկամնի և Եջմիածնի գավառների շատ շրջաններում դաշնակցականները սողոսկել եյին տեղական խորհրդային ապարատամանների մեջ գրավելով հեղկոմների նախագահների, շրջանային միլիցիայի պետերի և այլ պաշտոններ: Այդ տարրերն, ինարկե, զգվելի դեր եյին կատարում զործելով հոգուտ Դաշնակցության: Որինակ՝ Ախտայի շրջանի միլիցիապետն իսկական խմբապետ դուրս յեկավ, վոր հականեղափոխություն պատրաստելով մեր դեմ՝ հետո ակտիվ մասնակցություն ունեցավ վետրվարի հականեղափոխության ժամանակ մեր դեմ:

Սպանների վտարումը, ուեկվիզիցիան ու սայլահարկը դաշնակցությունը, ինարկե ոգաապօրծեց մեր դեմ ուղղված կատաղի ազիտացիայի ու պրովոկացիայի համար, բայց 21 թ. փետրվարին ունեցած մեր ժամանակավոր անհաջողության հիմնական պատճառը, կրկնում եմ, այն երբ վոր մենք ուղղակի սխալ եյինք գնահատել մեր թշնամուն քաղաքական, ապա և ռազմական տեսակետից:

Ասդիացի գեներալ Ստորսը դեռ Հայաստանի խորհրդայնացման սկզբում խորհուրդ եր տվել Դաշնակցությանը «բայլշեկիների հետ ընդհանուր լեզու գանել»: Հատկանալի չեմ միթե, թե ինչ եր նշանակում յերկրիմի և խորամանկ անգլիական քաղաքականության լեզով «բայլշեկիների հետ ընդհանուր լեզու գանել»:

Դաշնակցականները հետեւելով անգլիացի գեներալի խորհրդին, վճռեցին «հոժարակամ» իշխանությունը հանձնել մեզ գեկանեմբերի 2-ին, յերբ արգեն խորհրդային իշխանությունը հայտարարված եր նոյեմբերի 29-ին, յերբ

նրանց միակ նեցուկ զորամասերն առանց հրացան արձակելու անձնատուր եյին յեղել մեղ Դիլիջանի տակ, իսկ նրանց հրամանատար՝ Հայաստանի բանվորների ու գյուղացիների հայտնի դահիճ Սեպուհը փախել եր Վրաստան, և յերբ Հայաստանի Հեղկոմը հեղափոխական գորքերի զրությանցած Դիլիջանից ճանապարհ եր ընկնում գեպի Յերևան: Ել ինչ եր մնում անելու Դաշնակցությանը, յեթե վոչ Սառքսի խորամանկ խորհրդին հետեւելով առժամանակ հրաժարվել իշխանությունից: Դաշնակցականները գեկտեմբերի 2-ին իբր թե «Ճախակողմյան» Դրոյի և Վրացյանի միջոցով հայտնեցին, վոր իշխանությունը մեզ են հանձնում, բայց միենույն ժամանակ ամեն միջոց ձեռք առան, փրապեսզի պահպանեն իրենց անվեգալ զինվորական և կազմակերպչական ու ազիտացիոն պապարատը Յերկամնում, Թալինում, փախստական սասունցիների մեջ, Բաշդյանիում, վոր հականեղափոխական խմբապետների և թուրք բրնակչության թալանչիների բուն եր:

Պարզ չեմ արդյոք, վոր Դաշնակցականները պատրաստել եյին մեզ համար փետրվարի պատմությունը նախքան ուեկվիզիցիան, սպաների վտարումը և այն, սկսած այն ժամանակվանից, յերբ «հոժարակամ» իշխանությունը մեզ հանձնեցին:

Միայն փետրվարյան հականեղափոխությունն զգալի պարզություն, վորոշություն և վճռականություն մտցրեց մեր քաղաքականության մեջ Դաշնակցություն կուսակցության վերաբերմաբ: Այդ պարզությունը, վորոշությունն ու վճռականությունը լինեյին մինչև փետրվարը, փետրվարը տեղի չեր ունենա և կամ գոնե այն ծավալն ունույթը չեր ունենա: Այս բոլորն ասում ենք վոչ վորին մեկին մեղաղը ելու համար, վորովհետեւ գրա համար մենք ամենքս ել պատմականորեն պատասխանատու յենք: Այս ասում ենք փետրվարի գտերը հաշվի առնելու համար: Մեր սխաները փետրվարի շրջանում ծագում եյին թեր-

թաղ. պատ. Հայաստանում—2



ևս անխուսափելիորէն, մեր անփորձությունից: Մեր կուսակցության իշխանության ղեկավարների մեծագույն մասնայն ժամանակ, Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի փորձառությունը չունենալով, կրկնում եյին նույն սխաներն, ինչ զար անում եյին մեր ընկերները Ռուսաստանի շատ վայրերում՝ Հոկտեմբերյան հեղափոխության առաջին շրջանում:

Մենք այսչափ ծանրանում ենք փետրվարյան հականեղափոխության սուբյեկտիվ մոմենտների վրա վոչ թե նրա համար, վոր այդ հականեղափոխությունը չուներ նաև իր որյեկտիվ պատճառները, այլ նրա համար, վոր այստեղ սուբյեկտիվ մոմենտներն ավելի խոշոր գեր են խաղացել, ուստի և հենց այս մոմենտներից ե, վոր մեր կուսակցությունը Հայաստանում պիտի դասեր առնի: Յեթե Դաշնակցության փետրվարյան ժամանակոր հաջողությունը համարելու լինենք առավելապես որյեկտիվ պայմանների, հետհարար և ուժերի փոխհարաբերության հետևանք, ինչպես, որի ակ, հեղափոխության պարտությունը 1905 թվին Ռուսաստանում, այն ժամանակ, ինարկե, սխալ կլիներ այդչափ ծանրանալ հարցի սուբյեկտիվ կողմի վրա: Սակայն մեզ թրվում ե, վոր որյեկտիվ դժվարությունները, զիսավորապես անտեսական, վոր անպայման մեծ չափով գոյություն ունելին, և հեղափոխական ու հականեղափոխական ուժերի փոխհարաբերությունը չե, վոր համեմատաբար ավելի վճռական ղեր խաղացին փետրվարյան հականեղափոխության հարցում, այլ ավելի շուտ այն հանգամանքը, վոր հեղափոխական ուժերի կազմակերպման ու ճիշտ գասավորման և հականեղափոխական ուժերի ջլատման, քայլայման ու չեղոքացման դորձում մեր անփորձության հետեւանքով չկարողացանք իր ժամանակին հանդես բերել բավականաչափ վճռականություն ու արվեստ: Դաշնակցությունից մենք ժառանգություն ստացանք անտեսական միանգամայն քայլայված, սոված ու մերկ յերկիր: Առւ-

սաստանից ուղարկված հացը մենշևկայան Վրաստանը, չնայած համապատասխան պայմանագրին, բաց չեր թողնում գեղակի Հայաստան: Հաղորդակցության միակ ճանապարհ՝ Յերևան—Դիլիջան խճուղին ձյունապատ լինելով՝ անսանի դժվարություններ եր ներկայացնում Դաղախում հավաքված բավականաչափ մժերքն ու կտորեղենը Յերևան տեղափոխելու համար: Այս բոլորին պեսք և ավելացնել նաև այն, վոր զգացվում եր նաև տշխատող ուժերի սակագություն, և կուսակցական կազմակերպությունների թուլացած վիճակը մայիսյան պարտությունից հետո:

Մրանք եյին այն խոշոր որյեկտիվ դժվարությունները, վորոնք Դաշնակցությունը գավազրորեն ողտագործելով՝ Յերևանի և Եջմիածնի գավառներում դյուղացիական կուտակության և միջին առետրական շերտերի հականեղափոխության դլուխ անցավ՝ ոգտագործելով նաև դասակարգային պատակերը կորցրած և դաշնակցական տրագիցիաներով որնակած տաճկահայ գաղթականական մասսան, վորը փետրվարյան հականեղափոխության ժամանակ հանդիսանում եր Դաշնակցության հիմնական մարտական ուժը:

Հեղափոխության առաջին շրջանում տնաեսական դժվարությունները միշտ անխուսափելի յեն, վորովհետեւ հեղափոխությունը նախ՝ առաջ և զալիս հենց ժողովրդական մեծ կրիզիսներից, և յերկրորդ՝ պահանջում և մեծ ծախքեր (издерյски), վորից հետո հեղափոխական իշխանությունը չի կարող միանգամից ինչ-վոր կախարդական զավականի հարվածով ամեն ինչ ուղղել: Պարաված հականեղափոխական ուժերն առաջում են ողտագործել արդ դժվարություններն ամեն տեսակ միջոցով, ուստի և հեղափոխական իշխանության առաջի քաղաքական, կազմակերպչական ու ռազմական ամրացումը: Խնդիրը նրանում չե, վոր Խ. Հայաստանն այդպիսի անտեսական պայմաններում կարողանար յերկար տարիներ գոյություն ունենալ և նորմալ կերպով

ևս անխուսափելիսրեն, մեր անփորձությունից: Մեր կուսակցության իշխանության դեկավարների մեծագույն մասնայն ժամանակ, Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի փորձառությունը չունենալով, կրկնում եյին նույն սխաներն, ինչ վար անում եյին մեր ընկերները Ռուսաստանի շատ վայրերում՝ Հոկտեմբերյան հեղափոխության առաջին շրջանում:

Մենք այսափ ծանրանում ենք փետրվարյան հականեղափոխության սուրյեկտիվ մոմենտների վրա վոչ թե նրա համար, վոր այդ հականեղափոխությունը չուներ նաև իր որյեկտիվ պատճառները, այլ նրա համար, վոր այստեղ սուրյեկտիվ մոմենտներն ավելի խոշոր գեր են խաղացեր, ուստի և հենց այս մոմենտներից ե, վոր մեր կուսակցությունը հայտաստանում պիտի գասեր առնի: Յեթե Թաշնակցության փետրվարյան ժամանակավոր հաջողությունը համարելու լինենք առավելապես որյեկտիվ սպայմանների, հետևաբար և ուժերի փոխհարաբերության հետևանք, ինչպես, որի ակ, հեղափոխության սլաքառությունը 1905 թվին Ռուսաստանում, այն ժամանակի, ինարկե, սխալ կլիներ այդչափ ծանրանալ հարցի սուրյեկտիվ կողմի վրա: Սակայն մեզ թը վում ե, վոր որյեկտիվ դժվարությունները, գլխավորապես անտեսական, վոր անողայման մեծ չափով զոյտություն ունելին, և հեղափոխական ու հականեղափոխական ուժերի փոխհարաբերությունը չե, վոր համեմատաբար ավելի վճռական դեր խաղացին փետրվարյան հականեղափոխության հարցում, այլ ավելի շուտ այն հանողամանքը, վոր հեղափոխական ուժերի կտրմակերպման ու ճիշտ գասափորման և հականեղափոխական ուժերի ջլատման, քայլայման ու չեղոքացման զործում մեր անփորձության հետեւանքով չկարողացանք իր ժամանակին հանդիս բերել բավականաչափ վճռականություն ու արվեստ: Թաշնակցությունից մենք ժառանգություն ստացանք անտեսապես միանղամայն քայլայմած, սոված ու մերկ յերկիր:

սաստանից ուղարկված հացը մենշևկիլյան Վրաստանը, չնայած համապատասխան պայմանագրին, բաց չեր թողնում գեղի հայտաստան: Հաղորդակցության միակ ճանապարհը Յերևան—Դիլիջան խճուղին ձյունապատ լինելով՝ անասելի դժվարություններ եր ներկայացնում Կազախում հավաքված բավականաչափ մթերքն ու կտորեղենը Յերևան տեղափոխելու համար: Այս բոլորին պետք է ավելացնել նաև այն, վոր զգացվում եր նաև աշխատող ուժերի սակագություն, և կուսակցական կազմակերպությունների թուլացած վիճակը մայիսյան պարտությունից հետո:

Մրանք եյին այն խոշոր որյեկտիվ դժվարությունները, վորոնք Թաշնակցությունը դավագրորեն ոգտագործելով Յերևանի և Եջմիածնի գավառներում զյուղացիական կուլակության և միջին առևտրական շերտերի հականեղափոխության զլուխ անցավ՝ ոգտագործելով նաև դասակարգային պատերի կորցրած և գաշնակցական արագիցիաներով որն ված տաճկանայ գաղթականական մասսան, վորը փետրրվարյան հականեղափոխության ժամանակ հանդիսանում եր Թաշնակցության հիմնական մարտական ուժը:

Հեղափոխության առաջին շրջանում անտեսական դժվարությունները միշտ անխուսափելի յեն, վորովհետեւ հեղափոխությունը նախ՝ առաջ ե գալիս հենց ժողովրդական մեծ կրիզիսներից, և յերկրորդ՝ պահանջում է մեծ ծախքեր (Խզդերյան), վորից հետո հեղափոխական իշխանությունը չի կարող միանգամից ինչ-վոր կախարդական գավականի հարվածով ամեն ինչ ուղղել: Պարագած հականեղափոխական ուժերն աշխատում են ոգտագործել այդ դժվարություններն ամեն տեսակ միջոցով, ուստի և հեղափոխական իշխանության առաջին ինդիրը միշտ լինում է ու պիտի լինի քաղաքական, կազմակերպչական ու ռազմական ամրացումը: Խնդիրը նրանում չե, վոր Խ. Հայրատանն այդպիսի անտեսական պայմաններում կարողանար յերկար տարիներ զոյտություն ունենալ և նորմալ կերպով

զարգանալ, այլ նրանում, վոր նա կարող եր դիմանալ մինչև խճուղիների բացումը և Վրաստանի խորհրդանայումը, վոր անխուսափելի յեր:

«Մենք չապստամբեցինք, այլ ժողովուրդը, իսկ մենք պետք ե ժողովրդական ապստամբության զլուխն անցնելինք»—զրում են դաշնակցականներն իրենց թերթերում: Հասկանալի յէ, վոր նրանք ուրիշ բան չեն ել կարող գըրել, բայց ցավալի յէ, վոր մեր մեջ ել այդպես մտածող անհատներ յեղել են ու դեռևս կան: Այսպես կարող են մտածել միայն նրանք, վոր մինչև որս չեն կարողացել հաշվի առնել վոչ միայն մայիսի, բանվորների ու գյուղացիների մայիսյան ապստամբության, այլ և փետրվարի, դաշնակցական փետրվարյան կատաղի հականեղափռության դասերը: Այսպիսի սխալները, վոր ծագում են վոչ մարքսիստական ու վոչ լենինյան մոտեցումից սոցիալ-քաղաքական յիրեռութներին և Թաշնակցություն կուսակցության հիմնովին սխալ տեսական և քաղաքական գնահատությունից, քաղաքականապես չափազանց վատանգավոր են մեզ՝ համար: Բայց այստեղ այդ խնդրի վրայերկար կանդ առնելու տեղը չե: Հույս ունենք, վոր մեր կուսակցությունն անուշադիր չի թողնի այս խնդիրները, վոր մեզ համար քաղաքական խոշոր նշանակություն ունեն: Փետրվարի դասերն այնքան խրատական են, վոր չի կարելի իւ չպես հարկն ե չուսումնասիրել և հաշվի չառնել այդ դասերը:

Ընկ. Բաղդասարյանի գիրքն առաջինը հետաքրքրություն կզարթեցնի դեպի փետրվարյան հականեղափռության խնդիրները,

Յ. Ա. Միքայելյան

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Մենք նպատակ ենք զրել այս փոքրիկ զբքուկում տալ 1921 թվի փետրվարի 15-ից մինչև հուլիսի 13-ը Դամարլուի, Դարալազյաղի և Զանգեզուրի ճակատներում տեղի ունեցած ռազմական գործողությունների վերլուծությունը, քննել այն պայմանները, վորոնց մեջ սկսվել և զարգացել են քաղաքացիական կոփմանը Հայաստանում, հայտաբերել այն պատճառները, վորոնց շնորհիվ վերջնական ջախջախման և ինթարկվում պարագաղ կողմերից մինը և ընդհակառակը՝ հաղթանակում Հայաստանի բանվորների և գյուղացիների գործը:

Հայաստանում տեղի ունեցած քաղաղացիական պատերազմը լեռնային պատերազմ է: Այս հանգամանքը բարձրացնում է նրա աեսական արժեքը, անհրաժեշտ գարձնում նրա ուսումնասիրությունը: Ինչպես հայտնի յէ, լեռնային պատերազմների ուսումնասիրությունը թույլ ե դրված առասարակ: Համապատասխան դրականություն այդ ուղղությամբ համարյա թե գործությունն չունի*): Առավել ևս, վոր իմպերիալիստական պատերազմը, իսկ նրանից հետո և քաղաքացիական պատերազմը հըսկայական չափով նոր նյութեր են կուտակել:

Չեռնարկելով այս ուսումնասիրությանը մենք ձգտել ենք մի կողմից մեր լուման մտցնել այդ կուտակված նյութերի մըշակման գործի մեջ, իսկ մյուս կողմից նպաստել մեր հրամագմին, —մանավանդ նրա կրտսեր և միջին կազմին, վորը ուսումնին չտիրապետելու հետևանքով զրկված ե գոյություն ունեցող սակավաթիվ աղբյուրներն ուսումնասիրելու հնարա վորությունից, —ծանոթություն ձեռք բերել լեռնային պատերազմի ընույթի, ելության և նշանակության մասին, յելնելով այն հանգամանքից, վոր մեր Միությունն ունի հարյուրափոր և հաղարափոր կիլոմետր լեռնային ռազմարեմ:

*.) Հայաստանում իսպան չկա, յեթե չհաշվենք Տամբուչի աշխատությունը՝ «Դամարլուի կոփմերի մասին»:

Այս աշխատության տակտիկական արժեքը, մեր կարծիքով՝ կայանում է նրանում, վոր հնարավորություն է տալիս ուսումնասիրել լեռնային պատերազմի ղեկավարության դժվարությունները, գնդացրային ու թնդանոթային կրակի ոգտագործման և մարտական սնման հարցերը և հարձակման, պաշտպանության, հետախուզության, մարտի ղեկավարության կազմակերպումը:

Բազմական գործողությունների վերլուծությանը մենք հավելվածի ձևով կցել ենք հրամանների պատճեններն ու սիեմանները, վորը կոգնի ընթերցողին վոչ միայն կարդալ գրքույրին ու անցնել, այլև անձամբ ուսումնասիրել այդ փաստաթղթերը, հասկանալ կողմերի փորոշումները, նրանց սխալներն ու կրած պարտությունների և հաջողությունների պատճառները:

Մեզ վրա վերցրած ինդիրն, անկասկած, չափազանց պատասխանառու յեւ: Մենք այն կարծիքին չենք, վոր այս գրքույկով լիովին սպառվում է Հայաստանի քաղաքացիական պատերազմի հարուստ պատմության ուսումնասիրությունը, վոր մեր աշխատությունը զերծ է թերություններից: Ալդպիսիք, անշուշտ, կլինեն, և մենք մեծ ուրախությամբ կընդունենք այն լրացումներն ու դիտողությունները, վոր կանեն քաղաքացիական պատերազմին մասնակցած մեր ընկերները, և վորով միայն հնարավոր կլինի հետագալում ստեղծել Հայաստանի քաղաքացիական պատերազմի լրիվ և ամբողջական պատկերը:

Սշխատանքների ընթացքում մենք հանդիպել ենք միշտ դժվարությունների: Հայկական կարմիր բանակի շտաբի արխիվը չկա: Նյութերի մի մասը, բարեբախտարար, ժամանակին մենք ժողովի ենք թե ուսումնական գործողությունների ընթացքում, թե քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո, սկսած 1921 թվից, իսկ մյուս մասն ստիպված ենք լեղել վորոնելու Հայաստանից դուրս՝ Ռուսաստանում (Յարոսլավլ, 20-րդ ուսումնական դիվիզիայի արխիվ): Այս գործում մեծ չափով նպաստել են այն, վոր մենք մասնակցել ենք քաղաքացիական պատերազմին և նրա ղեկավարությանը, ականատես յեղեկ դեպքերին ու յերեսույթներին:

Մեր աշխատանքը մենք լիովին հատուցված կհամարենք, յերբ նա կուսումնասիրվի հայկական կարմիր զորամասերի մարտական դաստիարակության գլուխ կանգնած յերիտասարդ բանվոր-գյուղացի հրամանատարների կողմից և կընթերցվի ու կմաս-

սայականանա մեր անող սերնդի մեջ, հատկապես կոմիերիտմիության մեջ:

Յուրաքանչյուր լերիտասարդ բանվոր ու գյուղացի, յուրաքանչյուր կոմյերիտական պետք և դաստիարակվի մեր պայքարի փակուն տրադիցիաներով, անվի նրա հերոսական անցյալով, իրենից պատրաստի պրոլետարական գործի մարտիկ՝ միշտ պատրաստ պաշտպանելու աշխարհիս առաջին պրոլետարական պարմական անցյալու համար հետազա վոտնձգություններից:

29 մայիսի, 1928 թ.
Դարձաքիլիսա—Ճամբար

Ա. Բաղդասարյան

ԿՈՂՄԵՐԻ ԶԻՆՎԱԾ ՌԻԺԵՐԸ

I. ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Բանվորների և գյուղացիների մասը) Կազմակերպումը լիսյան ապատամբությունը Հայաստանում դաշնակցական խմբապետների կողմից ճնշվելուց հետո այդ բանվորների ու գյուղացիների մի մասը (զըլիսավորապես Հայախի գավառի գյուղացիությունը), դաշնակցական դահիճներից հալածվելու հետևանքով, ստիպված յեղավ անցնել Խորհրդային Ազգային:

Հայաստանի կոմկուսի արտասահմանյան բյուրովի և XII Կարմիր բանակի հեղափոխական ուղմական խորհրդի անմիջական ու ակտիվ զեկավարությամբ և Բազմի պրոլետարիատի մոտ աջակցությամբ Հայաստանից փախած բանվորներից ու գյուղացիներից կազմվում ե առաջին հայկական գունդը՝ վորը Հայաստանի խորհրդայնացումից հետո հայկական Կարմիր բանակի հիմնական կորիզն ե դառնում:

Այդ բանակի տակարկական և կազմակերպչական բարձրագույն միավորությունն եր հանդիսանում հրածգային գունդը։ Յերկու գունդ և հրետանակին բաժնյակը կազմում ելին առանձին հրածգային բրիգադ *):

*.) Բրիգադների գնդերը կազմվել ելին ՌՍՖՀՀ Հաստիքների համաձայն։ Շարայինների և ապաշարայինների տօկոսներն անհամապատասխան թիւնեւու հետեւանքով, Հայաստանի սազմժողովն, իր 1/II-21 թվի Հ. 38. աշխարհական գրությամբ կարգադրում ե գնդերում ունենալ ապաշարայիններ հետեւանքով բանակությամբ—500 ուսողի (եռօք) զեսքում՝ 56 հոգի, մինչև 1000 ուսողի զեսքում՝ 157 հոգի, 1000-ից ավել լինելու գեպքում—172 հոգի։

բ) Համալրումը Հայկական կարմիր բանակը համա-
լրվել է քայլայված դաշնակցական բա-
նակի զորամասերից: Նոր կազմակերպված գնդերի «մար-
տունակությունը» բարձրացնելու և «բայլշեիկացնելու»
համար բանակի հրամանատար Դրոյի^{*)} առաջարկությամբ
և Հայաստանի ռազմժողկոմի 13/XII 20 թ. հրամանի
համաձայն հատուկ հայկական դունդը լուծվում է և սեկա-
կան գումարատակ ուղարկվում նոր կազմակերպված գնդերը:

Լուծված հատուկ գնդի Հայաստանի կոմմունիստական
կուսակցության անդամներն ու թեկնածուները, անկախ
նրանց գրաված պաշտոններից, բանակով 97 հոգի ու-
ղարկվում են բանակի քաղաքական վարչության տնօրի-
նության տակ՝ նոր կազմակերպված գնդերում քաղաքա-
կան պաշտոններ ստանձնելու համար:

Հեղափոխական պայքարի և ապստամբության բովով
անցած այդ միքանի տասնյակ կոմմունիստները հայկական
կարմիր բանակում կազմում են այն քաղաքական միջուկը,
վորն իր ուսերի վրա կրում ե բանակի շինարարության և
քաղաքացիական պատերազմի ամբողջ ծանրությունը,
վորի շուրջը համեմատաբար կարճ ժամանակվա ընթացքում
ստեղծվում են պրոլետարական գործին նվիրված անվեհեր
մարտիկների և խիզախ նահատակների խիտ շարքերը:

Հրամկագմը համալրվում է մասամբ դաշնակցական
բանակի հին սպաներից, վորոնց հանձնարարում ելին զո-
րամասերի կոմիսարները (մնացած սպաներն ուղարկվել
ելին Ռուսաստան, վորպես խորհրդավին իշխանության
թշնամաբար վերաբերվողներ), իսկ մասամբ ելլուծված հայ-
կական գնդի աչքի ընկնող կարմիր-բանակավիններից:

^{*)} Դրոյի (դաշնակների բանակի հրամանատար) սպայության մեջ ունե-
ցած ազգեցիունն ողսագործելու նպատակով և նկատի ունենալով սպայու-
թյան թշնամական վերաբերմունքը հանդեպ խորհրդային իշխանության, Հա-
յաստանի կենտրոնը, յեներով քաղաքական նկատություններից, Դրոյին ժամա-
նակակիրապես թողնում ե նոր կազմակերպվող հայկական կարմիր բանակի
հրամանատարի պաշտոնում:

գ) Սպառագինու Հետեակը զինված եր մեծ մասամբ
բառենը ուստական Յ զծանի հրացաններով,
վոր անցել ելին դաշնակցական բանա-
կին նահանջող ուստական բանակից, մասամբ «Մոսաք»
սիստեմի հրացաններով (40,000 հրացան և 400 գնդացիր,
վոր տրված եր անգլիական կառավարության կողմից
դաշնակցական կառավարությանը պայքարելու համար
բայլշեիզմի և դաշնակների լծի դեմ ապստամբած Հայաս-
տանի բանվորների ու գյուղացիների դեմ), այս Շեքել»
սիստեմի հրացաններով վոր մեծ քանակությամբ կար Նար-
սում, Ալեքսանդրապոլում, և ցարական կառավարությունը
մտադիր եր պատերազմի դեպքում նրանցով զինել թի-
կունքի աշխարհազորին (тыловой аполченец): Կային
«Մակսիմ», «Կոյլա» և «Վիկիկերս» սիստեմի գնդացիր-
ներ: Հեծելազորը, մեծ մասամբ, զինված եր կարճացրած
փողեր ունեցող հրացաններով, մասամբ— հեծելական տի-
պարի հրացաններով:

դ) Կազմը յեզ բա-
նակը Բանակը կազմված եր Յ առանձին
հրաձգային բրիգադներից, մի հեծելա
բրիգադից, 4 հրետանային բաժնեակ-
ներից, 4 ջոկատներից, 2 առանձին գումարտակներից, 2
զրահագնացքից և ուրիշ մասնագիտական գորամասերից:
1921 թվի փետրվարի 1-ին բանակն իր շարքերում հաշվ-
վում եր— 6300 սվին, 44 հրանոթ, 2 զրահագնացք՝ դին-
ված 5 հրանոթներով և 35 գնդացիրներով, 236 գնդացիր-
ներ, 835 թուր և մասնագիտական գրամասեր:

ե) Թանակի վիճակը Բանակի ուսպանական պատրաստու-
թյունը Հայաստանի լեռներում պայ-
քարելու համար բավարար եր: Կարմիր-բանակային, հրա-
մանատարական և քաղաքական կազմի 95 տոկոսը մաս-
նակցել եր իմպերիալիստական, քաղաքացիական և դաշ-
նակների պատերազմներին: Կոմիսարային կազմի քաղա-
քական պատրաստությունը լավ եր, դաշնակցական բա-

նակի նախկին սպաների և կարմիր բանակայինների քաղաքական պատրաստությունը շատ ցածր եր, բացառւալ նախկին հատուկ հայկական (լուծված) գնդի բանակայինները, վորոնց քաղաքական ձակարդակը նշանակալից չափով բարձր եր:

զ) Աւրշուրյունը Հայաստանի զինված բոլոր ուժերը և մասամբ XI կարմիր բանակի՝ Խորհրդային Հայաստանի տերրիտորիայում գտնվող զորամասերը կազմում ելին Հայկական Կարմիր բանակը, վորը յենթարկվում եր ուազմժողկոմ ընկ. Ավիսին։ Բանակի հրամանատար եւ յեղել մինչև 1921 թվի հունվարի 1-ը դաշնակցական բանակի նախկին հրամանատար Թրոն, 1921 թվի հունվարի 1-ից ընկ. Մալկաչանովը, բանակի կոմիսսար եւ յեղել ընկ. Սվերիդովը և բանակի շտաբի պետ՝ ընկ. Պրիտոմանովը։

II. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԸ

ա) Կազմակերպությունը բերը կազմված են յեղել մասամբ խորհրդայնացումից հետո Բաշ-Գյառնիի շրջանը *) ֆախած հականեղափոխական տարրերից, մասամբ ել տաճկահայմառերիստներից, վորոնք ապրում ելին Ալագյազի ձմեռանոցներում և համախմբվել ելին խորհրդային իշխանությունից այդտեղ գտախած խմբապեանների շուրջը։ Տակտիկական և կազմակերպչական բարձագույն միավորությունը ջոկատն եր՝ կազմված միքանի հարլուր սվիններից և թրերից, վորը (ջոկատը) կրում եր սիամիրության հրամանատարությունը վարող խմբապետի առունը։

*) Այդ շրջանի բնակչությունը չնորհիվ դաշնակցական կտորավարության աղքային բաղաքականության հարստություն եր ձևոր բերել հարկան թուրքական շքանների ընակչությունը թալանելու միջոցով և զրա համար ել թշնամության ուրածագությունը կեսի խորհրդային իշխանությունը։

բ) Կազմը լեզ բա-

թյան բանակը կազմված եր.—խմբապետ Մարտիրոսի Բաշգյառնիի ջոկատից, խմբապետ Արամյանի նեցուկի ջոկատից և Յերեանի մառազերիստների ջոկատից, վորի գլուխ եր կանգնած Յերեանի պարետի ոգնական դաշնակ Սարգսյանը։

Բոլոր ջոկատների ընդհանուր քանակն եր՝ 1000 զմբին, 500 թուր և 12 գնդացիր։ Հարձակման գիմելուց այդ կազմերն աճեցին Բաշգյառնիի և Ալագյազի շրջանում անդամական տաճկահայմերից և Յերեան քաղաքի հականեղափոխական տարրերից ու առևտրականներից, վորոնք գժգոհ ելին խորհրդային իշխանության քաղաքականությունից՝ կապված բռնագրավումների կիրառման հետ Խորհրդային իշխանությունն ստիպված եր բռնագրություններ կատարել յելնելով կարմիր բանակին պարեն և խար (Փյուրակ) մատակարարելու անհրաժեշտությունից, վորովնետեւ այդպիսիք հնարավոր չեր ստանալ XI բանակի բազայից, Սեմյոնվակի լեռնանցքի փակման (խորը ձյան) և յերկաթզգծի Ղարաքիլիսաւ-Եջմիածին տեղամասը—Ալեքսանգրապոլում, 1920 թվի դեկտեմբերի 2-ին, դաշնակցական կառավարության և Թյուրքիաի մէջև կնքված խայտառակ խաղաղ դաշնագրի համաձայն—թյուրքերին հանձնելու հետևանքով *):

զ) Համալրումը

Հականեղափոխության ջոկատները համալրված ելին տաճկահայմերի ապագամակարգանցացած տարրերից և խորհրդային իշխանությունից գժգոհ հականեղափոխական այլ տարրերից։ Հրամակմը կազմված եր, գլխավոր առմամբ, իրենց ուազմա-

*) Այդ գաշնագրի հետևանքով դաշնակցական կտօնավարությանը «Սեմյից մինչև Միջնարյա ծովը մեծ ու միասնական Հայաստանի» փոխարեն թողեց նախկին Յերեանյան նախանդի տերիստորիայի կեսը և բացի այդ, Թյուրքիային հանձնեց 3000 հրացան, 60 գնդացիր, 98 ձի, և մարտական հանդերձանքի մեռց շատ իրեր.

կան հատկություններով քիչ թե շատ ջոկվող խմբապետներից, փորոնք մեծ մասամբ աշքի ելին ընկեր դեռևս խաղաղ պարագայում Տաճկահայաստանի տեղը իտորիայում, վորոնց համար պատերազմը, ալան-թալանը հանդիսացել են գոյության միակ աղբյուր: Հրամկազմը մասամբ ել համարվել ե դաշնակցական բանակի նախկին սպաներից, վորոնք խուսափել ելին խորհրդալին իշխանությանը ներկայանալուց կամ թե փախել ճանապարհից, լեռը նրանց, վորպես անբարեհուրա և խորհրդալին իշխանության գեմքնամար տրամադրված տարրի, ուղարկել ելին Խորհրդային Ռուսաստան:

ե) Սպառազինությունը Հետեակը մեծ մասամբ սպառազինությունը զինված եր ոռուսական Յ գծանի հետևակային և հեծելական տիպարի հրացաններով, մասամբ ել «Մոսսե» և «Լեբել» սիստեմի հրացաններով: Դնդացիրները, վոր մեծ մասամբ թագցրել ելին խորհրդայնացման ժամանակ խմբապետները, լեզել են «Մակոխ» և «Վիկիկերս» սիստեմի: Զինվորներից վորոնք, բացի այդ, զինված ելին զանազան սիստեմի առընդանակներով, զիմավորապես մառուցերներով: Հեծյալների սպառազինությունը զիմավորապես կազմված եր մառուցերներից և մասամբ Յ գծանի հրացաններից: Ամբողջ հրամկազմը զինված եր մառուցերներով: Հետեակի և հեծելազորի բոլոր մարտիկները պարտավոր ելին ներկայանալ սեփական մարտական սպառազինությամբ, վորպիսին, աղդայնական պայքարից, թուրքական պատերազմներից և ցարական բանակի զորացրումից հետո, ունելին համարյա բոլոր բնակիչները:

գ) Դաշնակցական Դաշնակցական բանակի բնորոշ բանակի վիճակը հատկությունը նրա դիուրաշարժությունն եր: Բանակի մարտական պատրաստությունը Հայաստանի լեռներում պատերազմ վարելու համար միանգամայն բավարար եր, վորովհետև

ժամանակակից տակտիկայի մեջ վորոշ հետամնացությունը լրացգում եր տեղանքի քաջ ծանոթությամբ, զիպուկ հրաձգությամբ: Համարյա զինվորների ամբողջ կազմը մասնակցել եր իմպերիալիստական (թլուրքական ճակատում) պատերազմին և դաշնակցական պատերազմներին, ուստի և լեռնուտ տեղանքի պայմաններում պալքար վարելու մեծ փորձ ուներ: Խմբապետներից կազմված հրամկազմը սուլթանական կառավարության զեմ մղած պարտիզանական պատերազմների տասնամյակների վորձ ուներ: Նա վորձվել եր և իմպերիալիստական պատերազմի ընթացքում: Սակայն, չնայած բազմամյա վորձին, տեղանքին ծանոթ լինելուն, զենքին տիրելու կարողության—հրաձգության զիպուկության—այդ ջոկատները դաստիարակված լինելով ալան-թալանի վոգով (վոր տվյալ զեպքում նրանց համար խթան եր հանդիսացել), համառություն չունելին և լերկարատև մարտերի չելին զիմանում: Սովորաբար նրանք, կարճատև պարտիզանական գործողություններից հետո, հաջողության զեպքում զբաղվում ելին թալանով, անուշագրության մատնելով սկսած մարտը շարունակելը՝ տեղից շարժված հակառակորդին ջախջախելու նպատակով, իսկ անհաջողության գեպքում՝ անկարգ ու խուճապի մատնված փախչում ելին խալուսակ, վոչնչացնելով խաղաղ բնակչության տնտեսությունները:

ե) Գարշուրքությունը Հականեղափոխության բոլոր զինված վրկության կոմիտեի» զորքերը վորոնք միացված ելին գնդապետ Թարիսանցանի վարչության տակ: «Գերագույն» իշխանությունը հանդիսանում եր «Հայաստանի վրկության կոմիտեն», վորին և լենթարկում եր ապստամբ բանակի հրամանատարը: Սակայն այդ լենթարկում զուտ ձեւական բնույթ ե կրել, վարովիճետև լուրաքանչյուր խըրքապետ իր համար ամոթանք եր համարում լենթարկում վորեւ մեկին և եր շահերի համար ավելի հարուստ վայր

եր վնտում, վորտեղ կարելի լիներ ավելի շատ թալանել և ավելի շատ հարստանալ: Այդ խմբապետների հետ շատ հաճախ ե պատահել, վոր մի վորոշ ուղղությամբ գործելու հրաման ստանալով, այդ զորամասերը գործել են այլ, թալանի համար ավելի ձեռնուու ուղղությամբ:

III. ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ

Խորհրդանացման առաջին որերին զորքերին անհրաժեշտ հանգիստ տալու, նրանց կարգի բերելու և մարտական պատրաստությունը պահպանելով հանդերձ, նրանց ըաղաքականապես պատրաստելու նպատակով, բանակը բաժանվում ե 4 մարտական խմբերի և բանակացին ոժանդակի *):

*) Համաձայն 1921 թ. հունվարի 9-ի № 1 հրամանի, խմբավորումը կատարվել է հետեւալ կերպ:

Աջ խմբակին, յերկրորդ հրաձգային բրիգադի հրամանատարը ընկ. Յերմոլենկոյին, 1-ին և 4-րդ հայկական հրաձեզ գնդերի, 3 մարտկոցների և 1-ին դնդի մի հեծյալ վաշտի կազմով, ընդամենը 6 զումարտակ, 14 հրանոթ, 1 հեծյալ վաշտ, խնդիր եր արված տեղավորվել Գոհադիրմաշ-ոսար-Դաշիթու-Գյոդակու-Բաշաբարան—Շահական—Սշասրակ—Սարդարաբատ—Եջմիածին (Կոյարան) գյուղերի շրջանում, հրաձգային գնդերից մեկական զումարտակ անհալով Թանգիրմաղ, Բաշաբարան—Սարդարաբատ գյուղերում: Բացի այդ, ի բակը պահպեր եր ստացել պահակային պահպանության միջոցներ ձեռք առնել չեղոք գումար սահմանի վրա, հեծյալ վաշտերով դիտել Արաքս գետի ափը մինչև Սարդարապատ կայսրանը ներառյալ:

Զարդ խմբակին, ասածին հրաձգային բրիգադի հրամանատարը ընկ. Միշմանովին, 2-րդ և 3-րդ հայկական հրաձեզ գնդերի և 2 մարտկոցների կազմով, ընդամենը 6 զումարտակ, 8 հրանոթ, հրամայվում եր տեղավորվել Ղամարու-Ամշար-Դավալու շրջանում, 2 զումարտակ առնենալով Սմոբենդ—Ավշար-Սարտյ-Բուլաղի բռնաշղթա—Զանջիբալու գծի վրա միջոցներ ձեռք առնել տահանի պահակային պահպանության համար, դիտել Արաքս գետի ափը Սարգարաբատ կայարանից մինչև Ռենանլու կայարան ներտոյալ, գործակալական հետախուզություն վարել Արալըի Մակավական, Շահթափասի, Նախիջևանի աշխաններում: Վերջին յերկու կետերում կանգնած ելին թյուրքական դարամասերը:

Պարաւագյազի ջոկատը, ընկ. Մելքո-Մուրագյանը, 1-ին սահմանի հրաձգային զումարտակի և 1-ին մարտկոցի կազմով, ընդամենը մեկ զումարտակ, և հրանոթ, հրաման եր սասացել մատով գրաված շրջանում, պահակային պահպանության միջոցներ ձեռք առնել Խորհրդային Հայաստանի սահմանում և

Զորամասերի այդ վերախմբավորությունը, հրամանի համաձայն, պետք ե վերջանար 1921 թվի հունվարի 15-ից վոչ ուշ, և իրագործվեց ճշառությամբ: Այդ վերախմբավորման հետևանքով հայկական կարմիր բանակի ճակատը, 200 վերստ տարածության վրա, վոր գնում և Քեշիշյանդ—Զանջիովու—Ալիմահմեդ—Սրաքս գետի ափը մինչև Սուրամյուլու և հետո գետի հուսիսի մինչև Սարունչի սարը, դարձած եր դեպի մի մարդիկ հանգեցուրի գավառը, վորտեղ իշխանությունը գտնվում եր խմբապետ Նժդեհի ձեռքում: Ուժերի նման խմբավորությունը կրանքի յեր

հարավորություն չուած—քանի պարզ չե քաղաքական կացությունը Զանգեզուրում, վարտեղ զանգում ելին խմբապետ Նժդեհի բանդարը, զենք և հրանութեր զնել ու փոխադրել Զանգեզուրը:

Դուր-Բայազիեի խմբակին, Բեղ-Զուրաբյանին, 1-ին գումարտակի մի լեռնային մարտկոցի հետ միասին՝ մասաւագանությունը կազմում է միջոցներ ձեռնարկել լուսվին հանգիստ ու կարգ պահպանելու համար:

Թանակի ուժանդակին՝ 3-րդ հրամիդ բրիգադի հրամանատարը ընկ. Տիմշենկոյին, 5-րդ և 6-րդ հայկական հրամիդի գնդերի, 1-ին և 2-րդ հեծյալ զնդերի և 5 մարտկոցների, 2 զրահագնացքների կազմով, ընդամենը 6 զումարտակ, 12 հրանոթ, 5 հեծյալ վաշտ, տեղավորվել Յերևան—Քանաքեռ—Ներքին-Սփոսա շրջանում, հեծյալ զնդերն ունենալով Ափսար—Յերևանովկա—Ռոդակուր:

Առանձին խմբակների միջն նշանակումը եր սահմանը վորոշող զիծ (տես սիմեման): Բոլոր շատրներին, զրական մասերին ու բրիգադներին հրամայվում եր հատուկ ուշադրություն զարձնել կազմի վյուրության վրա և ամուր տեխնիկական կազմ սահմանել միմյանց միջև և բանակի շատրի հետ: Կազմը կրկնակիվում է ձիավոր պատվիրակներով (օրդինարել): Թուրքական գյուղերում տեղավորված զորամասերի հրամանատարական և կոմիսարական կազմին հրամայվում և ուղակիր վերաբերկի բնակչությանը, խորհրդային իշխանության պագային քաղաքավանության համեմատ:

Համանյի համաձայն զորամասերը պետք ե մատակարարված լինելին պարենի և հրանյութերի 3 որդա անձեռնմխելի պաշարով, Եջմիածնում և Ղամարդում ունենային հրետանային պահանուներ՝ հրանյութերի 7 որդա անձեռնմխելի պաշարով: Նոր-Բայազետի և Դարալազյաղի խմբակները ճանապարհները զժամանացնելության և տրանզորտի անկանոնության պատճառով, պետք ե մատակարարվելին պարենի, խարի և հրանյութերի 2-ամսյա պաշարով: Դարալազյաղի խմբակներն ապահովված ենին հրետանային հրանյութերով, վորովհետեւ Քեշիշյանդում և Նոր-Բայազետում կային հրանյութերի մեծ պաշար ունեցող հրետանայներ, պաշար, վոր տարվել եր այստեղ գետես գաղնակացական կառուվարության որով Զանգեզուրի չոկատը մատակարարելու համար:

Քաղ պատ, Հայաստանում—3

կանչել բանակին պարեն և խար մատակարարելու անհրաժեշտությունը, վորովինետև յերկաթզիծը գտնվում եր թուրքերի ձեռքում, իսկ Յերևան—Դիլիջան խճուղին, վորը հանդիսանում եր 11-րդ կարմիր բանակի պարենալին բազայից հայկական կարմիր բանակին մատակարարող միակ հաղորդակցության ճանապարհը, խորը ձյան պատճառով փակված եր:

Անպալման, նման խմբավորությունը (գյուղերում գրված լինելը) բացասաբար և անդրադարձել կարգապահության պահպանման և բանակի մարտունակության բարձրացման վրա, յեթե նկատի ունենանք այն հանգամանքը, վոր բանակը դեռևս գտնվում եր իր կազմակերպման շրջանում:

IV. ԹԻԿՈՒՆՔԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Կարմիր հրամանատարությունը հասկանում եր, վոր առանց թիկունքի նախնական պատրաստության ռազմական գործողություններ վարելն անհնար եւ, Խորհրդականցման առաջին իսկ որերից նա դիմեց հիմնական և սիջանկայալ բազաների հիմնադրմանը, պաշարների, հիվանդանոցների տեղափորմանը և սկսեց կարգի բերել գոյություն ունեցող փոխադրական միջոցները: Կապը խմբակների և հրամանատարության միջին հեռագրական եր, հեռախոսային, կրկնակված ձիավոր պատվիրակներով: Կապի միջոցներով բանակն ապահովված եր^{*)}:

Հրամանատարությունը լուրջ ուշադրություն եր դարձրել Յերևան—Դիլիջան խճուղու պահպանության վրա,

^{*)} Յուրաքանչյուր գնդում կարկապի դորախումը, 4 փոխարկեց (КОММУТАТОՐ), յուրաքանչյուրին 2-ական համար, 28 ֆանիկական հեռախոս, 36 կիլոմետր հեռախոսալար և 10 ձիավոր լրասար Բացի այդ բրիգադները կապված ելին բանակի շտաբի հետ հեռագրագծով:

այդ խճուղու վրայով եր տեղի ունենում բանակի մատակարարությունը XI բանակի բազայից^{**}):

Ճակատի ճարտարագիտական պատրաստության նըկատմամբ, չնայած ճարտարագիտական գումարտակի առկայության, հրամանատարությունը վոչ մի միջոց չի ձեռնարկում: Պարենի հիմնական բազան և իրերի պահեստը գտնվում է յին Յերևանում, վորաեղից զորամասերը պարեն ելին ստանում ամեն 5 որը մի անգամ: Այդպիսի կենտրոնացում մտցրել եր պարենի անհրաժեշտ պաշտրի բացակայությունը: Բանակը մատակարարվում եր Հայաստանի պարտողկոմատի միջոցներից՝ բանակի մատակարար մարմինների կողմից: Պարենը, միսը, խարը ձեռք ելին բերվում գնումների և պարենմասնատրման ճանապարհով, վորը հաճախ բնակչության մեջ առաջ եր բերում անբավականություն: Հանդերձանքի պաշար չկար, բանակը վատ եր հագնված: Հատկապես սուր եր զգացվում կոշկի պակասությունը: Հրանյութերով բանակն ապահովված եր, վորովինետև Հայաստանի տերըիսորիայի վրա գտնվող կովկասյան հրետպահեստները մնացել ելին իրենց տեղերում: Հրետանալին հիմնական բազան գտնվում եր Քանաքեռում, վորտեղ կար հրանյութերի և գըլխավորապես արկերի մեծ պաշար լեռնալին հրանոթների համար (մինչեւ 300 համալիր մի հրանոթի համար) և «Լեբել» և «Ռոսսե» սիստեմի հրացանների փամփուշներ, 3-գծանի փամփուշների պակասություն եր զգացվում^{**}):

^{*)} Յերևան—Դիլիջան խճուղին լիազես սարքին պահելու և նորմալ աշխատանք տանելու համար հանգրվաններ (ետապ) են բացված Յելենովկա, Ախտա, Սուխոյ-Ֆոնտան և Ելլառ գետերում: Սպասարկման համար ամեն մի հանգրվանին կից կար հանգրվանային վաշտ, վորը զատկում եր բանակի հրամանատարի տնորինության տակ գտնվող հանգրվանային զումարտակից, և պարենի ու խարի պաշար 300 մարդու և 50 ձիու համար:

^{**) Դաշնակների որով այդ պակասը լրացվում եր լեբելի փամփուշներով, վորոնք հարմարեցվում ելին 3-գծանի հրացանի Բրինակ, Լենինականում կար մի փոքրիկ արհեստանոց, վորտեղ հատուկ հարմարեցրած մնշչների միջոցով լեբելի պարկումները հարմարեցնում ելին 3-գծանի հրացաններին, սակայն, ինարկե, լակականից շատ հեռու ելին մնում:}

Բացի այդ զորամասերն ունելին հրանյութերի տառնորյա պաշար։ Փոխադրական միջոցներով բանակն ապահովված եր բավարար չափով։ յուրաքանչյուր գնդում կար նույնպես ավանակներից կազմված տրանսպորտ։ Բոլոր գնդացիրները բարձած ելին։ Զիաների կազմով հատկապես լավ եր ապահովված հրետանին, փորը համալրված եր անդիմական ջորիներով։ Սանիտարական տեսակետից զորամասերն ավելի պակաս չափով ելին ապահովված, թեպետ և ամեն մի զորամասին կից բժիշկ և տկարանոց կար, այնուամենանիվ դեղորայքի պակասություն եր զգացվում։

Այսպիսով, բանակը հրանյութերի հայթալիթման ռեսակետից ապահովված եր։ Բանակին պարեն և հանդերձանք հայթալիթելը մեծ դժվարություններ եր ներկայացնում։ Դաշնակցական կառավարության ավանտուրիստական քաղաքականությունը, հատկապես յերկրի ներսում գտնվող այլազգիների վերաբերմամբ, յերկիրը հասցրեց տնտեսական կործանման ու վերջնականապես քայլքայեց նրան, և ամբողջ աշխարհից կտրված Հայաստանի խորհրդային կառավարությունը պարեն և հանդերձանք եր հայթում արտակարգ դժվարություններով։ Հատկապետուր եր դրված հազուստեղենի խնդիրը։

Բ. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԸ

Դաշնակցական բանակի հետեւակի և հեծելազորի բոլոր մարտիկները, ինչպես ասվեց վերևում, կրում ելին սեփական զենք ու հանդերձանք, մի բան, վոր ունելին զենքի ընդունակ համարյա բոլոր հաւերը։ Հրանյութերի պաշարներ չկային։ Յուրաքանչյուր հրացանին ընկնում եր 1000 փամփուշտ, գնդացիրին 5000 հատ և մառզերին՝ մոտ 700-800 հատ։ Մարտական զործողությունների պրոցեսում բանակը մարտապաշարով մատակարարվում եր բնակչությունից բանի կերպով հավաքելով այն. այդ

նպատակով նշանակվում ելին հատուկ կոմիսսարներ։ Հայթալիթումը կատարվում եր նաև կարմիր բանակի կորուստների հաշվին, 1921 թվի փետրվարի 16-17-18-ի մարտերում, Յերևանի և Քանաքեռի զինանոցը գրավելու հետեւանքով։ Պարենով և խարով բանակն ապահովված չեր, և այդպիսիք ձեռք ելին բերվում բնակչությունից մասնատրման միջոցով։ Յուրաքանչյուր խմբապետ (ջոկատ) մատակարարվում եր իր տեղավորման վայրի բնակչության հաշվին. բնակչությունը, պարզ ե, դրանից չափազանց անբավական եր բայց մառզերիստների սպառնալիքների տակ ստիպված եր հրաժարվել իր վերջին պաշարներից։ Եյդպիսով ապստամբ բանակը կազմակերպված թիկունք չի ունեցել յեզ իրենից ներկայացրել ե բնակչության հաշվին ապրող հացկատակների մի բանդա։ Բնակչությունը կամագոր կերպով պարեն չեր տալիս։ Նրանից քոնի ժողովում ելին այն, փոր և առաջ եր բերում բողոք, զայրույթ և ատելություն դեպի խմբապետ. թալանչիները։

Վ. ԿՈՂՄԵՐԻ ՊԼԱՆԸ

1921 թվի փետրվարի 15-ին հայկական կարմիր բանակի շատարում ճշգրիտ տեղեկություններ են ստացվում, փոր Բաշգյառնիում գոյություն ունի ապստամբ-դաշնակների շտաբ գնդապետ Թարխանյանի զլիսավորությամբ (փորը մինչ այդ հայկական հեծբրիգադի հրամանատարն եր և փախել եր բրիգադից), այլ և այն մասին, փոր Բաշգյառնի Քերփիչյու շրջանում խմբավորվել են խմբապետներ Մարտիրոսի և Խնկոյի բանդաները՝ թվով 1000 հոգի հետիոտն և ծիավոր։ Իսկ այն մասին, փոր խմբապետ Սմբատի բանդան՝ մոտ 600 հոգի (բացառապես տաճկահայեր) զանվում եր Թաքարլու-Շիրկալա (Աշտարակից 20 կիլոմետր դեպի հյուսիս) գյուղերի շրջանում, փոր խմբապետ Արամեանը մոտ 100 հոգով գտնվում եր Վերին և Ներքին Նեղոլուի շրջանում (Յերևանից 12 կիլոմետր

դեպի հարավ-արևմուտք), այլև Յերևանում գտնվող մասնակիսաների ջոկատը, վորին դեկավարում եր Յերևան քաղաքի պարետի ոգնական գաշնակ Սարգսյանը, —այդ ամենի մասին ինչպես բանակի շտաբում, այնպես ել բրիգադների շտաբներում, չնորհիվ զորական և զործակալական աշխատանքի անբավարար դրված լինելուն, փոք մի տեղեկություն չկար (չնայած վոր գոյություն ուներ բանակի հրամանատարի 9/Լ 21թի № 1 գաղտնի հրամանը, վորով մատնանշվում եր բրիգադների հրամանատարներին անընդհատ հետախուզության անհրաժեշտությունը):

Հայկական Կարմիր Տեղեկություններ ունենալով հաբանակի երամանաւատիք կառակորդի միան Բաշգրառնիի սարի Վեհիոք

Խոնենալով խմբագետներ Սարատի և Արամյանի բանդաների մասին, հայկական Կարմիր բանակի հրամանատար ընկ. Մալկաչանովը փետրվարի 15-ի ժամը 10-ին ընդունում է հետեւյալ վճիռը. — Թողնել՝ բանդան մոտենա Յերևանին, կորել նրան իր բազայից և զեկավար մարմից — շտաբից և վոչնչացնել, վորի համար և հրամայվում է (15 փետրվարի № 55 փոստ-հեռագիրը). —

Հայկական հրաձգային բրիգադի հրամանատար ընկ. Միքիմանովին փետրվարի 15-ի ժամը 14-ին Ղամարլուից վերին-Աղբաշ առաջազրել մի ջոկատ 2-րդ հայկական գնդից 300 սպիների, գնդացիրների և մի լեռնացին մարտկոցի կազմով, 2-րդ հայկական գնդի հրամանատար ընկ. Ֆիշելիչի հրամանատարությամբ: Զոկատին խնդիր եր տըրվում — փետրվարի 16-ի լուսաբացին վճռական հարձակման անցնել Բաշգրառնիի վրա՝ խնդիր ունենալով բանդան շպրտել Յերևանի կողմը, կորել նրան հականեղափոխական վորչ Բաշգրառնիից և վոչնչացնել:

3-րդ հայկական հետեւակային բրիգադի հրամանատար ընկ. Շալոնովին՝ փոչ ուշ քանի փետրվարի 15-ի ժամը 18-ը Յերևանից դեպի Շորբուլաղ (Յերևանից 10 կիլո-

մետր դեպի հարավ-արևմեր) առաջ քաշել մի ջոկատ 6-րդ հայկական գնդի 1 զուժարտակի (գնդի մնացած զուժարտակները փետրվարի 4-ին ուղարկվել ելին Դիլիջան XI Կարմիր բանակի 60-րդ բրիգադի հրամանատարի տնօրինության տակ) և մի լեռնալոյն մարտկոցի կազմով 3 րդ հայկական բրիգադի ուղմկոմ ընկ. Ս. Հովսեպիցիանի հրամանատարությամբ՝ խնդիր ունենալով փետրվարի 16-ի լուսաբացին հարձակման անցնել Բաշգրառնիի վրա՝ վաշնակների Բաշգրառնիի խմբակը վոչնչացնելու նպատակով:

«Ազատամարտ» զրահագնացքին, 60 կարմիր-բանակայիններով, հրամայված եր պահպանել Յերևան-Ռուբենան լուսակացությամբ: Յերևան քաղաքի կարագորի պետ ընկ. Պետրովսկուն խնդիր ե տրված ուժեղացնել քաղաքի և շրջակայիքի պահպանությունը Յերևանի պահակալին գումար փետրակի 2 վաշտերով: Բացի այդ, հրամայված եր 3-րդ հայկական բրիգադի հրամանատարին 5-րդ հայկական գումար ուղարկել Նեկիտինո՝ 20-րդ ուռւսական շիվիգիայի 60-րդ բրիգադի հրամանատարի տրամադրության տակ՝ բրիգադն ուժեղացնելու համար: 178-րդ ուռւսական գնդի մի վաշտով, վորը գտնվում եր Բաշաբարանում, և մի թեթև մարտկոցով պահպանել սահմանը Թյուրքիայի հետ:

Դաշնակցերի երամանատարության մասնաւորության վեհիոք

Թյունն իր գործակալներից*) ճշգրիտ տեղեկություններ ունենալով կարմիր զորամասերի տարատեղության, պատրաստության և Յերևան քաղաքի քաղքենիական մանր բուրժուական տարրերի տրամադրությունների**) մասին, փետրվարի 14-ին ընդունում է հետեւյալ վճիռը. —

*) Ինչպես հետազում պարզեց, գործակալներից մեկն եր և Յերևան քաղաքի պարետի ոգնական գաշնակ Սարգսյանը:

**) Այսպիսու որինակ, ճարտարագիտական գումարտակը, վոր համարված եր դաշնակների, առկտրականների և Յերևանի հականեղափոխական տարրերի զականներից, թշնամաբար եր տրամադրված զեպի խորդային իշխանությունը:

Կարել Յերևան — Դիլիջան խճուղին, վոր հաղորդակցության ճանապարհն ե հանդիսանում հայկական կարմիր քանակի և XI բանակի միջև, ողակել և վոչնչացնել կարմիրների բրիգադները սաս-մաս, հիմնական խնդիր ունենալով չթողնել, վոր կարմիրները նահանջեն Դիլիջան — Ղամարլու: Գրավել Յերևանը փետրվարի 18-ին և գլխովին վոչնչացնել բոլոր «ազգի դավաճաններին» — բայց շեմերին: Այդ առթիվ հրամայված եր.

Բաշգյառնիի խմբակին փետրվարի 16-ի լուսաբացին հարձակման անցնել յերեք զորասյուներով — ա) խըմբապետ Մարտիրոսի աջ զորասյունին, 250 հետևակով և 100 ձիավորով, փետրվարի 15-ի յերեկոյան կենտրոնալով Գլամբեկ — Ճամփուան շրջանում, 16-ի լուսաբացին հարձակվել Զառ — Բաշգյուղ — Թաղագյուղ — Քանաքեռ զյուղերի և Յերևան քաղաքի ուղղությամբ, կարմիրներին XI բանակից կտրելու նպատակով, գրավել Քանաքեռի հրետանային պահեստը և կապ հաստատելով Աշտարակի խմբապետ Մմբատի բանդայի հետ, հյուսիսից և հյուսիս-արևմուտքից միատեղ հարվածով փետրվարի 18-ի առավոտյան գրավել Յերևանը: բ) Խմբապետ Խնկոյի միջին զորասյունով, 300 հետևակով և 100 ձիավորով, փետրվարի 15-ի յերեկոյան կենտրոնանալով Քերպիչլուի շրջանում՝ փետրվարի 16-ի լուսաբացին հարձակվել Շորբուլաղ — Նորք — Յերևան ուղղությամբ, զործելով սերտ կազմած խմբապետ Մարտիրոսի աջ զորասյունի հետ: Տեղակալ (Պօրուչիկ) Նավասարդյանի ձախ զորասյունին, 250 հետևակով և հարյուր ձիավորով կենտրոնանալ Յերանոսի շրջանում և փետրվարի 16-ին, խմբապետ Արամյանի ջոկատի հետ միատեղ հարվածով Աղբաշի շրջանում ջախ-ջախիւ 1-ին հայկական հետևակ բրիգադի զորամասերը, իր հրամանատարության տակ առնելով խմբապետ Արամյանի ջոկատը՝ դուրս գալ Աղհամզալու և կապ հաստատելով խմբապետ Մմբատի ջոկատի հետ, Ղամարլու:

Խճուղով հարձակվել Յերևանի վրա, նպատակ ունենալով կարել կարմիրների նահանջի ճանապարհը դեպի Ղամարլու — Նախիջևան և գրավել Յերևանը փետրվարի 18-ի առավոտյան:

Խմբապետ Սմբատի ջոկատին վեերվարի 16-ի յերեկոյան կենտրոնանալ Աշտարակի շրջանում և փետրվարի 17-ի լուսաբացին յերկու զորասյուներով հարձակման անցնել եջմիածնի և Փարաքարի ուղղությամբ՝ խնդիր ունենալով ողակել և վոչնչացնել կարմիրների 2-րդ բրիգադը Եջմիածնին — Աշտարակ շրջանում և հետագայում շարունակել հարձակումը Յերևանի վրա, զործելով սերտ կապված ձախից՝ Մարտիրոսի ջոկատի հետ և աջից՝ տեղակալ Նավասարդյանի ջոկատի հետ (Հաջողվեց վորոշել զորասյուների կազմը):

Խմբապետ Արամյանի ջոկատին փետրվարի 16-ի լուսաբացին հարձակման անցնել Ուլուխանլու Աղհամզալու կայարանների վրա, թիկունքից հարվածելով կարմիրների Աղբաշի խմբակին՝ աջակցել տեղակալ Նավասարդյանի ջոկատին իրագործել նրա վրա դրած խնդիրը (Ջախջախիւ կարմիրների Աղբաշի խմբակը), վորից հետո յենթարկվել տեղակալ Նավասարդյանին և Ղամարլու խճուղիով հարձակվել Յերևանի վրա:

Յերևանի մասուղերիստների ջոկատին, զորամասերը քաղաքի մատուցներին մոտենալու դեպքում, ապատամբել կարմիրների թիկունքում՝ հիմնական նպատակ ունենալով գրավել կառավարական հիմնարկությունները, ազատել բանտարկված դաշնակներին և բանտարկել բայց ներին:

1. Հետախուզության անբավարար Կարմիր հետախուզության վեռաբեր կարմիրի շնորհիվ բանակի հրամանատար Մալկաչանովը, տեղեկություն ունենալով միայն խմբապետ Մարտիրոսի բանդայի մասին և վոչինչ չիմանալով մյուսների մասին, ստիպված եր վճիռն ընդունել կուրորեն:

2. Բ անակի հրամանատարի պլանը հանգում եր նրան,
վորպեսզի Դամարլուի ջոկատով, գործելով Բաշզյառնիի
հակառակորդի թեում ու թիկունքում, նետել նրան յերե-
վանչան ջոկատի հարվածի տակ և վոչնչացնել։ Յերևանի
ջոկատին, տրված ակտիվ խնդիրը չեր համապատասխանում
բանակի հրամանատարի իդեալին, վորի հետևանքով կար-
սիր գորամասերը պետք ե հակառակորդին Յերևանին ուստ
թողնելու փոխարեն Յերևանից գեն շպրտելին նրան,
Խնդրի իրականացման համար նշված Յերևանի և Դամար-
լուի ջոկատները յերկու անդամ փոքրաթիվ ենին հակա-
ռակորդից, թեպետ իրենց կազմում ունելին 2 մարտկոց
(8 հրանոթ)։ Յերևանի ջոկատի հարձակման ժամանակը
պետք եր նշանակել վաղ, այն հաշվով, վորպեսզի նա գրա-
վի հակառակորդի ուշադրությունը և գլխավոր ուժերը,
դրանով իսկ հսարավորություն տալով Դամարլուի ջոկատին
դուրս գալ հակառակորդի ձախ թիր, կամ թե չե նրա
գլխավոր ուժերի թիկունքը, նպատակ ունենալով Յերևա-
նի ջոկատի հետ միատեղ գործողություններով վոչնչաց-
նել հակառակորդին։

3. Գրի առնելով ջոկատների անելիքները ավելորդ
մանրամասնո թյուններով, անցնելով բրիգադների հրամա-
նատարների կողքից, բանակի հրամանատարությունը
դրանով իսկ ազատել ե վերջիններին իրենց զորամասերի
գործողությունների պատասխանատվությունից, իր վրա
վերցնելով ջոկատների ուազական գործողությունների
անմիջական զեկավարությունը։

1. Գնդսպետ Թարխանյանի պլանը
Դանդում եր նրան վորպեսզի ջո-
կատի գնահատական
կատարի յեռանդուն գործողություն-
ներով վոչնչացնի բրիգադը մասսմաս
և, ողակելով Յերևանը, թուլ չտա կարմիրներին քաշվել
դեպի հյուսիս կամ հարավ (Դիլիջան—Ղամարլու), այսինքն
կարմիրների առանձին խմբերի դեմ տանելիք մասնակի

հաջողությունների հաշվով, գնդապետ Թարխանյանը ձըգ-
տում եր իր բոլոր ուժերը նշանակված մոմենտին կենտ-
րոնացնել յերկրի տնտեսական և քաղաքական կենտրոնին
ուղղված զլխավոր հարվածի կետում։

2. Փոքրաքանակ ջոկատներին արված արտակարգ
ակտիվ խնդիրները կարող ելին անիրազործելի դարձնել
մասնակի խնդիրները, հետևաբար կասկածի տակ կառ-
նելին և վերջնական նպատակին համնելը, ևս առավել,
յերբ առանց խմբապետի հոգեբանությունը հաշվի առնե-
լու՝ խմբապետ Արամյանին տեղակալ Նավասարդանին յեն-
թարկելը պետք ե վոր վերջին հաշվով հասցներ այդ հրա-
մանի չկատարմանը^{*)})։

3. Ենանալին պատերազմի պայմանների գիտենալը,
նրա ոգտագործումը մանր ու շարժունակ ջոկատների
հանդուգն գործողություններում, գերազանց հետախու-
զության և լրտեսության դեպքում, զաշնակցական հրամա-
նատարության համար հիմք են ծառայել հատուկ ուշա-
զրության արժանի վորոշում ընդունել։ Հաշվի առնելով
այն պայմանները, վորոնց մեջ գտնվում եր դաշնակցա-
կան բանակը (ընդհատակյա աշխատանք), գնդապետ
Թարխանյանը միանգամայն ճիշտ ե վորոշել բանակի զո-
րամասերի փոխազդեցության և կառավարման հարցը,
առանձին ջոկատներին խնդիրներ առաջադրելով և ամբողջ
գործողության ընթացքում իր ստորագրալաներին մանրա-
մասն ծանօթացնելով գործողության ամբողջ ծրագրի հետ
(հրահանգի զեկավարություն)։ Սակայն գնդապետ Թար-
խանյանի այդ ըստ ամենայնի հաջող թվացող պլանն ու-
ներ մի «թեթեվ» պակասություն։ Դաշնակցական բանդա-
ների հրամանատարը մոռացության եր տվել այն հանգա-
մանքը, վոր իր ձեռքի տակ գործող մարդկալին զանգված-
ներին ամենից առաջ հետաքրքրում ե ալան-թալանը, և

^{*)} Խնչպես արգեն ասացինք, խմբապետները չեյին «սիրում» յենթարկվել։
Հակապետ նրանք արհամարհում ելին կագրային սպայությունը։

վոչ թե իր հրամանատարության ռազմա-քաղաքական նպատակները:

Դրանումն եր գնդապետ Թարխանյանի և առհասարակ դաշնակցական բանակի արագեղիան:

VI. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ, ԱՃՈՒՄԸ ՅԵՎ ՃՐԳԱՎԸ

ԿՈՂՄԵՐԻ ԴՐՈՒՅՑՈՒՆԸ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ԺԱՄԸ 4-ԻՆ

Կարմիրները.—Փետրվարի 16-ի ժամը 4-ին բոլոր զորամասերը գտնվում եյին նշանց մատնանշված կետերում—Ղամարլուի ջոկատը վ.-Ա.լբաշում, Յերևանի ջոկատը Շորբուլաղում, 5-րդ հայկական գունդը 2 թեթև թնդանոթային մարտկոցներով Քանաքեռում, «Ազատամարտ» զրահագնացքը 60 կարմիր-բանակացիներով Ռուսանու կայարանում և 178-րդ դնդի վաշտը Բաշաբարան-բանաքեռ ճանապարհին:

Հակառակորդը.—Բաշզյառնիի ջոկատը զրավում եր-խմբապետ Մարտիրոսի աջ զորայունը ձաթդուան—Գյամբեղ գյուղերը, խմբապետ Խնկոյի միջին զորայունը՝ Քերփիշու գյուղը, տեղակալ Նսվասարդյանի ձախ զորայունը՝ Բաշզյառի, Յերանոս գյուղերը, խմբապետ Մմբատի ջոկատը՝ Ղարաղալա—Ղարաբիլիս շրջանը և խմբապետ Արամյանի ջոկատը՝ Վերին-Նեջուռն:

Փետրվարի 16-ի ժամը 6-ի մոտերը Մարտական գործուղութեները փետրվարի 16-ին խմբապետ Մարտիրոսի ջոկատը հարձակման անցակ Թաղագյուղ—Քանաքեռ գյուղերի վրա և յետ մղելով 5-րդ հայկական գնդի զորամասերը (վորին խնդիր եր արված դուրս գալ Նիկիտինո Յերևան—Յելենովկա—Դիլիջան—Նիկիտինո խճուղով և անցնել ոռուսական 20-րդ դիվիզ. 60-րդ բրիգադի հրամանատարի տրամադրության տակ) փետրվարի 16-ի յերեկոյան գրավեց Ելառ—Մհուք պաստը՝ կարե-

լով կապը XI բանակի հետ: Խմբապետ Խնկոյի ջոկատը փետրվարի 16-ի լուսաբացին հարձակման անցակ Շորբուլաղի վրա, բայց Յերևանի ջոկատի հակագրոհը նրան յետ չըլլաց Քերփիշու: Ժամը 13-ին Բաշզյառնիից թարմ ոժանդակներ ստանալով (Բաշզյառնիի զենք կրելու ընդունակ արական բնակչությունը փետրվարի 14, 15-ից մասուղերիստների կողմից բոնի զորահավաքի յեւնթարկվում, զինվում և ուղարկվում ճակատ)՝ նորից հարձակման անցակ Շորբուլաղի վրա և հյուսիսից անցակ Յերեվանի ջոկատի ձախ թերեւ: Զոկատը 6-ժամքա մարտից հետո հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ և միշտ շարք անհաջող հակագրուներից հետո ստիպված յեղակ թողնել Շորբուլաղը և ամրանալ 3830 բարձունքի և Բիթլիջա գյուղի գծի վրա: Տեղակալ Նավասարդյանի ջոկատը Յերանոս ասրի 5271 բարձունքի գծի վրա մի վաշտի չափով առաջակալ հանելով, ջոկատի մնացած մասերով, 250 հետեակով և 50 ձիավորով, հարձակման անցակ Բաշզյառնի—Աղբաշ ճանապարհով և ժամը 12-ի մոտերքը գրավեց Զանաթլուն և 3545 բարձունքը: Փետրվարի 16-ի ժամը 13-ին կարմիրների Ղամարլուի ջոկատը հարձակվելով վ.-Ա.լբաշ—Բաշզյառնի ճանապարհով (ջոկատը գուրա եր յեկել 6 ժամ հապաղումով) Գյանիչալ գետի վրա հանկարծակի հարձակման յենթարկվեց 3845 բարձունքից: Հանկարծակի յեկած ջոկատը նետվեց հակագրոհի, բայց հակառակորդի գրաված Գյանիչալի հովտի անառիկ լինելու պատճառով հակագրոհը հաջող արդյունքներ չտվեց: 1-ին հայկական բրիգադի հրամանատարի կարգադրությամբ Ղամարլուի ջոկատի աջ թեր ապահովելու համար առաջ բաշած 3-րդ հայկական գնդի վաշտը, շնորհիվ նրան, վոր հրամկագմը չի կարողանում կողմորոշվել տեղանքում, կորցրնում ե իր կապը Ղամարլուի ջոկատի հետ և ընկելով 5271 բարձունքի հերտանային գնդացրային ուժեղ կրակի տակ, ստիպված ե լինում նահանջել Ն-Աղբաշի ուղղու-

թյամբ, Ղամարլուի ջոկատի աջ թեր թողնելով բաց: Ժամը 19-ի մոտերը հակառակորդի հեծելազորը, ոգտվելով յեռնոտ տեղանքից, անցնում է ջոկատի ձախ թեր աղբյուրի կողմից (վորը գտնվում է Բիթլիջա գյուղից 5 կիլոմետր դեպի հարավարևեմուտք): Ղամարլուի ջոկատը հակառակորդի ուժեղ ճշգման տակ, վախենալով ողակումից, անկանոն կերպով նահանջում է Աղբաշ, հակառակորդին թողնելով 2 լեռնալին թնդանոթ (առանց պանորամի), 5 «Վիկիերս» գնդացիր (վորից 3 առանց փակաղակի), 20 սպանված, 10 վիրավոր և 60 գերի: Այդ ժամանակ խմբապետ Սըմբատի ջոկատը շարժվելով Ղարաղալա - Աշտարակ խճուղով, չհանդիպելով կարմիրների գիմաղբության (վորովհետև 2-րդ բրիգադի շտաբում հակառակորդի մասին վոչ մի տեղեկություն չկար), փետրվարի 16-ի յերեկոյան համում և Փարսի, Կարբի գյուղերին, վորտեղ և մնում ե գիշերելու: Խըբապետ Սըմբանն անբավական լինելով տեղակալ Նավասարդյանի տրամադրության տակ անց նելու մասին բանակի հրամանատար գնդապետ Թարխանյանի հրամանից (Բաշդյառնիում խորհրդակցության ժամանակ խմբապետ Սըմբանը բողոքել եր նրա գեմ, հայտարարելով, վոր իր 20 տարվա մարտական և «հեղափոխական» ստաժով ամրթ ե համարում անցնել յերիտասարդ տեղակալի անորինության տակ), այլ և ձգտում ունենալով, վորքան կարելի յե շուտ մտնել քաղաք և մասնակցել Յերևանի թալանին, գերադասում ե գործել խմբապետ Սմբատի ջոկատի հետ միատեղ և հակառակ բանակի հրամանատարի հրամանին՝ հարձակվել դեպի արևմուտք Ուլուխանլու - Աղհամգալու - Ն. Աղբաշ ուղղությամբ (կարմիրների Ղամարլուի ջոկատի թիկունքում գործելու և Ղամարլուի ջոկատը վոչնչացնելու գործում տեղակալ Նավասարդյանին աջակցելու նպատակով, վորից հետո պետք անցներ Նավասարդյանի անորինության տակ և Ղամարլու - Յերևան խճուղով հարձակվեր Յերևանի

վրա), նա շարունակում է հարձակումը դեպի հյուսիս՝ Արքադ - Եջմիածին ուղղությամբ և յերեկոյան մոտ դրավում է Արքադը: Յերևանի ջոկատի հրամանատար ընկ. Հովսեփիանը հաղորդում է բանակի հրամանատարին այն մասին, վոր որվա ընթացքում անընդհատ մարտերում ջոկատը կորցրել ե իր անձնական կազմի 30 տոկոսը, վոր ճակատում գործում են հակառակորդի գերազանց ուժեր, մոտ 800 հետևակ, 300 ձիավոր, ուստի և հակառակորդի ճշգմանը դիմանալու հնարավորություն չունի և խնդրում է ոգնություն ցուց տալ: Բանակի հրօ մանատարը Շոքուլաղի տեղամասում դրությունը վերականգնելու և Յերևանի ջոկատը ուժեղացնելու համար Յերևանի ջոկատի հրամանատարի տնօրինության տակ և ուղարկում 178-րդ ոռուական գնդի վաշտը, վոր փետրվարի 16-ի ժամը 20-ին յեկել եր Քանաքեռ միանալու համար 5-րդ հայկական գնդին, վորը պետք ե գնար 20-րդ ոռուական գիվիգիալի 60-րդ բրիգադի հրամանատարի տրամադրության տակ: Բանաքեռ հասած 178-րդ ոռուական գնդի վաշտը, փետրվարի 15-ի ժամը 14-ին դուրս գալով Քաշաբարանից՝ անցել եր 60 կիլոմետրը տարածություն և սաստիկ հյուծվել եր:

Հստ յերեսութին բանակի շտարը լիովին պարզ պատկերացում չուներ ճակատի դրության մասին: Աղլապես ինչու յեր Յերևանի ջոկատին նեցուկ ուղարկում 178-րդ գնդի միայն մի վաշտը, այն ել 55 - 60 կիլոմետր որագնացից հետո հյուծված, հետևաբար պակաս մարտունակ զորամաս, այն ժամանակ, յերբ հակառակորդի ուժը յերեկոյան դեմ տեղաժամասում հաշվում եր մինչև 800 հետևակ և 300 ձիավոր, վորոնք ամրացել ելին 3839 բարձունքի վրա (Յերևանից 6 կիլոմետրի վրա): Մինչդեռ բանակի հրամանատարի տրամադրության տակ կարին թարմ զորամասեր - 3-րդ հայկական գունդը, հանգրվանային գումարտակը, Յերևանի պահակային գումարտակի 3 վաշտերը (թեպետ զինված չելին, բայց սպառազեն պատրաստի կար),

Հայոստանի Արտակարգ Հանձնաժողովին կից ջոկատը՝ կոմմունիստական ջոկատը և անկուսակցական կարմիք-բանակային կոնֆերանսի պատգամավորներից նոր կազմակերպված ջոկատը:

// Փետրվարի 16-ի ժամը 17-ի մոտերը խմբապետ Մարտիրոսի աջ զորացուելը գրավում է Ելլառ պոստը կտրելով կապը XI բանակի հետ։ Հաշվի առնելով կապի կարելությունը՝ հրամանատարությունը խնդիր է դնում 2-րդ հայկական բրիգադին, քանի վերջինիս տեղամասում բացակայում եր հակառակորդը, — վորովհետև փետրվարի 11-ի ժամը 10-ին 2-րդ բրիգադի հրամանատարը հեռախոսով անձնական խոսակցության ժամանակ հայտնել եր, թե բրիգադի տեղամասում հակառակորդ չկա, — Աշտարակ-Ոշական շրջանից փետրվարի 15-ի ժամը 14-ի մոտերը 1-ին հայկական գունդը Յեղվարդ, Ելլառ ճանապարհով առաջ քաշել դեպի Քանաքեռ, խնդիր ունենալով Ելլառի շրջանում հարգածել հակառակորդի աջ թեր, մաքրել այդ շրջանը հակառակորդից, վորը հուսիս-արենքից հարձակվում է Յերևանի վրա, դրանից հետո փոխարինել 5-րդ հայկական գնդին, վորին խնդիր է տրված մեկնել Նիկիտինո 60-րդ բրիգադի տրամադրության տակ, ճանապարհին Յերևան - Դիլիջան խճուղին մաքրելով և ազատելով հակառակորդի բանդաներից։ Այդ որը հրամանատարության կողմից միջոցներ են ձեռք առնվում միլիցիային, Համ Կ(Բ.) և ԼԿՅԵՄ անդամներին և թեկնածուներին զինելու համար։ Կարմիք-բանակալիների և հրամկազմի ուղմաքաղաքան գպրոցից և անկուսակցական կոնֆերանսի պատգամավորներից ջոկատ է կազմակերպվում (այդ պահուն Յերևանում տեղի ուներ կ. բանակալինների անկուսակցական կոնֆերանս) բրիգադինախուկին հրամանատար Յերմոլենկովի հրամանատարությամբ։ Հաշվի առնելով հակատի գրության լրջությունը՝ հրամանատարության կողմից կարգադրվում է 178-րդ ոուսական գնդի հրամանա-

տարին — վոր գտնվում եր Շահթախտի շրջանում — անժիշտակես յերկաթուղով մեկնել Յերևան։ Ալդ նպատակով «Ազատամարտ» զրահագնացքն ուղարկվում է Շահթախտի կայարանը։ Բացի այդ հրամանատարությունը զինաթափում է ճարտարագիտական անհուսալի գորամասերը և քաղաքում գտնվող յերկու մխոցալին հրանոթները հարմարեցվում են կոնդը և Նորքը գնդակոծելու համար։ Փետրվարի 16-ի լուս 17-ի գիշերն անցնում է խաղաղ։ Գրնդակապետ Թարխանյանը բանակի հրամանատամրից խլելով նախաձեռնությունը՝ պատրաստվում է հաջորդ որվա իր հետագա յելութին։ Բանակի հրամանատար Մալկաչանովը, վորը գեռ լիովին չեր կողմորոշվել պարագայում, ուժինորեն կազմում եր նոր զորամասեր հակառակորդին դիմադրություն ցուց տալու համար։

Փետրվարի 17-ի առավոտյան Մարտական գործողությունները Փետրվարի 17-ին

178-րդ ոուսական գնդի մի վաշտով ուժեղացրած Յերևանի ջոկատը գրավում եր Շորբուլաղից 4 վերստ գեղի արեւմուտք գտնվող բարձունքները։ 5-րդ հայկական գունդը լեռնային հրանոթներով և գնդացիքներով զինամապրանքատար ավտոմոբիլ ունենալով Արամուս-Ելլառ-Պիշակիս գյուղերի շրջանում հետախուզություն է կատարում։ Փետրվարի 17-ին լուսը բացվելուն պես հակառակորդի Բաշզյանիի խմբակը հարձակման անցավ, բայց, չնայած ուժեղ մարտերին, վորոնք միքանի անդամ վերածվեցին ձեռնամարտի, հաջողություն չունեցավ։ Ժամը 13-ին Յերևանի ջոկատը հարձակման անցավ Շորբուլաղի վրա և յերեքժամկե համառ մարտից հետո, վորը (մարտը) 3 անգամ փոխվեց ձեռնամարտի, տիրեց Շորբուլաղ և Բիթլիջա զուղերին։ Ժամը 17-ի մոտերը Աշտարակ-Ոշականի շրջանից Քանաքեռ ժամանած 1-ին հայկական գունդը փոխարինեց 5-րդ հայկական գնդին, վորը բանակի հրամանատարի հրամանի համաձայն հորիցալին մարտկոցի

Հ հրանոթով պետք ե մաներ Յերևան՝ բաղաքը Եջմիածնի կողմից, պաշտպանելու համար, փորովինետե փետրվարի 17-ի առավոտից կապը Հրդի հայկական բրիգադի հետ կարգել եր:

Հ-րդ բրիգադի ճակատում հակառակորդը փետրվարի 17-ի լուսաբացին հարձակման ե անցնում Յ զորացուներով (բանակի հրամանատար Թարխանյանի հրամանի համաձայն՝ յերկու զորացունով). աշ զորացունով, խմբապետ Մուշեղի հրամանատարությամբ՝ Եջմիածնի վրա, միջին զորացունով, խմբապետ Մերատի հրամանատարությամբ՝ Փարաքարի վրա և ձախով, Հմայակի հրամանատարությամբ, 150 թրի կազմով Աշտարակ Յերևան խճուղով, նպատակ ունենալով վոչնչացնել Հ-րդ բրիգադը և զորացունի զորամասերի կողմից Փարաքար գյուղը զրավելուց հետո շարունակել հարձակումը Յերևանի վրա և փետրվարի 17-ի յերեկոյան գրավել Դալմի այգիները, վորպես յելակետ փետրվարի 18-ի լուսաբացին Յերևանը գրոհելու համար. Հակառակորդի զորացուները Հ-րդ հայկական բրիգադի զորամասերին անակնկալի բերելով համարյա առանց առանձին զիմագրության զինաթափում են 4-րդ հայկական գունդը, գրավում բրիգադի շտաբը հրամանատարի, զինկոմի և 8 թեթև թնդանոթային մարտկոցների հետ միասին, վոր խճուղով ընթանում ելին գեպի Յերևան, քաղաքի կարագորն ուժեղացնելու համար:

Միքանի ընկերներ և հատկապես հրամանատարությունը տրամադրի են բրիգադի կործանման պատճառը բացատրել 4-րդ հայկական գնդի զինաթափումով. այլ և շտաբի գերգելը մեկնաբանել բացառապես բրիգադի զորամասերի կողմից պալքարելու տրամադրի ըլինելով, կարմիր-բանակայինների գեպի խորհրդային իշխանությունը տածած անբավականությամբ և գեպի զաշնակները ցույց տված համակիր վերաբերմունքով: Վճռականապես ժրխ-տելով այդ մեկնությունը՝ մենք տրամադրի ենք Հ-րդ հայ-

կական բրիգադի կործանման միակ պատճառը համարել, բացառապես, բրիգադի հրամանատարության կողմից ղեկավարության բացակայությունը. հրամանատարությունը միշտցներ չի ձեռնարկել հակառակորդի Աշտարակի խմբակի կողմից ապահովելու համար և բանակի շտաբ ուղարկած իր հաղորդագրությունների մեջ անտարբեր ե վերաբերվել գեղքերին: Այդ կարծիքը հաստատվում է այն փաստով, վոր 4-րդ հայկական գնդի գումարատակը, վորը փետրվարի 17-ին առանց մի կրակոցի զենքը ցած և գնում, ինչպես կտեսնենք մենք հետագայի նկարագրության ժամանակ, մարտի 17-ի ժամը 20-ին, հրամկազմի գլխավորությամբ, ամբողջական սպառագինությամբ նորից անցնում ե մեր կողմը, և հաջորդ որը, մանելով Հ-րդ հայկական գնդի շարքերը, հերոսաբար պալքարում և Կարմիր բանակի շարքերում զաշնակների գեմ մինչև որանց վերջնական լիկվիդացիան:

Փետրվարի 17-ի ժամը 19-ին Եջմիածնի և Աշտարակի շրջաններն արգեն գտնվում ենին խմբապետ Մերատի խմբակի ձեռքում: Մերատի խմբակը Յերևան-Եջմիածնին խըճուղով առաջ շարժվելով գեպի արկելք, ժամը 23-ի մոտերը կենարոնանում և Դալմայի այգիների արևմտյան ծալքում, հեծելազորն առաջ քաշելով Զանգու գեաի մոտ կամուրջը գրավելու նպատակով և դրանով իսկ անմիջական վտանգի տակ դնում Յերևանը: Յերկորյա մարտերում հոգնած մեր զորամասերը շարունակում ենին զիմանալ հակառակորդի ճնշմանը: Բանակի հրամանատարությունը ժամը 13-ից հետո արդեն վոչ մի տեղեկություն չունի Քանաքեռ-Եղան վրձանում զործող մեր զորամասերից: 1. ին հայկական գնդին նեցուկ ուղարկած ընկ. Յերսոլենկոյի ջոկատը գեռ Քանաքեռ չհասած հանկարծակի ողակվում ե և, չնայած ջոկատի հերոսական զործողություններին, վորը ողակված վիճակում հերոսաբար 4 ժամ մարտնչում ե համարյա Յ անդամ իրեն գերազանցող հակառակորդի

դեմ և մեծ զոհեր տալուց հետո, յերբ ընդամենն իր շարքերում հաջուռ եր միքանի տասնյակ մարդ, ստիպված է լինում ժամը 18-ին հանձնվել հակառակորդին, մարտի դաշտում թողնելով բազմաթիվ սպանվածներ ու վիրավորներ (դրանց թվում և ջոկատի պետ ընկ. Յերմոլենկոն) և «Մակումի» 6 զնդացիր: Տեղի ունեցող դեպքերի մասին բանակի հրամանատարությանը վոչինչ հայտնի չելինում, և փաստորեն նա զորքերին չեր կառավարում: Այդ յերեսում ե նրանից, վոր տեղեկություններ չունենալով Քանաքեռի բախտի մասին, բանակի հրամանատարությունը 1 ին հայկական գնդի հրամանատարի տրամադրության տակ (Ելլառ գյուղն) և ուղարկում Յերմոլենկոյի ջոկատը, չզգուշացնելով, թե շտաբին հայտնի չի 1-ին հայկական գնդի վիճակը: Տեղեկություններ չստանալով նույնպես ժամը 13-ին ուղարկած ընկ. Յերմոլենկոյի ջոկատի մասին, բանակի հրամանատարը ժամը 21-ին նորից Քանաքեռ և ուղարկում ընկ. Յեկաղյանի մարտկոցը, վորը գեռ քաղաքից 500 մատր չհեռացած ողակում և 40—50 հոգուց բաղկացած մատուցերիստների ջոկատի կողմից և ստիպված թողնում ե հրանոթներից 2-ը, իսկ մյուս յերկուսով վերադառնում յետ՝ Յերևան: Մարտկոցի հրամանատարից զեկուցագիր ստանալով՝ բանակի հրամանատարը հրամատում ե Յերեանի գումարտակի հրամանատար ընկ. Բաղդասարյանին մեկնել Քանաքեռ և պարզել ճակատի դրությունը: Ճակատից վերադառնալով՝ ընկ. Բաղդասարյանը զեկուցում ե, թե 1-ին հայկական գունդը դեռևս առավտան ժամը 12-ից ողակվել ե հակառակորդի կողմից, և նրա հետագա բախտի մասին վոչինչ հայտնի չի: Ընկ. Յերմոլենկոյի ջոկատը ջախջախված ե: Հակառակորդն ողակել ե քաղաքը հյուսիսից և արևմուտքից, և մարտերը տեղի ին ունենում կոնդ արգարձանի և Յերեան Եջմիածին խճուղու վրա ընկնող Զանգու գետի կամուրջին տիրելու համար: Յերեանյան ջոկատի տեղամասում հակա-

ռակորդը ձգտում ե գրավել Շորբուզաղ գյուղը: Դամարդուի ջոկատի ճակատում հակառակորդը հաջողություն չի ունեցել և, չնայած համառ մարտերին, կասեցվել ե Աղբաշ գյուղի վերին ծալրում և նրա հյուսիսարևմտյան կողմն ընկած բարձունքներում: Լսելով ընկ. Բաղդասարյանի զեկուցումը՝ հրամանատարությունը գրությունը համարում ե որ հասական և գտնում ե, վոր յեթե վետրվարի 18-ի ժամը 3-ին թարմ ուժեր չհասնեն (ուղարկան 178-րդ գունդը շարժվում եր Շահթախտի—Ղամարլումիջև ընկնող ճանապարհով), ստիպված պետք ե Յերևանը թողնել հակառակորդին:

**Փետրվարի 17-ի լույս 18-ի գի-
Մարտական գործու-
թարքութեաները փե-
տեղամասից: Հակառակորդը նոր-
ության 18-ին շի տեղամասում,
քի և կոնդի միջև ընկնող տեղամասում,
ոգտվելով խավարից, սկսում ե առանձին խմբերով ծա-
ծուկ թափանցել քաղաք և, կազ հաստատելով տեղական
մառզերիստների հետ՝ գրավում ե ինչպես քաղաքի ծալ-
րամասում տակտիկական նշանակություն ունեցող աները,
նույնպես և պետական ու ուղամական կարևոր նշանակու-
թյուն ունեցող հիմնարկություններին կից գտնվող միքանի
աներ: Դաշնակցական բանակի հրամանատար գնդապետ
Թարխանյանը վճռում ե չգրավել Յերեանը, յեթե անգամ
պահանջվի, կարմիրների ուշագրությունը Յերեանը պաշտ-
պանելու անհրաժեշտության վրա կենարոնացնելու նպատա-
կով, միքանի կիլոմետր յետ քաշվել, դրանով իսկ թույլ
չտալով կարմիրներին խուսափել հարվածից և զուրս գալ
շրջապատումից: Գնդապետ Թարխանյանը յերեկոյան ու-
ժեղացնում ե տեղակալ Նավասարդյանի ջոկատը 100 հե-
տևակով և 50 ծիավորով, ջոկատին խնդիր տալով Աղբաշի
շրջանում վոչնչացնել կարմիրներին: Մական խմբապետ-
ների ձգտումը գեպի Յերեան և թալանի ծարավել ստի-
պում ե, հակառակ գնդապետ Թարխանյանի հրամանին,**

զիշերն իսկ անցնել հարձակման, Փետրվարի 18-ի ժամը 2-ին հակառակորդը, գերազանց ուժերով ճնշելով կարսիրներին, ընդուղ սոտենում ե Յերևանին ու Նորքին, Ժամը 4-ին կարսիրներն սկսում են նահանջը:

Յերևանի ջոկատը յերկու թիերից ել թիկնանցում ստանալով՝ նահանջում ե Յերևան կայարանի ուղղությամբ: 1-ին հայկական գունդը, փետրվարի 17-ի ժամը 17-ից շրջապատված Քանաքեռում և հնարավորություն չունենալով շարունակել դիմադրությունը, հանձնվում ե կարճատև մարտից հետո և գերփում: 5-րդ հայկական գունդը, վոր գրավում եր կոնդ արգարձանից մինչև Զանգի գետն ընկնող ճակատը, տեղեկանալով, վոր Յերևանի ջոկատը նահանջում ե գեպի Յերևան կայարանը, և վախենալով իր աջ թից, նահանջում ե քաղաքի կենտրոնը: Յերևանի գումարտակի առաջին վաշտի հրամանատարը, տեղեկանով 5-րդ հայկական գնդի նահանջի մասին, կես վաշտով գրափում ե նրա տեղամասը: Ստեղծված դրությունն ստիպում ե հրամանատարությանը, շտաբին, Յերևանի կայազորի գորական հիմնարկություններին, կուսակցության կենտրոնին և կառավարությանը տեղափոխվել Յերևան կայարանը: Քաղաքում մարտի անմիջական ղեկավարության համար թողնվում են ընկեր Շալոնովը և Բաղդասարիանը: Առավտյան ժամը 5-ին, Յերևանի գումարտակի վաշտի ուժեղացման համար, առաջ են քաշփում 3 գնդացիրներ: «Ազատամարտ» զրահագնացքի հրամանատարի և մեքենագետի սբուտաժի շնորհիվ, վորոնք դաշնակների գործակալներ լինելով՝ դիմամբ փետրվարի 17-ի, ժամը 19-ից գնացքը սղանել են Ղամարլու կայարանում, պատճառաբանելով այդ վառելիքի և ջրի բացակայությամբ, 178-րդ գունդը ժամանակին Յերևան չի հասնում: Զրահագնացքի կարմիր-բանակայիններն իմանալով հրամանատարի և մեքենագետի հականեղափոխական մատղրությունների մասին, կալանում են նրանց, փոխարինելով նրանց,

գունդը հասցնում են Յերևան փետրվարի 18-ի ժամը 9-ի մոտերը: Յերևան հասնելուն պես գունդը խնդիր և ստանում շարժվել նորքի ուղղությամբ՝ Յերևանի ջոկատի հետ միատեղ գործողություններով հակառակորդին հյուսիս շարժուելու նպատակով: Գունդը ժամը 10-ին հասնում ե նորք: Հակառակորդը Քանաքեռի և Եջմիածնի կողմից սկսում ե թափանցել քաղաքի կենտրոնը՝ սպառնալով 178-րդ գնդին թիկունքից: Գնդի հրամանատարը հաշվի առնելով ստեղծված դրությունն ուղղելու անհնարինելը և թիկունքից գնդին սպառնացող վտանգը՝ կարգով նահանջում ե գեպի Յերևան կայարանը: Յերևանի գումարտակի մի վաշտով ուժեղացած 5-րդ գունդը, թիկնանցում ստանալով բերդի կողմից, գերի յե ընկնում: Ընկ. Ազգատոլովի կոմմունիստական ջոկատը, գնդի հանձնվելուց հետո, սկսում ե մարտով յետ քաշվել գեպի կայարանը: Նահանջի ժամանակ հակառակորդի կողմից շրջապատված ջոկատի մի մասն անհավասար մարտից հետո հրամանատարի հետ միասին ստիպված ե լինում հանձնվել: Սկսվում ե պայքարը Յերևանի փողոցներում: Կայազորավին պահակում գտնվող Յերևանի պահակային գումարտակի 2 վաշտերը հակառակորդին ուժեղ դիմադրություն են ցույց տալիս: Առանձին պահակներ, շրջափակված ողակով, 4 ժամ անընդհատ կասեցնում են հակառակորդին, քանիցս գրոհի անցնելով: Ֆինժողկոմատի և կուսակցության կենտրոնի շենքերին կից պահակները (մեկական դասակ) գրոհի անցնելով՝ քաղաքի կենտրոնից դեպի արևելուտք են շարժում մառզերիստների ջոկատին, վորոնք ձգտում ելին շրջապատել 178-րդ գունդը: 178-րդ ուռսական գնդի, կոմմունիստական ջոկատի և Յերևանի ջոկատի նահանջող զորամասերը, բերդի կողմից շրջապատվելով, սվինամարտի յեն նետում՝ շրջապատումից դուրս գալու նպատակով: Յերևանի փողոցներում 3-ժամյա մարտ սղելուց, մի շարք գրոհներից և ձեռնամարտերից հետո հաջողվում ե ձեղքել ձա-

կատը և դուրս գալ Յերեան կայարանը։ Դաշնակցական բանդան դեն շպրտելով կարմիրներին և մտնելով Յերեան քաղաքը՝ անցնում է թալանի և քաղաքում մնացած կոմունիստների վորսին։ Բացակայում է վորեւե հրամանառարություն, վորովհետեւ խմբապետներն իրենք առաջինը դիմեցին պահեստների և հիմնարկությունների կողոպուտին։ Գնդապետ Թարխանյանը, վոր յեռանդով դիմել եր Յերեանի ռազմական գործողությունների կիրառման և ձգտում եր իրականացնել իր պլանը («ազգի դավաճան» բայլշեկիներին ամբողջովին շրջապատել և վոչնչացնել), հրաժարվում է նահանջող, բայց չջախջախված հակառակորդին յեռանդուն կերպով հետապնդելուց։ Անհրաժեշտ ըոպելին նա բաց ե թողնում կառավարման սանձերը և գրանով իսկ հնարավորություն տալիս կարմիրներին նահանջել ամբողջական կարգով և պատրաստվել հետագա գործողություններին։ Գնդապետ Թարխանյանն իր թալանով զբաղված բանդայի որինակով, փետրվարի 18-ի լույս 19-ի գիշերը, մոռացության տալով վոչ միայն կարմիրներին, այլև իր ծրագիրն ու պլանները, հարսանիք և անում և գրանով ցուց տալիս, վոր ինքն ել խմբապետ և, վորոնց համար անձնական շահերը վեր են ամեն ինչից։ Զափազանց բնորոշ ե, վոր հարսանիքին մասնակցել են նաև «Հայաստանի փրկության կոմիտեի» անդամները։

Այդ ժամանակ կարմիր հրամանատարությունը վերցընելով ամբողջ շարժական կազմը (60 վագոն և 3 շոգեմեքենա), գրանց թվում և 11 վագոն բեռնավորված պարենով ու հրանյութերով, այլև բառնալով բոլոր հիմնարկություններն ու կայարանում յեղած պարենի, հրանյութերի պաշարները, 178-րդ ոռուսական գնդից, կոմմունիստական ջոկատի մնացորդներից, Յերեանի գումարակից, «Ազատամարտ» և «Մուսայելյան» զրահագնացքներից, 2 թերի թնդանոթափն և 2 հոբիցիալին մարտկոցներից կազմված ջոկատին կարգադրում ե զրահագնացքների և 178-րդ

ոռուսական գնդի պաշտպանության տակ յետ քաշվել Ղամարլու 1-ին հայկական հրաձիգ բրիգադին միանալու նպատակով։ Փետրվարի 18-ի ժամը 18-ին ջոկատը, չհանգիպելով Յերեանի գրավումով հանգստացած և թալանով զբաղված հակառակորդի դիմադրության, հասնում է Ղամարլու և տեղափորվում բնակարաններում, հակառակորդի կողմը պահակային պահպանություն ուղարկելով։ Զոկատը ժամանելուց հետո հրամանատարությունը կուսակցության կենտրոնի և կառավարության հետ միասին յեռանդուն միջոցներ և ձեռք առնում գորամասերը կարգի բերելու համար։ Ժամը 22-ին բանակի հրամանատարը մի հրաման և արձակում, վորի համաձայն Համ. Կ. (Ք) Կ. և ԱկնեՄ բոլոր անդամներն ու թեկնածուները կազմում են կոմմունիստական ջոկատ, վորի գլուխ և կանգնում ընկ. Յանուշեսկին։ Յերեանի պահակային գումարատակի մնացորդները, տեղական միլիցիան, խորհրդային ծառայողները և բայլշեկիներին համակրող գլուղացիները լրացնում եյին 3-րդ հայկական գունդը, վորի հրամանատարությունը հանձնարարում է ընկ. Բաղդասարյանին։ Այդ ժամանակ հակառակորդը Աղբաշի ջոկատի աեղամասում, Բաշգյառնիից ոժանդակ ստանալով, հարձակման և անցնում Աղբաշի վրա, բայց 3-րդ գնդի մի գումարտակով ուժեղացրած Աղբաշի ջոկատի հակահարձակումով յետ և շպրտվում հին դիրքերը։

Յերեանը թալանելուց և քաղաքում Մարտական գործությունները կոմմունիստների լնտանիքների հետ հաշիվները մաքրելուց հետո զնդապետ Թարխանյանն «իր գործերն» ու զորամասերը կարգի յե բերում և հրաման արձակում փետրվարի 19-ի լուսաբացին հորձակվել Աղբաշի վրա՝ նըմատակ ունենալով կարել Յերեան-Նախիջևան յերկաթուղագիծը և շրջապատել նահանջող զորամասերը։ Փետրվարի 19-ին խմբապետ Մարտիրոսի ջոկատը 3 մարտկոցի

կրուկի աշակցությամբ հարձակվում եւ վերին և ներքին Աղբաշի վրա, բայց 2-րդ հայկական գնդի և 3-րդ հայկական գնդի գումարտակի հականարձակմամբ յետ եւ շպըրտվում: Պարզ եր, վոր Համարլու — Աղբաշ շրջանում մնալը տակտիկական նկատառությունով ձեռնտու չեր կարմիր ների համար: Բացի այդ պարզվել եր, վոր հակառակորդը յեռներով շարժվում եր դեպի Շիրազու կայարանը բանակը շրջապատելու նպատակով: Յեվ նկատի առնելով այն հանգամանքը, վոր կարմիրների թիկունքում գտնվում եր Բեռք-Վեդիի բնական անառիկ ամրոցը, բանակի հրամանատարը փորոշում եւ թողնել Համարլուն և ամրանալ պաշտպանության կազմակերպման համար տակտիկական տեսակետից ափելի ձեռնտու գծի վրա:

Պարագան և տեղանքը պաշտպանության պայմանների տեսակետից բազմակողմանիորեն ուսումնասիրելուց հետո բանակի հրամանատարը գիտրվարի 19-ի ժամը 23-ին գնում եւ յետ քաշվել Խորվիրապ — Բեռք-Վեդի — Կարաբեկլասո գիծը, վորի առթիվ հրամայում եւ աջ ջոկատին, հայկական գնդի (2 գումարտակ) և 4-րդ լեռնալին մարտկոցի (2 հրանոթ) կազմով, փետրվարի 19-ին, սութնենկնելուն պես, պահպանության ամենամանրամասն միջոցներ ձեռք առնելով Ն.-Աղբաշ — Յենդիջա — Բեռք-Վեդի ճիթի ճանապարհով սկսել նահանջը և փետրվարի 20-ին լուսաբացից վոչ ուշ դիրք գրավել Կարաբեկլասո — Տաշլու — Բեռք-Վեդի գյուղերի գծի վրա, նոր գրաված դիրքերում պահպանին պահպանության միջոցներ ձեռք առնել և հետախուզություն վարելով Վեդի-շալ գետի կիրճով դեպի Կարաբեկլասո, Դաղնաս, Դոխկուզ, Բողբուրուն սարք:

Զախ գորասլունին՝ 178-րդ ոուսական գնդի, 3-րդ հայկական գնդի, կոմմունիստական ջոկատի, 1-ին թեթե, 2-րդ թեթե և 2-րդ հոբիցիալին մարտկոցի կազմով, ընդամենը 9 գումարտակ և 9 հրանոթ, աջ գորասլունի հետմիատեղ սկսել նահանջը Համարլու — Ավշար խճուղով և

փետրվարի 20-ի լուսաբացին Յ-րդ հալկական գնդով և 1-ին թեթե մարտկոցով զիրք գրավել Յենդիջա ներառյալ բարձունք 425,9 գծի վրա, հետախուզություն վարել Յուրավայում և Արաքսի ափի սոտ՝ դեպի հրուսիս-արևմուտք: Կոմմունիստական ջոկատին, 2-րդ թեթե մարտկոցի մի գասակի հետ, գրավել Խալիսա գյուղը, խնդիր ունենալով պահպանել բանակի ձախ թեր: 178-րդ ոուսական գունդը 1 թեթե և 2 հոբիցիալին մարտկոցներով թողնել Ավշար գյուղում՝ վորպես բանակի ոժանդակ:

«Ազատամարտ» և «Մուսայելյան» զրահագնացքներին վերջապահների հետ սկսել նահանջը դեպի Շիրազու, պաշտպանել բանակի նահանջող զորամասերը, իսկ Շիրազ լու ժամանելուց մանյովը Եիրազլու — Ղամարլու գծով և Թագա-Դարդարուի կողմից ապահովել բանակի շտաբը Ավշար գյուղում:

Հայթալթման պետին խնդիր եր տրված գնման և բոնագրավման միջոցով ձեռք բերել պարենի յերկու շաբաթվա պաշար և գրավել Համարլու կայարանում գտնվող հրանցութերը և զենքը: Հայստանի Հեղափոխական Կոմիտեյի փետրվարի 19 ի № 6 հրամանով հրամանատարներին և քաղաշխատողներին խնդիր եր տրվում ուժեղ քաղաշխատանք տանել՝ հիմքից վերացնելով ամեն տեսակի պրովոկացիաները և դասալքությունը և զորքերի մեջ ամուր հավատ ներշնչել, վոր բանվորների ու գյուղացիների հաղթանակը դաշնակների բանդայի նկատմամբ անպայման ապահովված ե: Դասալքության, լրտեսության և սաբուտաժի դեմ պայքարելու համար նույն այդ որը կազմակերպվում և ուազմա-հեղափոխական տրիբունալ*):

*) Ի լրացումն № 4 հրամանի, հրամապատճեն և 1-ին հայկական բանդայի հրամանատարը ընկ. Միբաժնություն անցնել ամբողջ տեղամասի հրամանատարությանը:

Հետեւուրյուն-
եր լեզ գեահա-
սուրյուններ Այդպիսով, փետրվարի 16-ից մինչև
19-ի գործողությունների հաջողության
գրավականը կարմիրների համար հան-
դիսացել ե նախաձեռնություն վերցնելը
և հականեղափխական կենտրոնի և դաշնակցական գոր-
քերի կառավարման կենտրոնի վոչնչացումը (Բաշգառնիի
շրջանը և կենդանի ուժը), գորը կարելի կլինի իրազոր-
ծել միայն անհրաժեշտ ուժեր նշանակելով: Թույլ (Յերե-
վանի ու Ղամարլուի) ջոկատների նշանակումը հետեւանք
եր նրան, գոր հաշվի չեր առնված հակառակորդի բանակի
դրությունը և ուժը: Բանակի հրամանատարի իդեալով
հեշտ եր պլանը—բանդաները քաշել Յերեւանի մոտ, շրջա-
պատել և վոչնչացնել, սակայն Յերեւանի ջոկատին առա-
ջագրած ակտիվ խնդրի սխալն անդրադարձավ հաջողու-
թյան վրա: Յերեւանի և Ղամարլուի ջոկատների անմիջա-
կան գեկավարությունն իր վրա վերցնելով (փետր. 16-ին):¹
բանակի հրամանատարությունը փաստորեն չի կառավա-
րել նրանց գործունեյությունը մինչև ուղղմական գործո-
ղությունների վերջը: Բանակի շտաբը հետախուզության և
գործակալության վրա խնդիրներ դնելով, չի հետաքրք-
րըրվել վերջինների իրազործմանը ու հետեւանքներով:
(Տես բանակի ծավալման մասը): Դրա հետեւանքով բա-
նակի շտաբում վոչ մի տեղեկություն չկար հակառակորդի
մասին մինչև Յերեւանի անկումը և 2-րդ բրիգադի, 1-ին
դնդի և Յերմոլենկոյի ջոկատի կործանումը: Զորամասերի
հրամանատարները չեն կատարել հետախուզական հան-
ձնարարությունները: Ամենուրեք իշխում ե ամբողջական
անհոգությունը, և բացակայում են նույնիսկ անմիջական
պահպանության միջոցները (4-րդ գունդը Եջմիածնում):
Զնայած կապի միջոցների առկայության՝ նկատվում ե կա-
պի իսպառ բացակայություն, վորի հետեւանքով մարտական
գործողությունների շրջանից 10—12 կիլոմետրի վրա գըտ-
նը բանակի շտաբում լիակատար անտեղյակություն ե

տիրում ճակատի դրության մասին: Վոչ բանակի հրա-
մանատարը, վոչ շտաբի աշխատակիցները ճակատ չեն
մեկնել շրջադիտության և անձնական հետախուզության
համար: Մյուս կողմից, կապ չի յեղել և միննույն խըն-
դիրը կատարող ջոկատների միջև, թեպետ կապի սահմա-
նումը միանգամայն հնարավոր եր: Բանակի հրամանա-
տարի անվճռականությունը և ոժանդակը մանը մասերով
մարտի հանելը հանգել ե նրան, վոր նրանք առանձին ա-
ռանձին պարտություն են կրել, և Յերեւանում դանվող
ոժանդակը ծախսվել ե աննպատակահարժար ձևով: Պետք
է նշել, վոր փետրվարի 16-ին, Ղամարլուի ջոկատի հա-
մար ճգնաժամային մուտենտին, Ղամարլվում անգործու-
թյան եր մատնված 3-րդ գունդը:

Դաշնակցական բանակի հրամանատար գնդապետ
Թարխանյանի պլանը վառ արտահայտում է մասնակի հաղ-
թանակներ ձեռք բերելու և կարմիրներին վերջնականա-
պես վոչնչացնելու համար բոլոր ուժերը վճռական հար-
վածի վայրում (Յերեւան) կենտրոնացնելու պլանը: Հաջո-
ղության գրավականներ պետք ե հանդիսանալին առանձին
ջոկատների գործողությունների շեշտակիությունը և գոր-
ծողությունների լիակատար համաձայնեցված լինելը, վո-
րոնց վրա գնդապետ Թարխանյանը հազիվ թե կարողա-
նար հույս զնել: Առանձին խմբապետների կողմից հրա-
մանին չենթարկվելը հնարավորություն ե տվել կարմիր
զորամասերին, թեպետ և կորուստներով, բայց պահպա-
նելով մարտունակությունը, դուրս գալ ամբողջական շըր-
ջապատումից: Զորքերին հրահանգով կառավարելու գըն-
դապետ Թարխանյանի ձեռքը (ջոկատներին առաջադրը-
գած խնդիրների մանրամասն գրի առնելը), վորոնք հաշ-
վի յեն առնում իրենց զորամասերի խմբավորումն ու դը-
րությունը, պետք ե ճիշտ համարել: Իր վրա ուշագրու-
թյուն ե գրափում գնդապետ Թարխանյանի վճռական հար-
վածով նախաձեռնությունը կարմիրների ձեռքից խլելու

ձգումը, մի բան, վոր նրան հաջողվում ե փետրվարի 16-ին։ Անհրաժեշտ ե նշել զնդապետ Թարխանյանի զդայուն վերաբերմունքը դեպի ճակատում ստեղծված դրությունը, յերբ նա կասեցնում ե հաջող հարձակումը, վորպեսզի չսահմանափակի կիսատպուատ արդյունքներով (փետրվարի 17-ի մարտում մինչև Յերևանի լիակատար շրջապատումը)։ Մյուս կողմից խմբապետների հոգեբանության հաշվի չառնելը պետք է բացասարար անդրադառնային այդ վճռի իրագործման վրա, ինչպես վոր լինում ե իրականում։ Խմբապետներն ու մառւգերիստները ձգտում եյին վորքան կարելի յե շուտ մտնել քաղաք, ավելի շատ թալանելու նպատակով։ Դրանով նրանք աչքաթող եյին անում գնդապետ Թարխանյանի վճռի իրագործման անհրաժեշտությունը («Յեթե հարկ կզգացվի — միքանի կիլոմետր նահանջել, կարմիրներին լիակատար շրջապատելու նպատակով»)։ Դաշնակները տարվում են թալանով և կոմմունիստներ վորսալով, դրանով իսկ նրանք աչքաթող են անում վերջնականապես ջախջախելու համար հակառակորդին հետապնդելու անհրաժեշտությունը, վորը և հնարավորություն ե տալիս կարմիրների հրամանատարությանը հավաքել շարժական ամբողջ կազմը, պարենի և հրանյութերի պաշարը և նահանջել Ղամարլու։ Ազգտեղից հետեւմ ե, թե մարտի վերջին և վճռական ըստելին գնդապետ Թարխանյանն իր ձեռքից բաց ե թողնում կառավարման սանձերը։

VII. ԿՈՂՄԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ԺԱՄԸ 6-Ի ՄՈՏԵՐԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԻԹՅՈՒՆԸ ՀԱՐԳԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Մեր զորամասերը փետրվարի 20-ի ժամը 6-ին բանակի հրամանատարի փետրվարի 19-ի № 4 հրամանի համաձայն զրավում եյին հետեւյալ զրությունը։ 2-րդ գունդը զրավում եր Ն.-Կարաբեկուտու—Տաշլու—Բեռլ-Վե-

դիի գիծը ներառյալ։ 3-րդ հրաձիգ գունդը 1-ին թեթև մարտկոցի մի դաստկով գրավում եր Բեռլ-Վեդի (բացառյալ)։ Յենգիջա—Կառալյարի պոստ— Քէշուկ-Վեդի 425,9 բարձունք։ Բակ։ Յանուշեսկու կոմմունիստական ջոկատը 2-րդ թեթև մարտկոցի մի դաստկով տեղափորվել եր Խալիսա գյուղում, խնդիր ունենալով պահպանել բանակի ձախ թենք և գիտել Արաքսի ձախ ափը, իսկ 178-րդ գունդը 1-ին թեթև մարտկոցի Յ հրանոթներով և հորիցային մարտկոցի Յ հրանոթով գտնվում եր Ավշար գյուղում՝ վորպես բանակի ոժանդակ։ Յերկու զրահագնացքները զինված Յ հրանոթներով և 35 զնդացիրներով՝ վորփոխակի մանկովում եցն Շիրազու—Ղամարլու գծով՝ բանակը Թազա-Դարզալու—Մուսունլուի կողմից ապահովելու նպատակով։

Գնդապետ Թարխանյանը կարմիր բանակը ջախջախաված համարելով, բայց հաշվի առնելով, վոր Վրաստանի ամրողջական խորհրդանացությոց հետո ԽI բանակը ոգնության կհասնի հայկականին, վճռում ե անցնել նոր զորամասերի կազմակերպման՝ ատիպողական զորահագաք հայտարարելով մինչև 60 տարեկանը։ Փետրվարի 20-24-ը նա կարողանում է իր բանդայի քանակական կազմը հասցընել մինչև 6000 սկին, 1000 թուր, 28 թնդանոթ, վորը և կազմել է Ղամարլուի ճակատը։ Ճակատի ընդհանուր հրամանատարն եր խմբապետ Սմբատը, շաարի պետը՝ զընդապետ Կաֆիկը։

Փետրվարի 20-ին հակառակորդը հետեւյալ դրությունն եր զրավում։ Խմբապետ Արամյանի բանդան 800 հետեւյակով, 100 ձիավորով և 2 մարտկոցով զրավում եր արաքս գետից մինչև Մուսունլու գյուղը. Խմբապետ Մարտիրոսի ջոկատը 1500 հետեւյակով, 100 ձիավորով և 2 մարտկոցով՝ Մուսունլուից մինչև Բողբուրուն սարը. զընդապետ Սարգսյանի ջոկատը՝ մինչև 500-ի համար հետեւյակով և 50 ձիավորով՝ 3506 բարձունքը (Գյավուր-դա-

լասի բարձունքից հյուսիս) և Տաշլու գլուղը: Բացի այդ Նժդեհի հականեղափոխական բանգան, գանվելով Զանախչի—Կարախչ—Զենջոլու շրջանում՝ սպասում եր անցնել մեր աջ թեր:

Բանակի մնացած գրամասերը խմբագետ Աղաբեկի հրամանատարությամբ ուղարկվել ելին հյուսիսային ճակատը XI բանակի գորամասերի դեմ: Փետրվարի 20-ից մինչև 28-ը հակառակորդի կողմից ուղամական գործողություններ չեն լեզել: Միայն հրաձգություններ ելին տարվում հեղափոխական զորամասերի միջև: Կարմիր զորամասերն այդ ժամանակ զբաղված ելին մոտ ապագալում ակտիվ գործողությունների անցնելու ինունդուն պատրաստությամբ: Հակառակորդի ուժեղ գերազանցությունը հեծելազորում, վորն ամբողջ ժամանակ զործում եր մեր զորամասերի թերում, ոգտագործում լեռնոտ տեղանքի պայմանները, այլև բարոյական այն ներգործությունը՝ վոր նա թողնում եր կարմիր-բանակայինների վրա՝ թերվերում հանդես գալու գեղագում, ստիպում և կարմիր զորքերի հրամանատարությանը, ոգտվելով ճակատում տիրող դադարից, ուժգին ստահոգվել սեփական, թեկուզ և թըվով նվազ հեծելազոր ստեղծելու խնդրով: Փետրվարի 22-ին բանակի հրամանատարի հրամանով 178-րդ ոուսական գնդի հրամանատարը ընկ: Բլագովիտովին հանձնարարում ե հրետանու ձիերից, գնդերի ձիավոր հետախույզների զորախմբերից և Դամարլուի շրջանի միլիցիայից կազմել մի ջոկատ 70 թրից բաղկացած: 4 որվա ընթացքում կուսակցության կենտրոնի և կառավարության կողմից տարած քաղաքական աշխատանքի հետևանքով զորամասերն այնքան ելին ամրացել, վոր հրամանատարությունը լիակատար կարող եր հույս գնել հաջողության վրա:

Այդպիսով հակական կարմիր բանակը, վորը հարձակման մոմենտին իր շարքերում հաշվում եր 1664 սըվին, 11 հրանոթ, 64 գնդացիր, 70 թուր և 2 զրահագնացք,

իր դեմ ուներ հակառակորդի համարյա յեռապատիկ գերազանցություն (4300 սվին, 700 թուր, 20 հրանոթ):

VIII. ԿԱՐՄԻՐ ԶՈՐԳԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀՄՐՁԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՑ ԱՒՆՉԵՎ ՄԱՐՏԻ 1-Ը

Չնայած յերեկվա անհաջողության և պարենի ու հրանյութերի բացակայության, զորքերի բարոյական վիճակը, շնորհիվ քաղաքական մշակման, գերազանց եր: Զորքերի տրամադրությունը, այն դրությունը, վորի մեջ՝ “գտնվում ելին այդ զորքերը, շրջապատված լինելով հակառակորդի կողմից, պարենի և նյօւթերի սահմանափակ քանակի առկայությունը, այս հակառակորդի պասսիվ գործողությունները—բանակի հրամանատարին համոզեցին, վոր հասել և այն մոմենտը, յերբ կարելի լի պաշտպանությունից անցնել ակտիվ գործողությունների:

Փետրվարի 23-ի ժամը 19-ին հրաձգային բրիգադի շտաբում ընկ: Ալեքսանդրովիկի*) նախագահությամբ գումարվում ե զորամասերի հրամանատարների և կոմիսարների խորհրդակցություն հարձակման անցնելու համար գնդերի պատրաստ լինելու մասին: Դանելով, վոր զորամասերը մարտունակ են և քաղաքականապես պատրաստված, 3-րդ գնդի հրամանատարը ընկ: Բաղդասարյանը, 178-րդ ոուսական գնդի հրամանատարը ընկ: Դրուժինինը, այլ և կոմմունիստական ջոկատի հրամանատարը ընկ: Յանուշեսկին հարձակումը համարում են հնարավոր: Այդ ընդգծվում եր հատկապես նրանով, վոր անհրաժեշտ ենախաձեռնությունը մեր ձեռքը վերցնել: 2-րդ գնդի հրամանատարը ընկ: Ֆիշելիկիը փետրվարի 16-18-ը Բաշգյառնիի տակ տեղի ունեցած անհաջող մարտերի տպավորության տակ դեմ եր ակտիվ գործողություններ սկսելուն:

*) ընկ: Ալեքսանդրովիկը—բանակի շտաբի և կուսակցության կենտրոնի լիազորն եր բրիգադի շտաբում:

Զորամասերի հրամանատարների խորհրդակցությունից հետո բանակի հրամանատարը վճռում և անցնել հարձակման, հրամաքելով.—փետրվարի 25-ի լուսաբացին յերկու զորասյուներով հարձակվել Յերևանի վրա՝ գլխավոր հարվածը հասցնելով իր ձախ թևով, վորի համար և հրամայվում եր՝ աջ մարտական տեղամասին (պետն եր ընկ. Ֆիշերիչը) 2-րդ հրաձիգ հայկական գնդի, 4 լեռնալին մարտկոցների կազմով, ընդամենը 2 գումարտակ և 22 հրանոթ (մի գումարտակը 4-րդ լեռնային մարտկոցի մի դասակի հետ միասին թողնելով Բեռք-Վեդիի շրջանում՝ բանակի աջ թևը Զենջիւլու—Ղոթուղի կողմից ապահովելու համար) գնդի մեացած մասերի հետ միասին փետրվարի 24-ին կենտրոնանալ Յերևանի վրացած մասերի հետ միասին փետրվարի 25-ի ժամը 4-ին Թազա-Դարդալու, Արտաշատ գյուղերի վրայով հարձակվել Աղբաշի վրա, Բաշգյառնիի կողմից սպասվելիք հարվածներից պաշտպանվելու համար, այս գլխավոր զորասյունի և բանակի շտաբի հետ կազմ ապահովելու նպատակով ինակլու գյուղում ունենալ մի դասակ հետեւակ:

Զախ մարտական տեղամասին (պետն եր 1-ին հայկական հրաձգային բրիգադի հրամանատար ընկ. Միրիմանովը) 3-րդ հայկական հրաձիգ գնդի, կոմմունիստական ջոկատի, 1-ին և 2-րդ թնդանոթային և 2-րդ հորիցային մարտկոցների, 2 զրահագնացքների և ընկ. Բլագովիսովի ձիավոր ջոկատի կազմով, ընդամենը 1060 սպին, 6 հրանոթ, 2 զրահագնացք և 70 թուր, փետրվարի 25-ի ժամը 4-ին վճռական հարձակման անցնել Յուվա—Ղամարու—Իմանշալու—Աղհամզալու—Ռւլուխանլու գյուղերի վերա, վերջնական նպատակ ունենալով Յերևանի գրավումը: Ընկ. Միրիմանովին ստանձնել ամբողջ ճակատը և անցնել անցնելով նույնիսկ թիկունք գուրս գալը, նախորդը անհաջողության և մատնվում: Անգամ Յերևանի գրավումն այդ պայմաններում թողնում եր բաց հակառակորդի նահանջի ճանապարհը դեպի իր բազան—Բաշգյառնի, իսկ նկատի ունենալով հակառակորդի ակտիվությունը, այդ պլանը նախատեսում և կրկին կարմիրների շրջապատվելը Յերևանի շրջանում:

տևակն այստեղ մտնելուց 30 րոպե անց՝ ապահովելով ձախ զորասյունի աջ թևը և զորասյուների միջի կապը: Աղհամզալու գյուղին և նրա շրջանին հասնելուց զորամասերին լավ հանդիսատ տալ, վորից հետո շարունակել հարձակումն այն հաշվով, վորպեսզի զորամասերը մինչև փետրվարի 26-ի լուսաբացը հարավից մոտենան Յերևանի շրջակալքին, իսկ լուսաբացին գրավեն Յերևան քաղաքը:

Բանակային ոժանդակին (պետն եր 178-րդ ոուսական հրաձիգ գնդի հրամանատար ընկ. Դրուժինը, կազմը՝ 178-րդ ոուսական հրաձիգ գունդը հրետանու մի դասակով), ընդամենը 482 սպին և 3 հրանոթ.—փետրվարի 25-ի ժամը 4-ի մոտերը կենտրոնանալով Ավշար գյուղում՝ խճուղով ուղղվել դեպի Յերևան՝ ունենալով անմիջական պահպանություն: Իմանշալու գյուղին հասնելուց մեծ դադար ունենալ:

Այդ վճիռը պետք է համարել ճիշտ, վորովհետև անհրաժեշտ եր.—նախաձեռնությունն իր ձեռքը վերցնել, ցուց տալ բնակչության և գերի ընկած կարմիր-բանակայիններին, վոր կարմիրները ջախջախված չեն, և դրանով խանգարել զաշնակցական բանակի զորահավաքին և կազմակերպմանը: Բանակի հրամանատարի պլանը, վորը կանխորոշել եր գլխավոր հարվածը հասցնել հովտում, անուշադրության մատնելով հարձակվող զորամասերի աջ թևում գտնվող բարձունքները, հանգամանք, վոր թույլատրում եր աջ թևն անցնելը և նույնիսկ թիկունք գուրս գալը, —նախորդը անհաջողության և մատնվում: Անգամ Յերևանի գրավումն այդ պայմաններում թողնում եր բաց հակառակորդի նահանջի ճանապարհը դեպի իր բազան—Բաշգյառնի, իսկ նկատի ունենալով հակառակորդի ակտիվությունը, այդ պլանը նախատեսում և կրկին կարմիրների շրջապատվելը Յերևանի շրջանում:

Սարտական գործունեցնելու մասին առաջարկը 25-ին առաջարկավարի կողմէն հարձակման համար նախատեսված Յեսուսի զյուղում է հարձակման համար 4-ին անցում է հարձակման և առանց առանձին դիմագրության հանդիպելու հակառակորդի կողմից՝ զբարում և Մուսունու—Թաղաղալու դյուղերը և շարունակում եւ շարժվել դեպի Աղբաշ։ Հակառակորդն ուժեղ ամրացում ստանալով սկսում է նեղել մեր զորամասերին դեպի Դվին—Քյուրդքենդ։ Մարտը մզվում է ամբողջ որը, բայց Աղբաշը վերցնել չի հաջողվում, վորովնետեւ հակառակորդի ուժերը յեռապատիկ դերազանցում ելին։

Զախ տեղամասում. — 3-րդ գնդի հրամանատարը ընկ. Բաղդասարյանը ժամը 2-ի մոտերը գունդը կենտրոնացնում է Կարալիառի պոստի մոտ և ոգտվելով զիշերալին խավարից և տեղանքից՝ զունդը հասցնում է Յուլիալի այդիները և ժամը 3 և կեսին տեղավորում է նրան խճուդու յերկու կողմերում, հակառակորդի պահակային պահպանությունից 200—300 քայլի վրա։ Գնդի զորամասերը մարտակարգի բերելուց և դեպի առաջ և դեպի թիերը հետախուզություն կազմակերպելով՝ կարգադրում է առանց կրակոցի զրոնել հակառակորդին Յուլիալի այդիներում և գրավելով Յուլիալի առանց կազմակերպարդի հանկարծակիր բերած հակառակորդին սթափի կազմակերպվելով համարձակիր նետագա գիմաղրության համար։ Հանկարձակիր յեկած հակառակորդն անկարգ և առանց կանդ առնելու փախչում և մինչև Աղհամզալու դյուղը։ Վրա հասած հակառակորդի ոժանդակների դեմ 2-ժամյա մարտ մզելուց հետո կարմիր զորամասերը 14 ժամ 30 րոպեին զրավում են Աղհամզալուն՝ հակառակորդին յետ շպրտելով Թաղաղյուղ-

69
Հակառակորդը թողնում է 2 գնդացիք, մի հրանոթ, շատ մարտանկութեր և գերիներ։

Աջ զորայունը հանդիպելով հակառակորդի ուժեղ հարձակմանը, չի կարողանում իրագործել իր վրա դրած խնդիրը՝ փետրվարի 25-ին զըավել Աղբաշ—Թաղաղալու—Արաւաշատ գյուղերը։ Նկատի ունենալով այն, վոր աջ զորայունը չի իրագործել ինդիրը, վոր հակառակորդը կարող է Դվին—Քյուրդքենդի կողմից հարվածել մեր թիկունքին, վոր մի որում մարտ մզելով 30 վերստ կտրած ձախ զորայունի զորամասերը հոգնած են, բանակի հրամանատարը փետրվարի 25-ի ժամը 15-ի մոտեցը հրամայում է ձախ զորայունի պետին զորամասերին հանդիսատալով դադարեցնել հարձակումը և հակառակորդի կողմը պահապանություն սահմանել։

Այդպիսղվ հայկական Կարմիր բանակը հակառակորդի ձեռքից իլելով նախաձեռնությունը և փետրվարի 25-ին հաղթանակելով, անկարգ նահանջող հակառակորդին յեռանդուն հետապնդելու և քաղաք մտնելու փոխարեն, իր հրամանատարության անտեղի կարգադրությամբ, անցնում է հանգստի։ Այդ կարգադրությունը դաշնակներին հնարավորություն և ժամանակ է տալիս թարմ ոժանդակներ մոտեցնելու, իր զորամասերը կարգի բերելու և հաջորդ իսկ որը դիմագրություն կազմակերպելու համար։

Սարտական գործունեցնելու մասին փետրվարի 26-ին հակառակորդն անցավ։ Փետրվարի 26-ին հակառակորդի կորդն ամբողջ որն ուժեղ դիմագրություն է ցույց տալիս վողջ ճակատի մրա, միքանի անդամ անցնելով հակագրոհի։

Աջ զորայունը 178-րդ ոռւսական գնդից 2 վաշտ ամրացում ստանալով՝ համառ մարտերից հետո զրավում են Աղբաշը և 475 բարձունքը, վորը Աղհամզալուից 1 վերստ

դեպի արևելք եւ Զըմահագնացքներն այդ ժամանակամիջոցում սարքելով ճանապարհո՞ւ դուրս են գալիս Ուլուխանլու գիծը։ Հակառակորդը գերազանց ուժերով ուժեղ դիմադրություն ցույց տալով ձախ զորայունի տեղամասում, միջանի անգամ հակագրոհի անցնելով, միաժամանակ մեծ ուժեր ե խմբավորում (հատկապես ձիավորներ—թվով 400 հոգի) Աղբաշի շրջանում։ Խավարն իշնելուն պես հակառակորդը վճռական հարձակման ե անցնում մեր աջ թևում և իր ձիավորներով անցնելով մեր աջ թևը՝ միաժամանակ գրոհում ե Աղբաշը հյուսիս-արևելությօց։ Մեր զորամասերը չդիմանալով հակառակորդի գերազանց ուժերի ճնշմանը, անկարգ նահանջում են իպակիու, թողնելով Աղբաշը^{*})։

Փետրվարի 26-ի ժամը 20-ին աջ թևում զըսությունը վերականգնելու համար բանակային ոժանդակից առաջ ե բաշվում 178-րդ գունդը (գնդի 2 վաշտերն ուղարկվել ելին ավելի վաղ)։

Մարտական գործողությունները փերվարի 27-ին։

178-րդ գունդը 2-րդ հրածիդ զնդից մացած զորամասերի հետ սիասին փետրվարի 27-ի ժամը 6-ին անցնում ե հարձակման և ժամը 7 անց 30 րոպե գրավում Աղբաշը, հակառակորդին շպրտելով յետ՝ դեպի 5271 բարձունքը, վորն ընկնում ե Աղբաշից հյուսիս-արևելք։ Աղբաշը գրավելուց հետո բանակի հրամանատարը հանում ե 178-րդ գունդը աջ թևից և կենտրոնացնում Աղհամզալուում։

Ձախ տեղամասի ճակատում փետրվարի 27-ին ամբողջ որն ուժեղ մարտ ե տեղի ունենում վճռական դիմադրություն ցույց տվող հակառակորդի գերազանց ուժերի դեմ։ Մի շարք յեռանդագին զրոհներից հետո 3-րդ հայկական գնդի և կոմմունիստական ջոկատի զորամա-

^{*}) Այդ նահանջի ժամանակ սպանվում ե 2-րդ հայկական հրածիդ գնդի հրամանատար ընկ. Ֆիշերիչը։

մերը զրահագնացքների և 3 հրանոթների աջակցությամբ հակառակորդին շպրտում են թաղա-գյուղից և Ուլուխանլու գիծը և զրավում այդ կետերը։ Ժամը 6-ին 3-րդ հայկական գնդի 2-րդ գումարտակը զրավում ե 2639 բարձունքը և սկսում հյուսիս-արևելքից շրջանցել նորագավիթը։ 2639 բարձունքը թողածնակառակորդը յետ ե բաշվում նարագավիթից և ամբանում նորագավիթի հյուսիսային ծայրում գտնվող այդիներում։

Փետրվարի 28-ի ժամը 5-ին մեր Մարտական գործողությունները գորամասերը հարձակման են անցնում ամբողջ ճակատի վրա Յերևանը զրավարի 28-ին ամբողջ ճակատակով։ Չնայած հակառակորդի ուժեղ դիմադրության, 3-րդ հրածագային գունդը դեմ շպրտելով նրան Շնդագիթից, ամբողջ ճակատի վրա Յերևան կայարանից մեկ վերստ զեպի հյուսիս-արևելքում գտնվող բարձունքներում և զերեղմանցից հարավ գտնվող բարձրություններում և զրավեց Զարբախի այգիները։ Այդ պահին ձախ թևը սոտենում ե Աղբաշադշաղ գյուղին։ Փետրվարի 27-ի լույս 28-ի գիշերը հակառակորդը կենտրոնացնել եր բերդից դեպի հարավ և Յենգիշա-Նազիկացի շրջանում, — ունենալով Յենգիշայի շրջանում մինչև 500 ձիավոր հրետանու հետ միասին։ Փետրվարի 28-ի ժամը 9 ին հակառակորդը հարձակման ե անցնում ամբողջ ճակատի վրա, բայց նրան չի հաջողվում մեր զորամասերը հանել իրենց զրաված դիրքերից։ Մեր զորամասերն իրենց վերջին ոժանդակները մարտ հանելով հազիվհազ են դիմանում հակառակորդի ճնշմանը։ Հատկապես մեծ յեռանդով ե գործում հակառակորդը մեր ձախ թևում։ Յերեք անգամ նետվում ե ձեռամարտի և ձգտում վ.՝ Նեղութուի շրջանում գործող ձիավորներով անցնել մեր թիկունքը՝ Ուլուխանլու-Աղհամզալուի կողմից։

Աջ թևում, 2-րդ հրածիդ գունդը չդիմանալով հակառակորդի ճնշմանը՝ նահանջում ե իպակլու, մաքրելով

Աղբաշը, բայց շնորհիվ զնդի հրամանատարությունն ընդունած գնդի սագմկոմ ընկ. Տեր-Մովսիսյանի յեռանդուն գործողության, գունդը նորից անցնում ե գրոհի և ժամը 18-ին գրավում Աղբաշը, հակառակորդին յետ շպրտելով 2571 բարձունքը. Փետրվարի 28-ի ժամը 12-ից կատ չունենալով 2-րդ զնդի հետ և վախճանալով կտրվել Աղբաշի մանշալուի կողմից, ձախ մարտական տեղամասի պետք բրիգադի հրամանատարից հրաման ստանալով, ժամը 11-ին զրահագնացքի պաշտպանության տակ նահանջում ե իմանշալու—Բուղումու։ Նահանջը կատարելով լիտկատար կարգով, զորամասերն ամրանում են Աղբաշի մանշալու—Բուղումու գծի վրա, ունենալով 2-րդ հրաձիգ գունդը 4-րդ լեռնալին մարտկոցի մի դասակի հետ միասին—Աղբաշում, կոմմունիստական ջոկատը—Ինակլուում, 3-րդ հրաձիգ գունդը և 178-րդ ոռուական գունդը պահակային պահպանություն հանելով Աղբամզալուում, տեղափորված են իմանշալու—Բուղումու շրջանում, իսկ զրահագնացքը ները Ղամարլուի և իմանշալուի միջև։

Փետրվարի 28-ի առավոտից չի յեղել վոչ մի ղեկավարություն բրիգադի և բանակի շտաբների կողմից։ Մարտական տեղամասների պետքը ամբողջ որը կապ չեն ունեցել վոչ միմյանց հետ, վոչ ել բարձր կանգնած շտաբների հետ, և նրանք ստիպված ելին գործել իրարից անկախ, վճիռներ ընդունել ինքնուրույն։

Դրա հետ միաժամանակ Դարավուրյուները մարտի լագյազի ճակատում հակառակորդը

1-ին ժամանակաշինություն

մարտի 1-ին փորձում ե գրավել Յուլիարի-Տանձիրը, բայց յետ և շպրտական (թուրք) ընակչության և Դարավագյազի խմբապետ Յավոնի կողմից գրավելու ժամանակ այստեղից փախած կոմմունիստներից կազմված ջոկատից, վորը հաշվում եր 19 հոգի։

Բանակի շապում յենթադրում են, թե հնարավոր

ե, վոր հակառակորդը Դարավագյազի կողմից հարձակվի Բաշնորաշենի վրա, սպատակ ունենալով կտրել մեղ պարես հասցնելու և հնարավոր նահանջի միակ ճանապարհը (Շահմախտի-Նախիջևան, վորանդ գտնվում ե ԽI բանակի 180 բղ գունդը), շրջապատել մեզ և վոչնչացնել։

Հաշվի առնելով Դարավագյազի կողմից սպառնացող հակառակորդի վտանգը, հրաժանատարությունը, կուսակցության կենակոմի և կտավագրության հետ վճռում ե գիմել ընկ. Արաս-ղուլի-բեկին (հայոնի լեռ վորպես ժողովրդական հերոս, Բեռլը-Վեղիի տակ գաշնակների զորքերի գեմ մզած մարտերում հատկապես 1919 թվին), խընդրելով իր հրամանատարությամբ մի ջոկատ կազմակերպել կոմկուսին և խորհրդացին իշխանությանը համակրող նախիջևանի շրջանի թուրք ընակչությունից և ապահովել բանակը Դարավագյազի կողմից։ Ընկ. Արաս-ղուլի-բեկին ուրախությամբ ընդունում ե հրամանատարության դրաւմը։ Զոկատի կազմումը ընթանում ե շատ հաջող և մարտի մեկին ջոկատը՝ «կարմիր տարր» (գումարտակ) 400 հոգու կազմով, ընկ. Արաս-ղուլի-բեկի հրամանատարությամբ գրավում ե Գյուղի-սարը—Տանձկերի-Տանձիկ-Յուխարի—3080 բարձունքը—Որդիչ սարը և դրանով ապահովում ե բանակը հյուսիսից և հարավ-արևմուտքից շրջապատելուց։

Հակառակորդը մեծ ուժեր կենարոնացնելով Աղբաշի շրջանում, մարտի 1 ի ժամը 19-ին 2-րդ զնդի տեղամասում անցավ հարձակման։ 2-րդ հրաձիգ գունդը չգիմանալով հակառակորդի գերազանց ուժերի ճնշմանը՝ յետ քաշվեց Իպակլու-վ. Ղույսարը։ Պարզելով հակառակորդի ուժերը և նրա մտագրությունը—անցնել ակտիվ գործողությունների՝ նպատակ ունենալով Ղամարլուի ջոկատի հետ հաշվիք շուտ վերջացնել ու մաքրելով թիկունքը հայկական կարմիր զորամասերից և ուժերը տեղափոխել Յեւենովկայի ճակատը, վորտեղ առաջանում ելին XI բա-

նակի զորամասերը, բանակի հրամանատարը մարտի մեկի հրաժանով վճռում ե անցնել պաշտպանության, վորի համար հրամայում ե 1-ին հրաձգային բրիդադի հրամանատարին յետ քաշվել և մարտի 2 ի 5 ժամ 30 րոպեյից փոչուշ զրավել վաղուց հայտնի բնագիծ-2-րդ հրաձգային գնդով զրավել Կարաբեկլլառ-3506 բարձունքը (գյավուրդասի սարը) Բեռուք-Վեդի 2-րդ հրաձգային գնդով-Յենդիջաւչիկ-Վեդի-Խորվիրապ կոմմունիստական ջոկատին գտնվել բրիդադային ոժանդակում (Տատիան գյուղում), բրիդադի շտաբին, զրահագնացքներին և հրետանուն-Շիրազուում. բանակի շտաբին-Ավշար գյուղի մոտ՝ գնացքը ուժում. 178-րդ գնդին-Ավշար գյուղում՝ բանակային ոժանդակում խնդիր ունենալով պահպանել թիկունքը և բանակի ձախ թեր, Արաքս գետի ձախ ափի և Արաքստ կայարանի և Սաղարակ գյուղի կողմի անզությունը. Բանակի գորամասերը մարտի 7-ի ժամը 2 ին վերոհիշյալ հրամանի համաձայն դիրք ելին բնդունել. Բնագիծը պաշտպանության համար զրավելուց և բանակի զորամասերը կարգի բերելուց հետո Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տերրիտորիայում գործող զորքերին տրված 1921 թվի մարտի 2-ի № 15 հրամանով ամբողջ հրամանատարական, կոմիսարական և կարմիր-բանակային կազմին շնորհակալություն ե հայտնվում:

Աելուլիսով փետրվարի 25-ից մինչաւուրիան յեզ գաւ-
չե մարտի 1-ը տեղող ուազմական գործակների գործողու-
ծողություններում կարմիր հրամա-
րութեների գնահատա-
կան ենք հին սխալների կրկնությունը:
Գլխավոր հարվածը իր ձախ թերք Յու-
վա-Աղհամզալու-Յերեանի վրա հասցնելու մասին բանակի հրամանատարի կայացրած վճիռը չեր համապատասխանում պարագային. Պարագան պահանջում եր գերազանցութերով իր աջ թերք վճռություն հարձակման անցնել Բաշ-

գյառնիի վրա, կաշկանդելով հակառակորդին ձախ թեռում, հականեղափոխության բուն Բաշգյառնին վոչնչացնելու նպատակով ապահովել իր աջ թերք հակառակորդի թեռացումից և ըջապատումից. Տեղանքը տվյալ դեպքում ուժեղ ազգեցություն ե գործել բանակի հրամանատարի վճռի վրա հարթ տեղանք, ծածկված ալգիներով, լավ ձանապարհներ, վորոնք հնարավոր ելին դարձնում զորքի բոլոր տեսակների շարժումը. Բնակչության խտությունը հնարավորություն տալիս զորքերը տեղավորել բնականաներում և պարեն հայթալիթել):

Բանակի հրամանատարը հաշվի չի առել, թե առանց հակառակորդի Բաշգյառնիի խմբակը վոչնչացնելու, անհակառակորդի գյուղում չի հասցնի նպատակին, վորովգած Յերևանի գրավումը չի հասցնի նպատակին, վորովգած հետև բանակի աջ թեռում տեղի ունեցած լուրաքանչուր անհաջողություն պետք ե ստիպեր ամբողջ բանակին յետ նահանջել, ինչպես տեղի յե ունենում իրականութեալ նահանջել:

Փետրվարի 26-ին 2-րդ հրաձիգ գնդի նահանջն սափում ե բանակի հրամանատարին ձախ թեռում կասեցնել Յուլիայի տակ ջախջախված և անկարգ փախուստի դիմած հակառակորդի հետապնդումը և հնարավորություն տալիս հակառակորդին առաջ քաշել իր թարմ ոժանդակները և լուսաբացին հարձակման անցնել:

Աջ թեռում կրած անհաջողության հետևանքով ձախ թեռում ստիպողական պաշտպանության անցնելով՝ բանակի հրամանատարը աջ թերին (2-րդ գնդին) ոգնելու համար ոժանդակից առաջ ե քաշում նախ 178-րդ գնդի 2 վաշտերը, իսկ հետո և ամբողջ գունդը. Աղբաշը կրկին գրավելուց, կորցրածը յետ բերելուց և նախկին զրությունը վերականգնելուց հետո—178-րդ գունդը նորից տրվում է ձախ տեղամասին. Թվում ե, թե փետրվարի 26-ին աջ թեռում կրած անհաջողությունները և ոժանդակային գնդի

⁶⁾ Տես հավելված № 7, հրաման ՀՍԽՀ տերրիտորիայի վրա գործող գորամասերին, 1 մարտի 1921 թ., № 15:

առաջքաշումը պիտի աջակցելին բանակի հրամանատարին շոկել իր սխալը, հրաժարվել գլխավոր հարվածն իր ձախ թևով Յերևանին հասցնելուց և շարունակելով պաշտպանվել ձախ թևում 2-րդ գնդի միատեղ հարվածով՝ 178-րդ գնդով վոչնչացնել հակառակորդի Բաշդյանիի խմբակը, ապահովել բանակի թեն ու թիկունքը Մըջապատռմից, շարունակել հարձակումը Նորք-Քանաքեռ ուղղությամբ, դրանով ստիպելով հակառակորդին մաքրել Յերևանը և նահանջել նրա համար վոչ ձեռնառու ուղղությամբ։ Սակայն բանակի հրամանատարը կացության կողմից նախորոք առջադրված հարժար առիթից չոգտվեց և ստիպված եր, փետրվարի 28-ին և մարտի 1-ին կրած յերկորդ անհաջողությունից հետո, յետ քաշվել հին գերբերլու Բանակի հրամանատարը խուսափելով մարտն անմիջականորեն ղեկավարելուց, բոլոր զորքերը յենթարկեց ձախ զորասյունի պետ ընկ. Միքամանովին։ Վերջինս չկամենալով իր վրա վերցնել պատասխանատվությունը, փաստորեն չեր ղեկավարում, այլ կենդանի կապ եր հանդիսանում բանակի հրամանատարի, նրա շտարի և մարտական տեղամասերի պետերի միջև։ Փոխանակ նրան, վորպեսզի կապի տեխնիկական միջոցները արվեն մարտական տեղամասերին՝ կապ պահպանելու համար մարտական տեղամասերի և շտարի միջև, տասնյակ վերստ հեռախոսալարերը և հեռախոսին տասնյակ ալպարատները ծախսվեցին բանակի շտարի և տվյալ գեպքում ավելորդ կայանի՝ բրիդադի շտարի միջև կապը վերականգնելու վրա։ Ասում ենք ավելորդ կայան, վորովհետև բանակի շտարը գտնվում եր գնդերի շտարից 5—7 վերստի վրա (բանակը գրավում եր 12 վեր, խորություն և 22 վերստ ճակատ ունեցող տեղամաս)։ Առանձին անհրաժեշտություն չկար, վորպեսզի բանակի հրամանատարը զորքերը կառավարեր բրիդադի հրամանատարի միջոցով, գտնվելով ֆրոնտից ընդամենը 6—7 վերստի վրա, իհարկե, ավելի նպատակահարմար կլիներ ուղղ-

մական գործողությունների անմիջական ղեկավարությունն իր ձեռքը վերջնել։

Հակառակորդի կողմից նույնակես մարտը չի ղեկավարվել։ Իմանշալու գյուղում բռնվածք զնդապետ Թարխանի հեռափոսագրերը զուց ելին տալիս, թե Ղամարդուի ճակատի հրամանատարության կողմից (իմբապետ Մմբատ) վոչ մի ղեկավարություն չի յեղել։ Զնդապետ Թարխանանին, վերջապես, հաջողվում ե ստանալ կարմիրներին Յերևանում շրջապատելու և վոչնչացնելու հարմար և վաղուց ցանկալի նաշրավորությունը։ Սակայն Թարխանյանը բավականանում ե Աղբաշը գրավելով և այդպիսով փաստորեն հրաժարվում ե կարմիրներին շրջապատելու մտքից։ Այնինչ նա կարող եր իր աջ թիում պաշտպանվել և (կարմիրների ձախ թենի գիմարերու հնարավորություն չլինելու դեպքում) նույնիսկ Յերևանը թողնել և նահանջել Քանաքեռ, իր ամբողջ ուժերն ուղարկել ձախ թել և ոգտվելով այնահեղ ունեցած իր հաջողությունից՝ յեռանդուն կերպով հետապնդել Աղբաշի անկարգ նահանջող 2-րդ հայկական գնդին, կարել յերկաթուղազծի կամուրջը՝ Գյաննիչայի վրա, դուրս գալ (Ղամարդու) կարմիրների թիկունքը։

IX. ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՔԻՉՈՒԿ-ՎԵԴԻ - ԽՈԲՎԻՐԱՊ ՃԱԿԱՏՈՒՄ

ԿԱՐՄԻՐՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏԻ 8-Ի ԺԱՄԸ 8-Ի ՄՈՏԵՐԸ

Հայկական կարմիր զորամասերը զրավում ելին ընկ. Արասկուլի-բեկի «կարմիր տաբորը»՝ Յայջի գյուղ՝ Տանդվերի սար-Յուղար-Դանզիկ-3080 բարձունքը. 2-րդ հրածիդ հայկական գունդը՝ կարաբեկլառ-3506 բարձունք՝ Գյավուր-ղալասի սար-Բեռք-Վեղի. 3-րդ հայկական գունդը՝ Յենգիջա-Քիշուկ-Վեղի. Խորվիրապ: Կոմմունիստական ջոկատը գտնվում եր բըիդադային ո-

Ժանդակում՝ Տայտան զյուղում, բրիդագի շտաբը, զրահագնացքները և հրետանին՝ Շիրավուռում, 178-րդ սուսական հրածիդ գունդը, Բլագովիդովի ձիավոր ջոկատը—բանակացին ոժանդակում Ավշար գյուղում. բանակի շտաբը կառավարության և կուսակցության կենտրոնական կոմիտեի հետ միասին՝ լերկաթուղագծի վրա՝ Ավշարի մոտ վագոններում.

Հակառակորդը գրավում եր.—Դարալագյազի ջոկատը (խմբ. Յապոն)՝ Խաչիկ—Ղարադաղ սար—Արփա—Ռընդ—Չիկա. Ղամարլուի ջոկատը—Կարաբեկլյառ (վերին)՝ 6224 բարձունք—Ալլա-բագներ սար—3997 բարձունք—Բոզբուրուն սար—Թագա-Դարդալու, —Մոսունլու, —Յուվա-Դարդալու:

Ժամը 8 անց 30 րոպե հակառակությունները մարտի կորդը հարձակման և անցնում Քիչուկ-Վեդի—Խորվիրապի վրա և 2-ժամյա ժարտից հետո տիրում վերսիկավարին, այդ կետերը գրավող 3-րդ հայկական զնդի 2 գումարտակներին շպրաելով Ալի-Մահմեդ—Ղլաղի: Շիրավութից դուրս յեկած զնդի ոժանդակում գտնվող 3-րդ հայկական զնդի 1 գումարտակը և Յուվալի կոմմունիտատական ջոկատն անցնում են հարձակման Կարալյառի պոստից Դարդալուի վրա, հակառակորդի թիկունքը՝ գեն շպրաելով նրան Քիչուկ-Վեդի—Խորվիրապից Դարդալուից հարավարեմուտք գտնվող ճահիճը: Միաժամանակ հակառակորդը Մուսունլուի կողմից հարձակման և անցնում Բոզբուրուն սարի հարավ-արևմտյան և հարավին լանջերի վրա, նպատակ ունենալով կարմիրներին Բեռլը-Վեդիից և Յենդի-Ջալից դուրս շպրաել Դավալու և դուրս գալ կարմիրների թիկունքը: Շնորհիվ 2-րդ և 3-րդ հայկական հրածիդ զնդերի և ընկ. Յանուշեկու կոմմունիտատական ջոկատի յեռանդուն գործողությունների, հարձակումը յետ և մղվում, իսկ հակառակորդը փախուստի յեղիմում: Մեր

գորբաժամասերը շարունակում են հետապնդումը և ժամը 17-ի մոտերը գրավում Բոզբուրուն սարի հարավային և հարավ-արևմտյան լանջերը:

Մարտի 8-ին հակառակորդն ամբողջ ճակատում թողնում ե մոտ 100 հոգի սպանված և շատ վիրավորներ, 2 գնդացիր, 15 գերի, 40 հրացան, 7 ձի և 70 գնդացրացին լցրած ժապավեն: Միայն 3-րդ գնդի տեղամասում Դարդալուի հահիճներում հակառակորդը թողել եր 80 սպանված, շատերն ել փորձել ելին անցնել Արաքս գետը, սակայն խեղդվել ելին:

Մարտի 8-ի մարտում մեր կողմից սպանվել են 4 հոգի, վիրավորվել 10-ը, գերի ընկել 2-ը:

Մարտի 8-ի մարտում ե վիրավորվում և բրիդագի կոմիսսար ընկ. Լիպարիտ Միչյանը:

X. ԿԱՐՄԻՐՆԵՐԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՅԵՐԵՎԱՆԻ ՎՐԱ

Մարտի 9-ից մինչև 13-ը յերկու կողմից ել հետախուզություն ե կատարվում, և միայն հրաձգություն ե տեղի ունենում հետախուզների միջև:

Դեռևս մարտի 8-ին բանակի կազի պետին հաջողվում ե Արարատ կայարանում ընկած ավոսմաբելային ուղիու-կալանը սարքի բերել և Դիլիջանի վրայով կապ հաստատել Բագվի և Թիֆլիսի հետ: Մաղթուցի միջոցով ստացված տեղեկությունները հաղորդում ելին, թե մարտի 9-ին Ղարաբիլիսայից և Դիլիջանից դուրս յեկած XI բանակի Յերևանի խմբակը հյուսիսից հարձակվում ե Յերևանի վրա, նպատակ ունենալով մարտի 13-ին զրավել Յերևանը: Ղամարլուի ճակատում միաժամանակ հարձակում սկսելու նպատակով Հայաստանի կարմիր զորքերի հրամանատարը հրամայում ե զորամասերին մարտի 11-ին հարձակման անցնել այն հաշվով, վորպեսզի մարտի 13-ին

Յերեանի խմբակի հետ միասին պրավեն Յերեան քաղաքը:

Ուստիով տեղեկություններ ստանալով, վոր Յերեանի խմբակն ուժեղ ցըտերի և խոր ձյան պատճառով ստիտված և ժամանակավորապես մնալ Ներքին-Ախտավի շրջանում, այս հաշվի առնելով պարենի և հրանութերի պակասությունը, հրամանատարությունն անհրաժեշտ է հանարում փոխել մարտի 11.ի հարձակումը և նշանակել 14.-ին:

Մարտի 12.-ին ստհմանելով, վոր XI Կարմիր բանակի Յերեանի խմբակը մարտի 11.-ին Ներքին-Ախտավի շրջանից հարձակման և անցել Յերեանի վրա, իսկ մարտի 12.-ին Յերեանի խմբակի աջ թին անցել և սպիտակ քերծը և հարձակվում և Բաշարաբանի վրա, հայկական բանակի հրամանատարը, գտնելով, վոր Յերեանի խմբակը մարտի 13.-ին իր աջ թեռվ կհասնի Աշարակին, իսկ ձախով Քանաքեռին, հրամայում և զորքերին մարտի 14.-ին վճռական հարձակման անցնել Յերեանի վրա և դրանով թեթևացնել Յերեանի խմբակի դործողությունները:

Այդ նպատակով հրամայվում ե.

Աջ զորայունին—2-րդ հայկական գնդին 4-րդ լեռնակն մարտկոցի 2 հրանոթներով մեկ վաշտ թողնել Բեռուք-Վեդիի շրջանում Ն. Կարաբեկյան, Դավինազ, Ղոթուզ, Ալլա-բագներ սարի կողմից ապահովելու համար, մնացած դորամասերի հետ մարտի 13.-ին ժամը 21.-ին դուրս գալ Բեռուք-Վեդիից և ճանապարհով գնալ Աղդամլար—Դվին—Քյուրդքենդ—Դվին—Աղբաշի վրա, վորտեղ և հաստատամբանալ և Բաշգյառնիի կողմը հետախուզություն վարել:

Զախ զորայունին (1.-ին հայկական բրիգադի հրամանատար և պետ ընկ. Միքիմանով) 178.-րդ ոռուսական գնդի, 3-րդ հայկական գնդի մի գումարտակի, կոմմունիստական ջոկատի, ընկ. Բլագովիդովի ծիավոր ջոկատի, 1.-ին և 2-րդ թեթև մարտկոցների և 2-րդ հորիցային մարտկոց-

ների կազմով (ընդամենը 4 զում., 8 հրանոթ) գործել հետևյալ կերպ.

ա) Հեծյալ վաշտին և կոմմունիստական ջոկատին տեղավորման շրջանից դուրս գալ մարտի 14.-ին այն հաշվով, վորպեսզի շեշտակի հարվածով ժամը 5 անց 30 ըովուզին գրավի Մուսունլու գլուղը, հակառակորդին շպրտել գեպի հարավ, հնարավորություն չտալով նրան անցնել սարերը: Մուսունլուն գրավելուց հետո շարունակել հարձակումը Դոխուզի վրա՝ իպակլուն գրավելու նպատակով:

բ) Զորասյունի մնացած զորամասերին մարտի 14.-ի ժամը 4.-ին հարձակման անցնել ընդհանուր ուղղությամբ գեպի Յուփա—Ղամարլու—Իմանշալու, վորի գրավումից հետո ամբանալ, լիակատար կարգի բերել իրեն, հետագա հարձակումը շարունակելու նպատակով:

Ընդհանուր (բանակալինին) ոժանդակին (պետն եր 3-րդ հայկական գնդի հրամանատար ընկ. Բաղդասարյանը)—ընդամենը 3-րդ գնդի 2 գումարտակ,—Ավշար զյուղից դուրս գալ ժամը 4.-ին և խճուզով հետեւ ձախ զորայունին և Ղարանամզալու կալարանից 2 վերստի վրա տեղավորվել գիշերանցի համար:

Զրահագնացքների զորասյունը (պետն եր բանակի հրետանու պետ ընկ. Սեմյոնովը) ընդամենը 2 զրահագնացք: Դուրս գալ Շիրազլուց մարտի 14.-ի ժամը 4.-ին և լեռկաթուզագծի ճանապարհը կարգի բերելու հետ շարժվել Ուլուխանլու—Յերեան, իր կրակով ամենազործոն աջակցություն ցուց տալ հետեւ կի շարժմանը: Մատնանշած կետերին հասնելուց զորամասերը պահակալին պահպանություն են հանում հակառակորդի կողմը և զեպի առաջու թերը հետախուզներ ուղարկում:

Աջ մարտական տեղամասում 2-րդ հայկական հրաձիգ գնդի զորամասերը ժամը 10.-ի մատերը զրավում են Աղդամլար զյուղը և համառ մարտերից հետո մարտի 20.-ի

ժամը 20-ի մոտերը հասնում վ.՝Աղբաշ և վ.՝Աղբաշից արևմուտք ընկնող այգիները:

Չափ մարտական տեղամասում կոմմունիստական ջուկատը ժամը 6-ին գրավում է Մուսունլուն (կես ժամ հապաղումով) (հրամանով պահանջվում եր գրավել ժամը 5 և կեսին) և, հետապնդելով նահանջող հակառակորդին, ժամը 9-ի մոտերը հասնում է Իպակլու գյուղին, հակառակորդին գեպի հյուսիս շպրտելով (հրամանով պահանջվում եր շպրտել գեպի հարավ):

178-րդ ոռուսական գունդը, 3-րդ հայկական գնդի գումարտակով, 8 հրանոթներով և ընկ. Բյագովիդովի ձիավոր ջոկատով ժամը 8-ի մոտերը գրոհում է Յուլիան և հակառակորդին շպրտելով իմանշալու, գրավում է Ղամարլուն և շարունակելով հետապնդել նահանջող հակառակորդին՝ ժամը 20-ի մոտերը հասնում է Ղարանամզալու գյուղը:

Զրահագնացքները ապահովելով 178-րդ ոռուսական գնդի աջ թեր, ժամը 9-ի մոտերը հասնում են Յուլիա գյուղին, վորտեղ կանգ են առնում ճանապարհը կարգի բերելու համար (ճանապարհը Յուլիա և Ղամարլու միջև 2 վերստ տարածության վրա քանդված եր):

Մարտի 14-ի մարտում կարսիրները վերցնում են 120 գերի, գրավում 2 հրանոթ, 9 ձի, 490 արկ, 25 հազար հրացանի և գնդացըի փամփուշաներ և «Վիկիերս» սիստեմի գնդացըի 125 լցրած ժապավեն։ Մարտի 14 ի ժամը 20-ի մոտերը գորամասերը գրավում ելին Ն.՝Աղբաշ-475 բարձունք-Ղարադաղու-Բուզումլու գիծը։

Չնայած մարտի 13-14-ին Յերևանի խմբակի հրամանատարին քանից արած դիմումներին, չի հաջողվում պարզել դրությունը Յերևանի խմբակի ճակատում, այլև վորոշել նրա ձեռք բերած կետերը։ Յերևանի խմբակի գորամասերի հետ համաձայնեցրած գործելու նպատակով բանակի հրամանատարը հրամայում է հայկական Կարմիր

բանակի գորամասերին դադարեցնել հարձակումը և ամրանալ ձեռք բերած կետերում մինչև Յերևանի խմբակի հետ կապը վեր սկանգնելը։

Դրա հետ միաժամանակ հրամայվում է զրահագնացքների պետին անմիջապես դիմել Ղամարլուից մինչև Ուլուխաննու զիծը կարգի բերելու գործին, վորից հետո զրահագնացքներն առաջ քաշել բանակի ձախ թևին ապահովելու նպատակով։ Մարտի 14-ի լուս 15-ի զիշերվալնթացքում և 15-ի ցերեկը հակառակորդն ոգտվելով նրան տրամադրված ժամանակից, ճակատում մեծ ռւժեր և կենտրոնացնում, հանելով Յերևանում ունեցած իր ոժանգակները։

Մարտի 15-ի ժամը 15-ին հակառակորդը մեր աջ թևում վճռական հարձակման և անցնում Աղբաշ-Իպակլու, Ղարահամզալուն գրավելու և ձախ զորասլունի թիկունքն անցնելու և նահանջի ճանապարհը կտրելու նպատակով, բայց մեր զորամասերի յեռանդուն հակահարձակմամբ յետ և շպրտվում։

Ժամը 13-ին 3-րդ հրածիգ գնդի վաշտը մարտկոցների կրակի պաշտպանության տակ անցնում է հարձակման և արևմուտքից գործելով Ղարաթլու գյուղը՝ գրավում և այն։

Ժամը 20-ին հակառակորդը մոտ մի գումարտակով (ապրանքատար ավատմորիլի վրա հարմարեցրած) գնդացըին կրակի պաշտպանությամբ հանկարծակի հարձակման և անցնում։ Ավտոմորիլը գործելով խճուղու վրա, անցնում և 3-րդ գնդի պահապան զորամասերի թիկունքը և արնաեղ խուճապ առաջացնելով, ստիպվում է 2-րդ գումարտակին յետ քաշել իմանշալու։ Շնորհիվ իմանշալուից առաջ քաշած ոժանդակի յեռանդուն զործողության, դրությունը վերականգնվում է։

Մարտի 16-ի ժամը 7 ին հակառակորդը մոտ մի վաշտ հետեւակի և 150 ձիավորի ուժով հարձակման և անցնում

Աղբաշի վրա, բայց 2-րդ գնդի հակագրոհով յետ ե շպրտվում Գյառնիչայ գետի մոտերը, Ժամը 15.ին հակառակորդը մինչ մի գումարտակով հետևակի և 100 ձիավորի ուժով կրկին հարձակվում ե Վ.-Աղբաշի վրա, բայց մեր հրետանու լեռանդուն գործողությամբ շպրտվում ե գետի հյուսիս-արևմուտք:

Այլ թեում հաջողություն չունենալով՝ հակառակորդը մեծ ուժերով հարձակման ե անցնում 3-րդ հրածգային գնդի ճակատում, բայց 3-րդ գնդի հակաճարձակումով յետ ե շպրտվում, ըստ վորում այստեղ հակառակորդից զրավում են 2 հրանոթ, 300 արկ, զանազան սիստեմների 70,000 փամփուշտ և «Վիկերս» ու «Մակսիմ» սիստեմի գնդացիրների 700 լցրած ժապավեն:

Մարտի 17-ին ժ. 6-ին հակառակորդը գրոհելով Վ.-Աղբաշը՝ 2 րդ գնդին յետ ե շպրտում Ն.-Աղբաշ Միաժամանակ հակառակորդը հարձակման ե անցնում Ուլուխանլութե և Աղհամդարուի կողմից, բայց 3 րդ հրածիդ գնդի հակաճարձակումով յետ ե շպրտվում: Ժամը 17-ին 2-րդ հրածիդ գունդը՝ ուժեղացրած Բլագովիդովի ձիավոր ջոկատով՝ յետ ե շպրտում հակառակորդին Վ.-Աղբաշ և գրավուժ այն:

Ժամը 14-ին հակառակորդը Յերևանից ուժեղ ուժանդակներ ստանալով՝ ամբողջ ճակատի վրա անցնում ե վճռական հարձակման և կարճատե մարտից հետո կոմմունիստական ջոկատին յետ ե շպրտում Իպակլու: Ոժանդակում գտնվող 3-րդ գնդի գումարտակը հարձակվում ե Հաբաղուի վրա և նրանից գետի ավելի արեելք, Իպակլուից հյուսիս-արևմուտքում գտնվող հակառակորդի թիւկունքն անցնելու նպատակով: Ժամը 15-ն անց 50 րոպե գումարտակը գրավում ե Հաբաղուն և հակառակորդին յետ շպրտում Աղհամդարուից 5 կիլոմետր հյուսիս-արևմուտք գտնվող 475 բարձունքը: Միաժամանակ 3-րդ գնդի 3 րդ գումարտակը հարձակվելով Խարաթլուի վրա, հակառակորդին շպրտում ե Ուլուխանլու:

Իպակլուի շրջանում գտնվող հակառակորդը արջապատվելուց վախենալով՝ սկսում ե անկարգ նահանջել 475 բարձունքը: Հակառակորդի հետապնդումը, չնայած նրա անկարգ նահանջին, կասեցվում է մարտանյութերի պակասության պատճառով*):

Մարտի 17-ի ժամը 20-ին Ուլուխանլուից մեր կողմն ե անցնում 4-րդ հայկական գնդի գումարտակն իր ամբողջական սպառազինումով:

Նկատի ունենալով հակառակորդի հարձակողական մտադրությունը, նրա սպառազինված լինելն ու ուժերի գերազանցությունը՝ բանակի հրամանատարը հրամայում ե դադարեցնել հարձակումը և ամրապնդվել զրաված դիրքերում՝ մինչև կպարզի դրությունը հյուսիսալին ճակատում: XI բանակի Յերևանի խմբակի գործողությունների մասին աեղեկություններ չկային:

Մարտի 18-ին մարտեր չկային, բացառակ 3-րդ գնդի ձախ թեում աեղի ունեցած հրածգությունը: Հակառակորդը նախազգալով Յերևանի խմբակի մոտակա հարձակումը, վճռում ե իր բոլոր ջանքերն ուղղել Համարլուի ճակատը, նպատակ ունենալով ապահովել նահանջի ճանապարհը Յերևանից գետի Դարալազիազ, վորի համար գենք կրելու ընդունակ ամրող բնակչության զորանավաք ե հայտարարում (մինչև 60 տարեկանը), այլև ուժերի մի մասը Յելենովկայի ճակատից տեղափոխում ե Համարլուի ճակատը:

Մարտի 18-ի ժամը 21-ին դաշնակցական բանակի

*) Հատկապես սուսական 3-զծանի հրացաների փամփուշտների սուրկարիք եր զգացվում:

Մարտի 17-ին 3-րդ գնդի հրամանատարի ներկայացրած 20,000 փամփուշտի պահանջին բաց ե թողնվում 1200 փամփուշտ—4-ուկան փամփուշտ հրացաներին (զնդում կար 300 սուսական հրացան, մնացածները «Լերել» և «Ռուսեն» սիստեմի ելին:

հրամանատար գնդապետ Թարխանյանը Ղամարլուի ճա-
կատի զորքերին հետևյալ հրամանն եւ տալիս.—

«Համարյա մի ամիս տեսող անընդհատ մարտից
հետո կարմիրները քանակով նվազել են։ Պարեն
և հրանյութեր չկան։

Պարենի բացակայություն հողի վրա ուժեղ ան-
բավականություն եւ նկատվում զինվորների մեջ։
Ուստի շեն ցանկանում մեռնել Հայաստանի
դաշտերում և հրաժարվում են մեր դեմ պատե-
րազմել։ Յելենովկայի ճակատի գրությունը պա-
հանջում եւ անմիջապես լիկվիդացիայի յենթարկել
կարմիրներին Ղամարլուի ճակատում։ Անհրաժեշտ
ե կապ հաստատել Յապոնի խմբակի հետ (հակա-
ռակորդի Դարալազյազի խմբակի հրամանատար.—
Ա.Բ.) և մաքրել մեր թիկունքը հայկական կարմիր
բանակից, վորպեսզի հնարավորություն ունենանք
բոլոր ուժերը տեղափոխել Յելենովկայի ճակատը։

Հրամայում եմ, — Մարտի 17-ին անցնել հարձակ-
ման և 2 որվա ընթացքում կարմիրներին լիկ-
վիդացիայի յենթարկել Ղամարլուի ճակատում։»

Մարտի 19-ի ժամը 6-ին հակառակորդն ամբողջ ճա-
կատում հարձակման եւ անցնում։

Ժամը 7-ին հակառակորդը գրավելով 5271 բար-
ձունքի հարավալին լանջերը և կիսակայարանը՝ ձըգ-
տում եւ անցնել 2-րդ հրածիդ գնդի թիկունքը, վոր-
պեսզի գրավելով Դվին—Քյուրղենդ—Ախունդ—Բզո-
վանդը՝ դուրս գա Ղամարլու, կտրելով կարմիրներին Շի-
րազուից։ 2-րդ հրածիդ գունդը հակառակորդի գերազանց
ուժերի ճնշման տակ թողնելով Աղբաշն՝ սկսում եւ անկարգ
նահանջել Արտաշար—Իպակլու, ձախից բաց թողնելով
կոմմունիստական ջոկատի թեր։ Կոմմունիստական ջոկա-
տի հրամանատար ընկ։ Յանուշեսկին վախենալով, վոր

հակառակորդն իր թիկունքը կանցնի աջից, հրամայում է
ջոկատին յետ քաշվել Դոխկուգ։ 3-րդ հրածիդ գնդի հման-
շալուից առաջ քոշած 2 վաշտերին, գումարտակի հրա-
մանատար ընկ։ Տերեզանովի հրամանատարությամբ յե-
ռակի հարձակումից հետո, հարձակում, վոր վերջանում է
ձեռնամարտով, — հաջողվում եւ նորից գրավել հպակլու—
Աղբաշը։

Ժամը 12-ին հակառակորդը նոր ոժանդակ ուժեր
ստանալով՝ անցնում եւ հարձակման և 2-րդ հրածիդ գնդին
ու կոմմունիստական ջոկատին իրենց գրաված դիրքերից
գույք շպրտելով գեպի Գյառնիչայ գետի վրա գտնվող
յերկաթուղագծի կամուրջը՝ ձգտում եւ գրավել այն։ 3-րդ
գնդի տեղամասում հակառակորդը գերազանց ուժերով մի-
քանի անգամ զրոնում եւ Խարաթլուն, սակայն անհետե-
վանք։ Ժամը 13-ին հակառակորդին հաջողվում եւ յետ
շպրտել 3-րդ գնդի ձախ թեր, սակայն գնդի ստացած
ոժանդակները վերականգնում են զրոնթյունը։ 3-րդ գնդի
ձախ թերում գործող «Մուսայելյան» զրահագնացքն ընդ-
հուպ մոտենում եւ հակառակորդին և այն մոմենտին, յերբ
գնդի մասերն անցնում են գրոհի, նա սկսում եւ 200 բազ
տարածության վրա գնդացըրային ուժեղ կրակով գնդա-
կոծել հակառակորդին։ Հակառակորդը չդիմանալով 3-րդ
գնդի հակառակորդին, վորն սժանդակվում եր զրահագնացքի
և չ78-րդ գնդի գումարտակի կողմից, փախուստի յեւ մատ-
նը վում, թողնելով մինչև 130 հոգի սպանված և վիրավոր։

Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր խորը ձյան և
ցրտերի պատճառով XI բանակի զորամասերը կանգ
առնելով Սխտալի շրջանում՝ հետաձգել ելին առաջխաղա-
ցումը գեպի Յերևան, այլ և այն, վոր հայկական կարմիր
զորամասերը չունելին բավարար քանակությամբ պարեն
և հրանյութեր, հայկական կարմիր բանակի հրամանատա-
րությունը վճռում եւ համաձայնեցված գործողություններ
կատարելու նպատակով դադարեցնել հարձակումը մի առ-

ժամանակ, մինչև կվերականգնվի կապը XI բանակի զորամասերի հետ։ Այդ առթիվ կարգադրվում ե զորքերին յետ քաշվել և նորից գրավել (արդեն քաջ ծանոթ դիրքերը) Ներքին - կարաբեկլյառ - Բեռլք - Վեղի - Յինգիջա - Խորվիրապ դիմք։

Մարտի 19-ի մարտում 2-րդ հայկական գունդը հակառակորդին թողնում ե 2 հրանոթ։

* * *

Յերեանի վրա յերկրորդ անգամ հարձակում կատարելուց և դեղի հին դիրքերը յետ նահանջելուց հետո բանակի հրամանատարը վճռում ե անցնել պաշտպանության։ Հաշվի առնելով նախորդ մարտերի փորձը, զորքերի դեկավարժան և յեռնային պատերազմի պայմաններում կապի գժվարությունը, գնդերին հրահանգ ե տրվում պաշտպանության կազմակերպման մասին, պաշտպանության և հարձակման ժամանակվա կապի կազմակերպելու մասին, վաշտիքանակական կազմի փոփոխության մասին, հասցնելով այն 100 սկինի, վորովինեան մարտում վաշտերի հրամանատարների համար անհնար եր դեկավարել վաշտերի գործողությունները յեռնային պատերազմի պայմաններում։ Վորպես կապի միակ միջոց հանձնարարվո մ եր - պաշտպանության ժամանակ՝ տեխնիկական և լրատարների կապ, հարձակման ժամանակ՝ ձիավորների և լրատարների։ Սահմանված ե, վորպես կանոն, հարձակման ժամանակ կապի համար տալ գումարտակների պետերին Յական ձիավոր, վաշտերին - Յական, տեխնիկական կապ ունենալ միայն մինչև գնդերի շտաբները։

Կրակի միակ հզոր միջոց յեռնային պատերազմի պայմաններում համարվում եր հաստոցավոր գնդացիրների կրակը։

Մատնանշվում եր, թե պաշտպանությունը պետք է կազմակերպված լինի բացառապես գնդացրային կրակով։

Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, վոր հրետանին ի վիճակի չի յեռնային տեղանքի պարագաներում գործոն աջակցություն ցույց տալ իր հետեակին (վորովինեան տեղանքներում նա յետ ե մնում հետեակից և հաճախ առիպված ե լինուն դադարեցնել հրաձգությունը, վորովին չկրակի իր հետեակի վրա, չորհիվ հետեակի արագ առաջշարժման և կարճ հեռակայության), անհրաժեշտ ե համարվում հարձակման ժամանակ բոլոր հաշիվները կառուցել գնդացրային կրակի վրա։ Առանձնապես հանձնարարվում ելին «Կոլտ» և «Վիկկերս» սիստեմի գնդացիրները, չորհիվ նրանց թեթևության (ձեռքի գընդացիրներ սպառազինման մեջ չկային)։ Հըետանու վրա ինդիր եր զրվում կրակել նեղ յեռնային քերծերով և ինդիր եր զրվում կրակել նեղ յեռնային քերծերով և կառակորդի վրա ուժեղ բարոյական ներգործություն ե կատարում։ Լեռնային պատերազմի պայմաններում հազիվ թե հնարավոր լինի կարծեր, թե հրետանու կրակով կարելի լե ջախջախել հակառակորդի կենդանի ուժերը։ Գերադասությունը պետք ե տրվի զրասաների վրա բարձած յեռնային հրանոթներին, վորը հնարավորություն ե տալիս ժամանակին ոգնության համար հետեակին։ Վորպես միջոց հետախուզության, թեերի ապահովման, հետապնդման և հակառակորդի թիկունքում ու թեգերում գործելու համար՝ մեծ նշանակություն ե ձեռք բերել զրական հեծելազորը¹⁾։

Մարտի 22-ի ժամը 10-ի հակառակորդը հարձակման և անցնում Քիչուկ - Ենդի - Խորվիրապ ճակատում է գուրս վանելով Յական ձիավոր հայկական գնդի գումարտակը՝ գրավում ե Խորվիրապը։ Շիրազություց առաջ քաշած Յական

1) Գնդերի հրամանատարների նախաձեռնությամբ լուրաքանչուր գունդ ուներ մինչև 70 թրի համար ձիավոր հետախուզություն, ձիերը խովել ելին հակառակորդից։

հրածիգ գնդի ոժանդակ գումարտակը հարձակվում է Դարդալուի վրա և շժամյա մարտից հետո զուրս զալիս հակառակորդի թիկունքը։ Հակառակորդը շրջապատված զգաւով իրեն՝ անհարդ նահանջում է Դարդալու՝ թողնելով շ գնդացիր, 94 հրացան, 10.000 փամփուշտ, գնդացը 106 լցրած ժապավեն և մոտ 150 հոգի սպանված ու վիրավոր։

Միաժամանակ հակառակորդը հարձակման է անցնում Ն.-Զանախչի-Ելլափինի տեղամասում, նպատակ ունենալով կապ հաստատել խմբակետ Յապոնի ջոկատի հետ և միացյալ ուժերով հարձակվելով Բաշնորաշենի վրա՝ կտրել կարմիրների հաղորդակցության կապը Նախիջևանի հետ։

«Կարմիր տաբորի» հակահարձակումով հակառակորդը յետ և շպրտվում Զենջիռու, Ելլափին։

Բաշնակցական բանակի հրամանատար գնդապետ Թարխանյանը հաշվի առնելով կարմիրների հյուսիսային խմբակի կողմից սպառնացող վտանգը, վճռում է մարտի 25-ի լուսաբացըն վճռական հարձակման անցնել Բեռլուգի-Զենջիռու—Արփա ճակատի վրա, կարմիրներին այդ ճակատում լիկվիդացիայի յենթարկելու, Յապոնի հետ կապ հաստատելու և Դարձագլազ նահանջելու համար թիկունքն ապահովելու նպատակով։ Հյուսիսային ճակատում ուղևական զրամաների արագ առաջխաղացումն ստիպում է գնդապետ Թարխանյանին հրաժարվել այդ հարձակումից։ Մենշևիկյան Վրաստանն ամբողջապես խորհրդայնացնելուց հետո ԽI կարմիր բանակի հրամանատարը վճռում է վճռական հարձակման անցնել հյուսիսային ճակատում և աշակել հայկական կարմիր բանակի զործողություններին։

Մարտի 25-ին հյուսիսային խմբակը 54-րդ, 60-րդ հետևակալին բրիգադների, 18-րդ և 20-րդ հեծյալ գնդերի և Դիլիջանի, Ղարաբիլիսայի և Նոր-Բայազետի գավառի կոմմունիստներից կազմված կոմմունիստական ջոկատի կազմով ոպերատիվ գծով յենթարկված 20-րդ դիվիզիայի հրա-

մանատար ընկ. Վելիկանովին՝ անցնում է հարձակման ամբողջ ճակատի վրա։ Գնդապետ Թարխանյանը, հաշվի առնելով դաշնակցական բանակի անձարակությունը դիմագրելու հյուսիսային խմբակին, հաշվի առնելով թիկունքից սպառնացող հայկական կարմիր բանակի վտանգը՝ հյուսիսային ճակատում «Ճարտի 31-ի մարտում կրած պարտությունից հետո նահանջում է Դարձագլազ։ Հակառակորդի նահանջող զորքերը և բնակչությունը մինչև 10,000 հետևակի և 1000 ձիավորի ուժով, ապրիլի մեկին անցնում է հարձակման Բեռլուգ-Վեդիի վրա, նպատակ ունենալով ապահովել դաշնակների նահանջը դեպի Դարձագլազ։ Մարտը շարունակվում է ժամը 4-ից մինչև ժամը 16-ը, սակայն դաշնակներին չի հաջողվում գրավել Բեռլուգ-Վեդին։ Ժամը 15-ին 3-րդ հայկական գնդի մի վաշտը հարձակման է անցնում և հակառակորդի համար անկատելի կերպով, ոգտագելով տեղանքից (ոգտագործվում է տեղանքին լավ ծանոթ ուղեցուցիչներից մեկը), գուրս ե զալիս հակառակորդի թիկունքը և իր կրակով ստիպում հակառակորդին նահանջել Բաշգյառնի՝ թողնելով մոտ 20 յերկանիվ սաղը՝ բարձած փամփուշտներով և յերթային 5 խոհանոց։

3-րդ գնդի հրամանատարը ժամը 16-ին գեկուցում է բրիգադի հրամանատարին (հյուսիսապետիր № 104, 1/V), թե հակառակորդը հյուսիսային ճակատում պարտություն կրելով նահանջում է, և այսորվա նրա հարձակումը բղխել ե դաշնակների դեպի Դարձագլազ նահանջող զորքերի լեռխաղացությունն ապահովելու անհրաժեշտությունից, և խնդրում է թույլ տալ անմիջապես անցնել հարձակման և կտրելով դաշնակների Դարձագլազ նահանջելու ճանապարհը, զցել նրանց հարձակվող հյուսիսային խմբակի հարվածի տակ և վոչնչացնել։

3-րդ գնդի հրամանատարի գեկուցման հետ միաժամանակ բանակի շտաբում XI բանակի շտաբից ու-

դիոքիր ե ստացվում, թե հյուսիսակն խմբակի զորամասերը զրավել են Ալիքուչակ, Նովրուզը, Նովոնիկոլայեկան և առաջանում են գետի Աշտարակ, Յերևան: Բանակի հրամանատարն ապրիլի 1-ի յերեկոյան մոտ հրաման և արձակում հարձակման անցնելու մասին, սակայն, հաշվի առնելով հակառակորդի վճռական հարձակումը ապրիլի 1-ի առավոտվանից սկսած, հրանյութերի և պարենի պահու, 4 ժամ հետո փոխում ե հարձակման սասին տված հրամանը և դրանով հնարավորություն տալիս հակառակորդին լիակատար կարգով նահանջել Դարալազյաղ, իր հետ վերցնելով մեծ քանակությամբ հրանյութեր:

Բանակի հրամանատարն ապրիլի 1-ին գաշնակների կողմից Բեռլը-Վեդիի վրա կատարած հարձակումը գնահատել ե այնպես, վոր իբր Յապոնի ուղարկած ոժանդակութերը վրա լեն հասել ե հակառակորդը ձգտում ե անմիջապես լիկվիդացիայի լենթարկել հայկական կարմիր բանակը և մաքրել գաշնակների թիկունքը:

Ապրիլի 2-ին ուղիոյի միջոցով լուր ե ստացվում հյուսիսային խմբակի կողմից Յերևանը գրավելու մասին:

Ապրիլի 2-ի գիշերվա ժամը 12-ին բանակի հրամանատարը հրաման և տալիս՝ ապրիլի 3-ի լուսաբացին հարձակման անցնել յերկու զորայունով:

Աջ գորայունին 3-րդ հայկական գնդի կազմով, մի գումարտակը թողնելով Բեռլը-Վեդիում, Դախնաղ—Կարեքելլասի կողմից ապահովելու համար, մնացած զորամասերով մաքրել հակառակորդից Բողբուրունի գոները և Աղդամլարի ճանապարհով շարժվել Աղբաշ դյուդի վրա, վորտեղ և հաստատ ամրանալ և սպասել ցուցումների հետագայի շարժման մասին:

Զախ գորայունին (բանակի մնացած զորամասերը) հարձակվել Յերևանի խճուղով, ընկ. Յանուշեսկու ջոկատն, առանց մի վաշտի, ունենալով ոժանդակում (մի վաշտը թողնվել եր Ալիմահմեդ գյուղում) Արաքս գետի

ավը պահպանելու համար): Զորասպուների զորամասերն առանց հակառակորդի կողմից դիմաղրության հանդիպելու (հակառակորդը գիշերը լետ եր քաշվել)՝ ապրիլի 3-ի յերեկոյան դեմ հասնում են Նորագավիթ գյուղը, վորտեղ և տեղավորվում են գիշերանցի համար, իսկ ապրիլի 4-ի առավոտյան խճուղով ուղղվելով դեպի Յերևան՝ ժամը 11-ի մոտերը հասնում են Յերեանին, վորտեղ հանդիսավոր ընդունվում են 20-րդ դիվիզիայի զորամասերի և Յերևանի բնակչության կողմից:

Յերևան մտնելուց հետո հայկական կարմիր բանակը վերակազմվում է, գառնում առանձին հետևակային բրիգադ, վորը յենթարկվում է 20-րդ գիշիգիալի հրամանատարը ընկ. Վելիկասովին: Բրիգադի զորամասերին տրվում է 2-որյա արձակուրդ:

Այդպիսով, բանակի հրամանատարի անվճռականությունը և վատ կողմորոշումը, վորպես մարտի ղեկավարությունից խուսափելու հետևանք, բանակի հրամանատարին հասցրին պարագայի սխալ գնահատության: Ունենալով 3-րդ գնդի հրամանատարի գեկուցումը գաշնակների ստիպողական հարձակման մասին, վորը (հարձակումը) նպատակ ուներ ապահովել Յերևանի պարզումը և ի հաստատումն զրան Խ բանակի շտաբի ուղիութիրը հյուսիսային խմբակի կողմից Նովոնիկոլայեկայի զրավման մասին՝ բանակի հրամանատարը վերացնում է ժամանակին տրված հրամանը հարձակման մասին և գրանցած գաշնակներին լիակատար կարգով Դարալաղյազ նահանջելու համար անհրաժեշտ ժամանակ տրամադրում: Դաշնակների դորբերը նահանջում են անվտանգ, իրենց հետ վերցնելով մեծ քանակությամբ հրանյութեր, վորոնց կարիքն այնքան մեծ եր հայկական կարմիր բանակի զորամասերի համար:

XI. ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԹԻԿՈՒՆՔԻ ԿԱԶՄՈՒ-
ԹՅՈՒՆԸ ՂԱՄՄՐԼՈՒ ՆԱՀԱՆՁԵԼՈՒՑ ՀԵՏՈ

(Փետրվարի 18-ից մինչև ապրիլի 4-ը)

Կապի միջոցներով բանակն ապահովված եր*):

Պաշտպանողական գործողությունների դեպքում զընդերն ունեցին տեխնիկական կապ մինչև գասակները ներառյալ: Կապն այստեղ աշխատում եր ընդհատումներով: Հարձակման ժամանակ տեխնիկական կապը վատ եր աշխատում: Բանակն ապահովված չեր պարենով: Նահանջի ժամանակ հաջողվում ե մեզ հետ վերցնել 8 վագոն ցորեն: Միսը հայթալիթվում եր տեղում, գնման ճանապարհով: 44 որ շարունակ որական պետք եր կերակրել 6,700 մարդ: Բանակի հրամանատարի հրամանով սահմանվում ե պարենի բաշխման նորմա: Շարացին զորամասերի կամիր բանակայիններին և հրամկազմին որական տրվում եր $1\frac{1}{2}$ գրվ. հաց և $1\frac{1}{2}$ գրվ. միս: Բանակի շտաբին և թիկունքային այլ հաստատություններին մեկ գրվ. հաց և $1\frac{1}{2}$ գրվ. միս: Հրամկազմի և կարմիր-բանակայինների ընտանիքներին $1\frac{1}{2}$ գրվ. հաց: Հիվանդներին և վիրափորներին $1\frac{1}{2}$ գրվ. հացից և $1\frac{1}{2}$ գրվանքա մսից բացի տրվում եր նաև թե՛ անգլիական խառացրած կաթով; (շաբարի փոխարեն). այլ մթերքներ բանակը չեր ստանում: Մարտի 15-ից իջեցվում ե շարացին զորամասերի համար մինչև $1\frac{1}{2}$ գրվանքա: Մարտի 25-ին թիգլիսից սափառնակով վոսկի լե ուղարկվում:

Մարտի 25-ից հետո բանակը մատակարարվում ե Նախիջևանում և Պարսկաստանում կատարած գնումների միջոցով: Հրանյութերով բանակն ապահովված չեր: Նա-

*) Յուրաքանչյուր գնդում կար կոմանդային կապ, 4 փոխարկիչ՝ 9-ական համարով յուրաքանչյուրը, 28 ֆանիկական հեռախոս, հեռախոսալար և ձիավոր լրատարներ: Կապով ավելի պակաս չափով եր ապահովված կոմմունիստական ջոկատը:

հանջելիս հաջողվել եր մեզ հետ վերցնել 3 վագոն հրանյութեր, վորոնք բարձրվել ելին Դարաքիլիսա ուղարկելու համար: Փամփուշտների, ուղարկան 3-գծանի հրացանների սուր կարիք եր զգացվում նահանջի առաջին իսկ որից: Ֆամփուշտներ «Բոսսե» և «Լեբել» հրացանների և «Վիկկերս» գնդացրի համար մինչև մարտի 12-ը կարին բավականաչափ:

Մարտի 12-ից պակասություն եր զգացվում, վոր մասամբ լրացվում եր հակառակորդից վերցրած ավարից: Դեղորայք ունելինք բավականաչափ բանակային հիվանդանոցում, վորտեղ և ուղարկվում ելին հիվանդներն ու վիրավորները: Հետազայում հիվանդներին ու վիրավորներին ուղարկում ելին նախիջևան: Գնդերը դեղորայքով ապահովված չելին: Բանակի պարենի և հրանյութերի հայթայթման վիճակի մասին պարզ պատկերացում տալու համար մեջ ենք բերում Հայաստանի ուղղմժողկումի 1921 թվի մարտի 14-ին ընկ. Որժութիւններին ուղղված ուղիողիրը: —

«Այսոր առավոտան անցնում ենք վերջին և վճռական հարձակման Յերևանը գրավելու համար: Պարենի և հրանյութերի բացակառությունը մազանից այդ և պահանջում:

Անհրաժեշտ ե ոգնություն հյուսիսային խմբակի կողմից, ալժմ իսկ, այլապես մենք պարտություն կկրենք»:

XII. ՀԱՅԿԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ
ԴԱՐԱԱԳՅԱԶԻ ՎՐԱ

Ապրիլի 12-ին հայկական բրիգադը, ուժեղացրած հայկական հեծյալ գնդի վաշտով և ընկ. Աբաս-Ղուլի-բեկի «կարմիր տարրության» հրաման և ստանում ապրիլի 14-ի լուսաբացին հարձակվել Դարալագյազի վրա և լիկվիդացիայի լենթարկել դաշնակցական բանակի մասցորդները:

Բրիգադի հրամանատարը հրաման ստանալով՝ վճռում ե հարձակվել յերկու զորասյուներով՝ գլխավոր հարվածը հասցնելով իր աջ թերով:

Այ զորասյունն իր կազմում ունենալով 3 բդ հայկական գունդը, «կարմիր տաքորը», 1-ին հեծալ գնդի մէ վաշտը, 2-րդ հոբիցալին մարտկոցը, իսկ հետագայում ուժեղացվում ե 180-րդ գնդով (պետք եր 3-րդ գնդի հրամանատար ընկ). Բաղդասարյանը), խնդիր ուներ ապրիլի 14-ին լուսը բացվելուն պես նորաշեն-Քեշիշքենդ խճուղով հարձակվել Արփայի վրա, աջից Խաչիկ գյուղի կողմից ծածկվելով մի վաշտով, ապրիլի 15-ին զրավել Քեշիշքենդը և վոչնչացնել հակառակորդի կենդանի ուժերի մնաց-րդները:

Զախ զորասյունն իր կազմում ունենալով 2-րդ հայկական գունդը, խնդիր ուներ հարձակվելու Զենջիռու-Չիվա-Մըսդ-Այնաձորի վրա և աջակցել աջ զորասյունին զրավել Քեշիշքենդը: Այ զորասյունի զորամասերը ժամը 16-ի մոտերը զրացվում են Արփան և ապրիլի 15-ի լուսաբացին, հարձակման անցնելով, գրավում են Այնաձորը: Զախ թե՛ն ապահոված չլինելու, այս 2-րդ գունդը 10 ժամ ուշանալու հետևանքով, աջ զորասյունի հարձակումը հետաձգվում է մինչև ժամը 15 ը: Ժամը 14-ն անց 30 րոպե 2 րդ հայկական գունդն իր առաջավոր զորասյուներով մտնում ե Այնաձոր: Ժամը 16-ին բրիգադը հարձակվում է Քեշիշքենդի վրա և համառ մարտերից հետո, մարտեր, վոր 3-րդ հայկական գնդի 2-րդ գումարտաեի տեղամասում վեր են ածվում ձեռնամարտի, զրացվում ե Ղոյթուլը: Քեշիշքենդին տիրելու համար մդած մարտը շարունակվում է մինչև ժամը 24-ը: Ժամը 24 ից հակառակորդն ոգտվելով հորդ անձրեից և գիշերալին խավարից՝ յետե քաշվում Փոր-Փաշալու-Կնդեվազ-Հաջի-բլյակ գիծը, վորտեղ և ամրանում ե: Ապրիլի 15-ից մինչև հունիսի 15-ը ուազմական գործողություններ տեղի չեն ունե-

նում: Միայն հրաձգությունն եր տարվում հետախույզների միջև:

Յերեանի և Դարալագլազի շրջաններում լիկվիդացի-այի յենթարկելով աղստամբական շարժումները, 1921 թվի ապրիլին հրամանատարության և Հայաստանի խորհրդականին իշխանության ուշադրությունն ուղղված եր Զանգեզուր, վորտեղ Յերեանից դուրս քշած «Հայաստանի փրկության կոմիտեի» ղեկավարությամբ «կենտրոնացել ելին խորհրդական իշխանությունից դժգոհ տարրերը»:

Զանգեզուրում կազմվում ե արագես կոչված «Լեռնային Հայաստանի» կառավարություն: «Լեռնային Հայաստանի» կառավարության և նրա զորքերի գլուխ ե կանգնում խմբապետ Նժղեհը (բոլգարական բանակի նախկին սպա):

Զնայած նրան, վոր արդեն ապրիլի վերջին ուռսական և հայկական կարմիր զորամասերը կենտրոնանում են Զանգեզուրի սահմաններում, հարձակման մասին արված հրամանը հետաձգվում է: Մեր զլխավոր նպատակն եր ուզմական գործողությունների չդիմել, գործողություններ, վորի հետևանքով պիտի տուժեր Զանգեզուրի խաղաղ բնակչությունը, այլ ընդհանուր լեզու գտնել և Զանգեզուրի հարցը լուծել խաղաղ ճանապարհով:

Մայիսի 20-ին Խորհրդական Հայաստանի կառավարության և «Լեռնային Հայաստանի» կառավարության միջև սկսվում են խաղաղ բանակցություններ: Նախնական խորհրդակցությունների ժամանակ թվում եր, թե յերկու կողմերն ել ընդհանուր լեզու յեն գտել Զանգեզուրի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Կողմերի ներկայացուցիչների վերջնական խորհրդակցությունը պետք ե կայանար հունիսի 18 ին Հերերում: Հայաստանի խորհրդական կառավարությունը հաշվի առնելով Զանգեզուրի ինդրի խաղաղ ճանապարհով լուծելու ընթացքը, գյուղական տնտեսության մեջ բանվորական

Ճեռքերի բացակայությունը և բերքի հավաքման անհրաժեշտությունը, վորոշում և մեծահասակների մասնակի զորացրում կատարել: Այդպիսով տուն և արձակվում ըրիգադի կարմիր բանակային կազմի 50 տոկ, վորը և զգալիորեն ազդում է կարմիր զորամասերի մարտունակության վրա:

XIII. ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԴԱՐԱԼԱԳՅԱՋԻ ՎՐԱ

Դաշնակների բա- Պարզելով Դարալագյազի ճակատի նակի երամանատար թուլացումը և XI կարմիր բանակի նժգեհի վճիռը մասների կենտրոնացումը Զանգեզուրի սահմաններում և հաշվի առնելով, վոր Զանգեզուրի հարցի անբարենպատ լուծում ստանալու դեպքում հունիսի 20-ին կարմիրներն անմիջապես կանցնեն հարձակման, Նժգեհը վճուռմ և Դարաբաղ—Զանգեզուր ճակատում պաշտպանվելով, հարձակման անցնել Դարալագյազի ճակատում և կործանել հայկական բրիգադը, վորից հետո նա կարող կլինի Հայաստանի խորհրդային կառավարությանը թելագրել «Լեռնային Հայաստանին» ձեռնուր պայմանները (Դարալագյազի խնդիրը):

Դարալագյազի ճակատում հրամանատարությունը հանձնվում է գնդապետ Թարխանյանին և Յապոնին: Նրանք վճուռմ են 3 զորայուներով հարձակվել, բրիգադը աքցանի մեջ առնել, Արփա գյուղի մոտ կարել Արփաչայ գետի վրայի կամուրջը և վոչնչացնել բրիգադը:

. Հունիսի 15-ին հակառակորդը հարձակման և անցնում ամբողջ ճակատի վրա: 2-րդ հայկական գնդի հրամանատարը (2-րդ հայկական բրիգադի նախկին հրամանատարը) գանվելով նախորդ մարտերի ուժեղ տպավորության տակ և գնդի թուլացման հետևանքով հաջողություն ձեռք բերելու հույս չունենալով, հունիսի 15-ի լուսաբացին թողնելով գունդն առանց զեկավարության, ինքը

ճիավոր հետախույզների զորախմբի հետ միասին նահանջում և Քեշիշյանդ: Գունդը չդիմանալով հակառակորդի ուժեղ ճակատում ակսում և անկարգ նահանջել: Ճակատ յեկած զինկոմին հաջողվում և կարգի բերել գունդը, սակայն հարձակումը կասեցնել չի հաջողվում: Գունդն սկըսում է կարգով նահանջել Գնդեվազ—Խաչիկ և յետ քաշվել նախինի կողմը՝ թողնելով բաց 3-րդ հայկական գնդի թեր, 3-րդ հայկական գունդը յերկու թերից ել շրջանցված լինելով, ստիպված յետ և քաշվում Արփաչայ արևմտյան ավը և ամրանում Անաձորից արևելք չայր գանգուռնը, իր աջ թերում ունենալով 1-ին գանգող բարձունքում, իր աջ թերում ունենալով 1-ին հայկական գունդը (Արփաչայ գետի և Ղոյթուլի տեղամասում):

Հունիսի 17-ին հակառակորդն առաջապահ զորամաս թողնելով 1-ին և 3-րդ գնդերի զիմաց՝ իր հեծելազորով շրջանցում և բրիգադի յերկու թերը: Հունիսի 15-ից 2-րդ հայկական գնդի հետ կապ չկար: Հակառակորդը Արփա գյուղի մոտ իր արամագրության տակ ուներ Արփաչայ գետի վրա ընկնող կամուրջը, այլև տեղական գյուղացիներից կազմված հեծելազոր, վորը չափազանց հեշտությամբ անցնում եր Արփաչայ գետը: Գետն անանցանելի յեր՝ կարմիրների համար: Կարմիրները փորձում են անցնել Արփաչայ գետը, սակայն կորցնում են 9 հոգի, վորոնք խեղդվում են, և անցնել չեն կարողանում: Ժամը 16-ին հակառակորդը Այարի և Անաձորի կողմից մտնում է բրիգադի թիկունքը: Գնդերը, վախենալով շրջապատվելուց և Արփա գյուղի մոտ ունենալով միակ գետանցքը Արփաչայն անցնելու համար՝ սկսում են նահանջել զեպի Արփա:

3-րդ հայկական գնդի 1-ին գումարտակը նահանջում է Վայականը, իսկ մյուս գումարտակները 50 գերի և մի մարտկոց հակառակորդին թողնելով 1-ին հայկական գնդի կովել չկամենալու շնորհիվ (գունդը կազմված եր գասալիքներից): Նահանջում են Բաշնորաշեն: 1-ին հայկա-

կան գունդը լիովին հանձնվում ե հակառակորդին։ Դաշտ-նակները գերելով 1-ին գունդը՝ սկսում են հանել հրամ-կազմի և բանակայինների շորերը և գնդակահարել կոմ-մանիստներին (գնդի հրամանատարը, կոմիսարը և միքանի կուսակցականներ գնդակահարվում են տեղնուաեղը), միե-նույն ժամանակ մոռացության տալիս Արքա գյուղի մոտ գտնվող կամուրջի գրավման անհրաժեշտությունը, վորով կարող ելին բրիգադը կտրել թիկունքից և ջախջախել վերջնականապես։ Սակայն այդ հանգամանքն աշքաթող ե արվում հակառակորդի կողմից, վորով և հնարավորություն ե տրվում 3-րդ գնդի յերկու գումարտակներին ազատվել շրջապատումից։ Մարտկոցի կարմիր-բանակա-յինները հրանոթները փրկելու հնարավորություն չունե-նալով՝ թողնում են մարտկոցը և նահանջում Բաշնորաշեն, իրենց հետ վերցնելով մարտկոցի բոլոր ձիերը։ Բրիգադի ձախ թեսում գործող «կարմիր տաքորը» Ուլուկի կողմից շրջապատվում ե տեղակալ Նավասարդյանի ձիավոր ջո-կատով, նահանջում ե Յուլիսարի-Դանդիկ, թողնելով շատ սպանվածներ ու վիրավորներ։

Այդպիսով, Նժդեհը գտնելով, վոր խորհրդային կառա-վարությունը չի կարող բավարարել «Եւուսային Հայաստանի» կառավարության պահանջը և ստիպված պիտի լինի Զան-գեղուրի հարցը լուծել զենքի ուժով, վճռում ե հարվածել Դարալազագում, շարքից հանել հայկական զորամասերը, վորից հետո իր ամբողջ ուժերը փոխադրելով Դարաբաղ — Զանգեղուր ճակատը՝ Հայաստանի խորհրդային կառավարությանը կթելադրի իր պահանջները։

Խմբակետները չեն իրագործում Արքա գյուղի մոտ գտնված կամուրջը կտրելու մասին տրված հրամանը, տարվում են գերիներով և կոմմունիստների գնդակահարությամբ, վորով և բացառվում ե բրիգադի վերջնական ջախ-ջախման հնարավորությունը։

2-րդ գնդի հրամանատարի փախուստը ճակատիցը

փախուստ, վոր գունդը ճակատում թողնում ե առանց ղեկավարության։ 1-ին հայկական գունդը դասալիքներով հաւալրելու հանգամանքները, բրիգադի կրած անհաջողության հիմնական պատճառներն ելին հանդիսանում։

Ղեկավարություն չի յեղել։ Բրիգադի հրամանատարը մարտը ղեկավարում եր շտաբից, վորը ուղամի դաշտից 80 վերստի վրա յեր գտնվում։

XIV. ԿԱՐՄԻՐՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԶԱՆԳԵԶՈՒԹԻՒՆ ՎՐՄ ՅԵՎ ԴԱՅՆԱԿՆԵՐԻ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

Դարալազագի վրա կատարած հակառակորդի հարձակումը հարկադրում ե խորհրդային կառավարությանը արագացնել Զանգեղուրի վրա հարձակվելու հարցը։

Հունիսի 20-ի, առանձին կովկասյան բանակի հրա-մանատարը հրաման է արձակում ընդհանուր հարձակման անցնել 4 կողմից։ Գլխավոր հարվածը հասցնում է Գորիս—Զանգեղուր—Ղարաբաղի ընկ։ Տողորսկու խմբակը, վորի կազմի մեջ մտնում ելին 82-րդ հրաձագային բրիգադը, 124-րդ առանձին բրիգադը և 108-րդ հեծգունդը՝ ընդա-մենը 5175 մարտիկ, 400 թուր, 12 հրանոթ, 97 գնդացիր և 7 սավանակ։

Յերեսանի խմբակին հրամացվում ե աջակցել Ղարա-բաղ—Զանգեղուրի խմբակին նրա վրա դրած խնդրի իրա-գործման մեջ, կտրել Մեղրուց Պարսկաստան տանող ճանապարհը։ Յերեսանի խմբակը հարձակման համար բա-ժանվում ե յերեք հարվածային ջոկատների¹⁾։

1) ա) Աջ մարտական տեղամասը (177 և 178-րդ հրաձիգ գնդերի և 3-րդ հայկական լեռնային մարտկոցի կազմով, ընդամենը 1207 սկին, 2 հրա-նոթ, 44 գնդացիր) պետք է հարձակվեր Մեղրու վրա և կտրել Մեղրուց Պար-սկաստան տանող ճանապարհը բ) Միջին, մարտական տեղամասը (180-րդ հրա-ձիգ գնդի, 4-րդ հայկական հրաձիգ գնդի, 1-ին հայկական հեծգունդի, 9-րդ հայկական լեռնային մարտկոցի²⁾ և հայկական հոբեցային մարտկոցի կազ-մով, ընդամենը 1526 սկին, 6 հրանոթ, 79 գնդացիր, 623 թուր), հարձակվելու յեր Անդելառութի վրա։ գ) Զար մարտական տեղամասը (2-րդ և 3-րդ հայկական գնդերի, «կարմիր տաքոր»։ կազմով, ընդամենը 128 սկին, 27 գնդացիր և պրահագնացը) հարձակվելու յեր Քեշենող—Բազարչայի վրա։

Բացի այդ, Նոր-Բայազետի կողմից պետք ե հարձակվելին 3-րդ հայկական գնդի մի գումարտակը՝ 140 սվինի, 3 գնդացըի կազմավ, և 20-րդ հեծունությունը (223 թուր) Սելիմի կիրճի և Քեշիշբենդի ուղղությամբ (այդ ժամանակ Սելիմի կիրճը գրավված եր հակառակորդի կողմից), վորոտեղ և պետք ե միանալին բրիգադին: Ընդամենը կարմիւների կողմից հարձակվում ելին 9035 սվին, 1236 թուր, 20 հրանոթ, 247 գնդացըիր, 2 զրահագնացք և 7 սափառնակ:

Հակառակորդի ուժերը.—Զանգեզուր—Ղարաբաղի խըմբակի ճակատում հակառակորդի կողմից գտւրս ե հանվում 2000 սվին, 800 թուր, 3 հրանոթ, 65 գնդացիր: Աջ մարտական տեղամասի Յերևանի խմբակի դեմ գործում ելին ընդամենը 2300 սվին. 1250 թուր և 16 գնդացիր:

Միջին մարտական տեղամասի դեմ Միսիանի գումարտակը և խմբապետ Սամվելի ջոկատը, ընդամենը 800 սվին, 160 թուր և 3 գնդացիր:

Զախ մարտական տեղամասի դեմ գործում ելին գնդապետ Սարգսյանի ջոկատը, խմբապետ Խնկոյի ջոկատը, տեղակալ Նավասարդյանի ձիավոր ջոկատը, Յերևանի, Դյոքչայի, Դարալապյազի և Ղրիբուլյախի գումարտակները, ընդամենը 1700 սվին, 12 գնդացիր, 2 հրանոթ և 250 թուր: Ընդամենը Զանգեզուր—Ղարաբաղի և Յերևանի խմբակների դեմ հակառակորդն ուներ 6800 սվին, 2460 թուր, 6 հրանոթ և 96 գնդացիր:

Յերևանի խմբակի դեմ ուղղված ռազմական գործողությունների ընդհանուր հրամանատարությունը հանձնվել եր գնդապետ Թարխանյանին:

Համարյա մոտ 2 և կես ամիս տևող դադարի ժամանակաշրջանում կարմիրների կողմից տարվում ե ուժեղ քաղաքական աշխատանք: Հրատարակվում են միքանի կոչեր՝ ուղղված Զանգեզուրի բնակությանը: 1-ին հեծյալ կորպուսի շտաբի կողմից մանրագամն հրահանգ ե տրվում

հրամանատարական և քաղաքական կազմին կարմիր-բանակինների քաղաքական մշակման համար, վորտեղ մանրամասն վեր և լուծվում դաշնակների և մուսավաթիստների քաղաքականությունը: Այդ հրահանգներից մեկը՝ «Զանգեզուրի գործողությունների գաղափարական բովանդակությունը և մեր տակտիկան» վերնագրով՝ հրատարակվում ե 1-ին հեծկորպուսի քաղբաժնի (տես հավելված № 15) կողմից:

Զանգեզուր—Ղարաբաղի ջոկատի ընդհանուր հարձակումը նշանակվում է հուլիսի 2-ին: Հակառակորդի ուշադրությունը Զանգեզուր—Ղարաբաղի և Յերևանի խմբակների ճակատից հեռացնելու նպատակով, 1-ին հայկական բրիգադին հրամայվում ե հունիսի 22-ի լուսաբացին հարձակել Քեշիշբենդի վրա Ղուրդուղուլան—Յենգիջաղովիթուլի—Սալլի գիծը գուրս գալունպատակով, իսկ 20-րդ հեծգնդին 3-րդ հայկական գնդի մի գումարտակի հետ միասին՝ զրավել Սելիմի կիրճը և միանալ հայկական բրիգադին:

Հունիսի 22-ին հայկական բրիգադը հարձակման ե անցնում և համառ մարտերից հետո ժամը 18-ին զրագում Յալդուզ սարը Ամազա, Արփա, Զիվա գյուղերը: Հունիսի 23-ի գիշերը հետապնդելով հակառակորդին՝ ժամը 20-ին զրավում ե Բաշքենդ, Քեշիշբենդ, Մալիշկա, Գարայիտ, Յենգիջաղ գյուղերը՝ վերցնելով մի մարտկոց (2 հրանոթ) սպասարկող անձնական կազմով, 1750 գերի, 4 գնդացիր, 37 ձի և մեծ քանակությամբ հրանյութեր:

Հունիսի 24-ին հակառակորդը հարձակվում ե 10, 242 բարձունքի վրա, սակայն 178-րդ գնդի հակահարձակումով յետ ե շպրտվում Մեղրի: Հակառակորդի Դարալապյազի խմբակի ջախջախվելը նախորոշում եր ամբողջ բանակի կործանումը:

3-րդ հայկական գնդի մի գումարտակն ամսի 22-ին անցնում է հարձակման, զրավում Սելիսի կիրճը և շարու-

նակում հարձակումը դեպի Հասանքենդ, վորտեղ և միանում եիր գնդին։ Հունիսի 26-ին բրիգադի զորամասերը հակառակորդի կողմից դիմադրության չհանդիպելով՝ հասնում են Փոր, Փաշալու, Գնդեվազ գյուղերին։ Գնդեվազը գրավելուց հետո խմբակետ Յավոնից նամակ է ստացվում, վորը խնդրում է հայտնել Հայաստանի խորհրդալին իշխանության կառավարությանը, վոր «Լեռնային Հայաստանի» կառավարությունը ցանկանում է խաղաղ բանակցություններ սկսել։

Հունիսի 26-ի ժամը 24-ին 178-րդ հրաձիգ գունդն առանց մարտի գրավում է 10,194 բարձունքը։ Այդ ժամանակ միջին մարտական տեղամասի կենտրոնացումը դեռ վերջացած չեր։ Հունիսի 28-ի լուսաբացին կ'նտրոնանալով՝ միջին մարտական տեղամասի զորամասերը հունիսի 28-ի լույս 29-ի գիշերն անցնում են հարձակման՝ ընդհանուր ուղղություն ունենալով Անգելառութը։ Ժամը 5-ի մոտերը 180-րդ գունդն առանց մարտի գրավում է Բիշանակի կիրճը և յերեկոյան դեմ հասնում է Անգելառութ—Մազրա գյուղին, Անգելառութ գյուղում գրավելով հրանյութերի պահեստը։

Հունիսի 29-ին հայկական բրիգադը գրավում է Զուլ, Ղուշի-Բլակ, Բազարչայ գյուղերը, վորտեղ և հրաման ե ստանում դադարեցնել հարձակումը և ամրանալ գրաված դիբքերում։ Հունիսի 30-ին միջին մարտական տեղամասի զորամասերը գրավում են Ղարաքիլիսա, Զալաջուղ գյուղերը, կապ հաստատելով ձախ մարտական տեղամասի 2-րդ հայկական գնդի հետ։ Այդպիսով Յերևանի խմբակի զորամասերը հունիսի 30-ի մոտերը գրավում են Սիսիանի շրջանը, այն ժամանակ, յերբ գլխավոր հարվածը հասցնող Զանգեզուր—Ղարաբաղի խմբակը նոր եր ավարտում զորքերի կենտրոնացումը Զանգեզուրի սահմաններում։

Հուլիսի 2-ին Զանգեզուր—Ղարաբաղի խմբակը հար-

ձակման ե անցնում ամբողջ ճակատի վրա։ Արդ խմբակի 246-րդ գունդը Խնածախ և Խոզնավար գյուղերին տիրելու համար մղած համառ մարտերից հետո, հակառակորդի գերազանց ուժերը ազդեցության տակ, ժամը 13-ին յետ ե քաշվում Սուլթանքենդ, բայց թիկունքից առաջ քաշված ուժերի ոժանդակությամբ կրկին հարձակման ե անցնում և յերեկոյան դեմ գրավում Խնածախի գլխավոր ուժերը 2-ժամյա մարտից հետո գրավում են Տեղ գյուղը։ հակառակորդին շպրտում հարավ և հետաղնդելով նահանջող հակառակորդին՝ ժամը 16-ի մոտերը գրավում են Գորիս քաղաքը, վերցնելով հակառակորդի հրետանակին պահեստը։

Յերեանի խմբակի ճակատում աջ մարտակտն ջոկատը, ուժեղացրած ձախ մարտական տեղամասից վերցրած «կարմիր տաբորով», շարունակում է հարձակումը Մեղրու վրա։

Միջին մարտական տեղամասում հակառակորդն անսպասելի կերպով գրոհում է 4-րդ հայկական հրաձիգ գնդին՝ Քափրիդաղ սարի և Ախլաթան գյուղի տեղամասում։ 3 ժամյա մարտից հետո հակառակորդը յետ ե շպրտում 9,377 բարձունքը։ 1-ին հայկական հեծգունդը ժամը 18 ի մոտերը մտնում է Գորիս քաղաքը, Զանգեզուր—Ղարաբաղի խմբակից 2 ժամով ուշ։

Հուլիսի 3-ին Յերևանի խմբակի աջ մարտական տեղամասում հակառակորդը հարձակվում է Սոսովս-դաղի վրա և զրոհելով ձախ թեր՝ ստիպում է մարտական տեղամասի զորամասերին նահանջել։ Զորամասերը միքանի անգամ անցնում են հարձակման Սոսովս սարը գրավելու նըլպատակով, սակայն անհետեանք։ Մարտական տեղամասի հրամանատարությունը, հաշվի առնելով զորամասերի հոգնածությունը, ուժեղ ջերմությունը (55 աստիճան) և ջրի բացակայությունը, հրամայում է մարտական տեղամասի զորամասերին յետ քաշվել Որդուբաթից 8 կիլոմետր գեղի արևելք ընկնող բարձունքների գիծը և ամրանալ։

Հուլիսի 4-ի առավոտյան ժամը 9-ին հայկական հեծգունդն առանց մարտի զրագում և Տաթեր, կապ հաստատելով 82-րդ առանձին հրածային բրիգադի հետ։ Հուլիսի 5 ի յերեկոյան դեմ Զանգեզուր—Ղարաբաղի խըմբակի զորամասերը հասնում են Դոնդարլու—Զեյվա գյուղերին։ Զեյվան զրավելուց և Զանգեզուր—Ղարաբաղի խըմբակի հետ կապ հաստատելուց հետո Յերևանի խմբակի զորամասերին, 4-րդ հայկական հրածիգ և 1-ին հայկական հեծգնդերից բացի, տրվում է 4-որյա հանգիստ։ 4-րդ հայկական և 1-ին հեծգնդերը, կովկասյան բանակի հրամատարի հրամանի համաձայն, յենթարկվում են Զանգեզուր—Ղարաբաղի խմբակի հրամանատարությանը։

Հուլիսի 6-ին 372-րդ հետևակալային գունդը 246-րդ հետևակային գնդի մի գումարտակով մարտով զրագում է Արփանլու, Տանձավեր և հասնելով Ղուխոյ-Խաչ-դաշտարքի սարին՝ ամրանում։ 370-րդ գունդը հուլիսի 7-ին հասնում է Ղաթարի պղնձահանքերին։ Հակառակորդն շտանգ լետ է քաշում, թուլ դիմագրություն ցուց տալով։ Հուլիսի 11-ին 246-րդ գնդի հետախուզությունը հասնելով Քուրդ-քենդ գյուղին՝ սահմանում ե, վոր հակառակորդը թողնելով 3 հրանոթ Մեղրում և անցնելով Արաքս գետը՝ մտել և Պարսկաստան։ Հուլիսի 13-ին Զանգեզուր—Ղարաբաղի խմբակի զորամասերը հասնում են Մեղրի։ Այդիսով Զանգեզուրի խնդիրը (վորի լուծման համար պահանջվում եր միքանի ամիս) լուծվում է 15 որվա ընթացքում։

Ուշացնելով իր հարձակումը՝ Զանգեզուր—Ղարաբաղի խմբակն իր ուշագրությունից վրիպում և դաշնակցական բանակի մնացորդների շրջապատման հնարավորությունը, իսկ հարձակումը դադարեցնելու և Յերևանի խմբակին հանգիստ տալու մասին տրված բանակի հրամանատարի կարգադրությունը զրկում և աջ սարտական տեղամասին Մեղրուց Պարսկաստան տանող ճանապարհ կտրելու հնա-

րագորությունից և թույլ ե տալիս գաշնակցական բանակի մնացորդներին անցնել Պարսկաստան։

Հուլիսի 2-ից մինչև 13 տեղի մարտերում Զանգեզուր—Ղարաբաղի խմբակի զորամասերը հակառակորդից զրագում են 53 գնդացիր, 3 հրանոթ, 1 ռադիո-կայան, 28 դինամո-մեքենաներ (վորոնք պետք ե Պարսկաստան ուղարկվելին) և շատ հրացաններ, փամփուշտներ, արկեր։

Զանգեզուրի անկումով կործանվում է «Հայաստանի փրկության կոօպերատոր» և «Լեռնային Հայաստանի» կառավարության վերջին հենարանը, վորոնց ավանդությունական գործողությունների հետևանքով ուզմի դաշտում զոհ գնացին միքանի հազար անմեղ մարդիկ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1921 թվին Հայաստանում տեղի ունեցած ռազմական գործողությունների ռւսումնասիրությունը, կապված այն գժվարությունների հետ, վորոնց մեջ ստիպված եր գործել Կարմիր բանակը, Կարմիր բանակի պատմության մեջ ներկայացնում ե իրենից վորոշ հետաքրքրություն, մանավանդ վոր լեռնային պատերազմը ԽՍՀՄ պայմաններում բնավ չի բացառվում։

Դամարլուի ուղարկան գործողությունները հանդիսանում են բաղաքացիական պատերազմի պատմության մեջ անդրկովկասյան հանրապետությունների տերրիտորիայի վրա տեղի ունեցած վերջին խոշոր գործողությունները, և այդ գործողություններով կարելի յե դատել Կարմիր բանակի վորակի ժամկետ և մասնավորապես, այդ բանակի մի մասնիկի—հայկական Կարմիր բանակի վորակի ժամկետ, նրա զարգացման այդ շրջանում (ունենալով ընդամենը 2-ամյա կազմակերպչական փորձ)։

Տակտիկական տեսակետից Հայաստանում տեղի ունեցած ռազմական գործողությունները տալիս են մի շարք ուսանելի որինակներ. —ա) լեռնային ուղարկամի պար-

մաններում մարտական գործողությունների կազմակերպումը (կողմերի պլանը), բ) ակտիվ, դյուրաշարժ և համառ հակառակորդի նկատմամբ վճռական հաջողություն ձեռք բերելու դժվարությունները, գ) համառ պաշտպանության համար բնական հարմարությունների ողտագործումը, դ) տեղանքի հատուկ-մանրակրկիտ հաշվառման անհրաժեշտությունը (բարձունքների նշանակությունը) և նրանց գրավումը գլխավոր հարվածի ուղղությունն ապահովելու համար:

Մյուս կողմից լեռնային պատերազմի պայմաններում հատկապես վառ կերպով ընդգծվում ե սինչև վերջը զորամասերին դեկավարություն ցույց տալու, առանձին զորամասերի հետ և առանձին զորամասերը միմյանց հետ կապ պահպանելու անհրաժեշտությունը, թեի պահպանությունը իշխող բարձունքներում պոստեր զնելու միջոցով:

Անհրաժեշտ ե մատնանշել, վոր լեռնային տեղանքին ճիշտ հարմարված մարտական սանր միավորների դիմադրողականությունը, անգամ յեթե նրանք չեն պաշտպանվում հրետանիով, սաստիկ բարձրանում ե (որինակ, 1-ին գնդի մղած 15-ժամյա մարտը, ընկ. Յերմոլենկովի ջոկատի 4-ժամյա պայքարը):

Հավելված № 1

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԶՈՐՔԵՐԻՆ

№ 1.

2 և 5 վերստի քարտեզ

Ք. Յերևան, բանակի շտաբ 2-ն հունվարի 1921 թ. ժամը 12 ին:

1) Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության և Թյուրքիայի Աղքալին Մեծ Ժողովի կառավարության միջև դեմոկրատական սկզբունքների հիման վրա բանակցություններ են տարվում յերկու կողմերի բանվորա-գյուղացիական մասսաների բարի-դրացիական կենակցությունն ապահովող խաղաղության դաշնագիր կնքելու մասին:

2) Դիլիջանի շրջանում տեղափորված ե 20-րդ ռուսական հետևակալային խորհրդային դիվիզիան, Ղարաբաղի շրջանում՝ 28-րդ ռուսական խորհրդային դիվիզիան:

3) Զորամասերին անհրաժեշտ հանգիստը տալու, նրանց լիովին կարգի բերելու և մարտական պատրաստությունը պահպանելով նրանց, քաղաքականապես պատրաստելու նպատակով հրամայում եմ:

Ա. Աջ իմբակին
2-րդ հրաձիգ բրիգադի մազ գյուղի, Դամլիկ-Գյանհրամանատար ընկ. Յեր-գուկ սարի, Բաշաբարանի, մոլենկո Աշտարակ, Ոշական, Կոշ,
1-ին հրաձկային գունդ . . . 3 գումարա . Սարտարաբադ գյուղերի, Եղ-
4-րդ 3 3 3 8-րդ թեթև մարտկոց . . . 4 հրանոթ միածին կայարանի շրջա-

5-ըդ լեռնալին մարտկ. . . 4 հրանոթ
1-ին գնդի հեծյալ վաշտ . . 1 հեծվաշտ
Բարձած սաղբոկայան . . 1 հատ
Մխոցային մարտկոց . . 6 հրանոթ
Հնդամենը 6 գումարտակ, 14 հրան.,
1 հեծվաշտ, 1 սաղբոկայան

նում, բրիգադի հրածդային
գնդերից մեկը մեկական
գումարտակ ունենա Դա-
նադիրմազ — Բաշաբարան,
Կոշ, Սարդարաբագում, վեր-
ջին կետում և մի հեծվաշտ:
Մյուս հրածդային գումդը —
Աշտարակում և Ոշակա-
նում, հրետանին տեղավո-
րել ըստ հայեցողության:

2. Պահակալին պահպա-
նության միջոցներ ձեռք առ
նել չեղոք գոտու սահմա-
նում և հեծվաշտով դիտել
Արաքս գետի ափերը Սուր-
մանլու կայարանից (բաց-
առյալ) մինչև Սարաջալար
կայարանը (ներառյալ):

3. Գործակալական հետա-
խուզություն վարել Ալեք-
սանդրապոլի, Անի կայարա-
նի, Կողբի և Իգդիրի շրջան-
ներում:

1. Տեղափորփել Ղամարլու,
Ավշար, Դավալու գյուղերի
շրջանում, 2 գումարտակ
ունենալով Սմոքենդ — Ավ-
շար կայարան, Սարայ-Բու-
լաղի լեռնաշղթա, Զենջիլու
գյուղերի գծում:

2. Պահակալին պահպանու-
թյան միջոցներ ձեռք առ-
նել և դիտել Արաքս գետի

Բ. Զախ Խմբակին

1-ին հրածիգ բրիգադի
հրամանատար ընկ. Միրե-
մանով

2-ըդ հրածիգ գումդ — 3 գում.

3-ըդ » » — 3 »

1-ին թեթե մարտ. — 4 հրան.

4-ըդ լեռնային » — 4 »

Հնդամենը 6 գում., 8 հրան..

ափերը Մարաջալար կայա-
րանից (բացառյալ) մինչև
Ռեհանլու կայարանը (նե-
րառյալ):

3. Գործակալական հետա-
խուզություն վարել Արալիս,
Մակվա խանություն, Շահ-
թախտի և Նախիջևանի շրջ-
աններում:

1. Մնալ ներկայումս գրա-
ված շրջանում:

2. Պահակալին միջոցներ
ձեռք առնել Հայաստանի
սահմանի վրա:

3. Զանդեզուրի քաղաքա-
կան կացությունը պարզ չլի-
նելու պատճառով միջոցներ
ձեռք առնել և հնարավո-
րություն չտալ, վորպեսզի
զենք և հրանդեթեր գնվեն և
փոխադրվեն Զանդեզուր:

4. Գործակալական հետախու-
զություն կատարել Զանդե-
զուրում:

1. Մնալ գրաված շրջա-
նում:

2. Միջոցներ ձեռք առնել
գրաված շրջանում լիակա-
տար կարգը պահպանելու
համար:

Դ. Դարևալազյազի ջոկատին
Զոկատի պետ ընկ. Մելիք-
Մուրադով

2-ըդ առանձին հր. գում. — 1 գում.

6-ըդ լեռնային մարտկոց — 4 հրան.

Հնդամենը 1 գում., 4 հրանոթ:

Ե. Սոր Բայազետի ջոկատին
Զոկատի պետ ընկ. Բեկ-
Զուրաբով

1-ին առանձին հր. գում. — 1 գում.

3-ըդ լեռնային մարտկոց — 4 հրան.

Հնդամենը 1 գում., 4 հրանոթ:

Ե. Բանակային ոժմանդակին
5-րդ հրաձ. գունդ—3 գում.
6-րդ „ „ „ 3 „
1-ին հոբեցային մարտ.—2 հր.
2-րդ „ „ „ 3 „
Վարժական „ „ „ 3 „
1-ին հեծունդ „ „ „ 2 հեծվաշտ
2-րդ „ „ „ 3 „
2-րդ թեթև մարտկոց —4 հրան.
9-րդ լեռնային „ „ 4 „
Հնդամենը 6 գում, 12 հրանոթ,
5 հեծվաշտ:

Զրահագնացքներ «Ընկ.
Մուսայելյան» և «Աղատա-
մարտ»:

զ. Սահմանորոշ գծերն են՝

2-րդ հրաձիգ բրիգադի և բանակային ոժմանդակի
միջև Սարի-կայա սարը (7742), Ալիբեկ սարը (9382)
Յեղարդը, Վաղարշապատը, Սարաջալլար կայարանը (բո-
լոր կետերը ներառյալ 2-րդ բրիգադի համար):

1-ին հրաձգային բրիգադի, բանակային ոժմանդակի
և Դարալա գլազի ջոկատի «իջև—Սարաջալլար կայարանը
բացառյալ—Բաշգյառնի—Ղալդաշ սարը (6265), Քյուսուս
Դաղը (5950)—Թոփի-դաղ (9566) Զիկան ներառյալ, Ար-
փա գյուղը (բացառյալ): Դարալագլազի ջոկատի և բա-
նակային ոժմանդակի միջև Թոփի-դաղ սարից սկսած գե-
պի հյուսիս-արևելք՝ Նոր-Բայազետ և Շարուրի գավառ-
ների վարչական սահմանների գծով: Նոր-Բայազետի ջո-
կատի և բանակային ոժմանդակի միջև—Գյոքչայ լիճ—
Նոր-Բայազետը (ներառյալ), Աղ-դաղը (11,500)—Յերեա-
նի և Նոր-Բայազետի գավառների վարչական սահմանը
մինչև Թոփի-դաղ սարը (9566):

4) Բրիգագների հրամանատարներին և ջոկատների
պետերին շտապի միջոցներ ձեռք առնել զորամասերին
արժանի տեսք տալու համար, հատուկ ուշադրություն

1. Տեղավորվել Յերեան,
Քանաքեռ, Ներքին-Ախտա,
Յելենովկա շրջաններում,
մեկական գունդ ունենա-
լով Փարաքարում, Աթարե-
կովի կալվածքում, Քանա-
քեռում և մոտակա գյուղե-
րում, իսկ հեծքը գալագին
Ն.-Ախտա, Յելենովկա և
Որդակլու շրջաններում:

Յերեան (հին կայարան):

Պարձնելով ինչպես կարմիր-բանակայինների, այնպես ել
հրամկազմի մարտական և քաղաքական պատրաստու-
թյան վրա, իսկ բանակային ոժմանդակի զորամասերին
պատրաստ լինել մոռ ապագայում փոխելու այն ընկեր-
ներին, վորոնք ներկայումս գտնվում են ճակատում:

Բրիգագների բոլոր շտաբներին և զորամասերին ա-
մուր տեխնիկական կապ հաստատել միջանց և բանակի
շտաբի միջև և ամեն կերպ պահպանել այն: Զորամասե-
րի հրամանատարներին, ոգտվելով հանգստի ժամանակից,
ամենակարճ ժամանակամիջոցում զորամասերում կանո-
նավոր զորային պարագմունքներ մացնել, զրուցներ տա-
նել, վորոնց միջոցով բացատրել կարմիր-բանակայիննե-
րին խորհրդային իշխանության ելությունը, այն գերը,
վոր կատարում ե Կարմիր բանակը:

Թուրքական գյուղերում տեղավորված զորամասերին
զգուշ վերաբերվել ազգաբնակությանը, ազգային ատե-
լություն չզարթեցնելու նպատակով չխախտել նրանց
սովորություններն ու կրոնը:

5. Հայթալիթման պետին մտահոգվել զորամասերի
վերախմբավորումը վերջանալու մոտ, սույն հրամանի
համաձայն, զորամասերին մատակարարել պարենի և հրա-
նյութերի Յորվա անձեռնմխելի պաշար և Վաղարշապա-
տում ու Ղամարլվում պարենի և հրետանային պահեստ-
ներ պատրաստել Յորվա անձեռնմխելի պաշարով: Նոր-
Բայազետի և Դարալագլազի ջոկատներին—Ճանապարհ-
ների գժվար անցանելիության և գումակի անկանոնու-
թյան պատճառով մատակարարել Յամսլա պարենի և
Խարի պաշար, իրենց տեղերում թողնելով հրետապա-
հեստները:

6. Բանակի սահմանագույն պետին շտապի միջոցներ
ձեռք առնել, զորամասերի բժշկական կազմը լրացնել և
կազմակերպել վիրակապության խմբեր Դարալագլազի և
Նոր-Բայազետի ջոկատներին կից և բրիգադային հիգան-

դանոցներ՝ Վաղարշապատում և Ղամարլվում, այլի բաղ-
նիքներ կառուցել Ղամարլվում, Վաղարշապատում, Յե-
լենովկայում, Նոր-Բայազետում ու Քեշիչքենդում:

7. Բանակի ճարտարագիտական մասի պետին նույն
ժամանակամիջոցում մտահոգվել բնակելի տեսք տալ Յ-րդ
հրաձիգ բրիգադի տեղավորման համար նշանակված բնա-
կարաններին և բոլոր միջոցներով նպաստել բանակի
հայթալիման պետին՝ հացը թիսելու գործը կազմակերպե-
լու մեջ, և բանակի սանվարչության պետին՝ բաղնիքներ
կառուցելու գործում:

8. Բանակի կապի սետին ձեռք առնել իրենից կախ-
ված բոլոր միջոցները՝ մշտական և հուսալի կապ հաստա-
տելու համար Յերևանի, Բագվի բրիգադների շտաբների
և ջոկատների հետ:

9. Շտապ զեկուցագրերն ուղարկել համաձայն նըանց
ցուցակի:

10. Սույն հրամանի համաձայն վերախմբավորումն
ավարտել վոչ ուշ, քան 1921 թվի հունվարի 15-ը:

11. Տեղականներ—հայկական բանակի շտաբի պետ՝
ընկ. Հախվերդով և բանակի շտաբի պետի ոգնական՝ ընկ.
Ֆիսենկո:

ի. ս. ՀՄԽՀ բանակի հրամանատար՝ Դրո
Ռազմկոմ՝ Սվիրիդով
Բանակի շտաբի պետ՝ Հախվերդով

Հավելված № 2

Հ Բ Ա Մ Ա Ն
Հ Ս Խ Հ Զ Ո Ր Ք Ե Ր Ի Ւ
№ 14 /գ.

2 և 5 վերատի քարտեզ

19 փետրվարի 1921 թ. Կայարան Ղամարլու

16 ժամ 30 րոպե

1. Հակառակորդը ձգտում է անցնել մեր թիկունքը
և դրանով կտրել մեզ Նախիջևանում գտնվող ոռոսական

գորամասերից: Հրամայում եմ իմ խնամքին հանձնված
զորքերին յետ քաշվել նոր ղերքեր գրավել, զաշնակնե-
րի դեմ մոտ ապահայում ակարիկ գործողություններ վա-
րելու համար իրենց ամբողջովին կարգի բերել, գործո-
ղություններ, վորոնք կակսվեն, հենց վոր կհայտնվի Աղըս-
տաֆալից արդեն դեպի Յերևան գնացող ոռոսական զո-
րամասերից շարժումը: Իկատարումն հրամայում եմ.—
ա. Աջ զորակուն

2 րդ գնդի հրամանատար
ընկ. Ֆիշելսիչ

2-րդ հրաձգային գունդ—2 զում.

4-րդ լեռնային մարտկոց 2 հրան.

Հնդամենը 2 զում., 2 հրան:

1. Նույն փետրվարի 19-ին
մութն ընկնելու պես, պահ-
պանության ամենազին
պիջոցներ ձեռք առնելով
սկսել նահանջը Ն. Աղըսա-
դիկին, Մեհրաբ, Քյուրդ-
քենդ, Մուսունլու, Յենգի-
ջա, Բեուք-Վեդի գլուղերի
ճանապարհով այն հաշվով,
վորպեսզի փետրվարի 20-ի
լուսաբացին զորամասերը
գիրքեր գրավեն Ն.-Կարա-
բեկլյառ (Զիման-քենդ) —
Տաշու, Բեուք-Վեդի (Ներա-
պալ) գծում:

2. Նոր գրաված դիրքում
պահակային պահպանու-
թյան միջոցներ ձեռք առ-
նել և հետախուզություն
վարել Վեդիչայ գետի հով-
տում կարաբեկլյառ և Դախ-
նազ գլուղերի վրա, այլև
դեպի Ղոյթուլ գյուղը և
Բոզբուրուն բարձունքը:

ը. Զախ զորասյուն
Զոկատի պետն և 1-ին հրա-
ձիգ բրիգադի հրամանատար
ընկ. Միքիլանովը

178-րդ հրած. գունդը—2 գում.

3-րդ » » —2 »

Ընկ. Յանուշեսկու ջոկատը 1 »

1-ին թեթէ բաժնյակ—5 հր.

2-րդ » (սխոցալին) —2 »

Հնդամենը 5 գում., 9 հրանոթ:

1. Սույն փետրվարի 19-ին
մութն ընկնելուն պես պահ-
պանության ամենազնին
միջոցներ ձեռք առնելով՝
աչ զորասյունի հետ միա-
տեղ սկսել նահանջը իման-
շալու—Ղամարլու—Յուլիա,
իսկ այնուհետև դեպի Ավ-
շար գյուղի խճուղով այն
հաշվով, վորպեսզի Յ-րդ
հրածգալին գունդը թեթե
մարտկոցի մի դասակով փե-
տրվարի 20-ի լուսաբացին
զրավի Բեռլ-Վեդի (բա-
ցառլալ) — Յենգիջա — Քի-
չուկ-Վեդի—425, 9 բարձուն-
քը (ներառյալ) դիրքերը:

2. Նոր զրաված դիրքե-
րում գնդին ձեռք առնել
պահակալին պահպանության
միջոցներ և խճուղով հետա-
խուղություն կատարել դե-
պի Յուլիա գյուղը և Արաքս
գետի ափը՝ դեպի հյուսիս-
արևմուտք:

3. 178-րդ գնդին 1-ին թե-
թէ մարտկոցի Յհրանոթների
և 2-րդ հորիցային մարտկո-
ցի 2 հրանոթների կազմով
կանգնել ոժանդակում՝ Ավ-
շար գյուղում:

4. Ընկ. Յանուշեսկու ջո-
կատին 2-րդ մխոցալին թե-

թէ բաժնյակի մի դասակով
զրավել Խալիսա գյուղը, խըն-
դիր ունենալով պաշտպանել
զորամասերի ձախ թեր և
դիտել Արաքս գետի ձախ
ափը:

գ. Զրահագնացքներ

Հրետանու պետ ընկ. ՍԵ-
մլոնով

Զրահագնացքներ՝
«Ազատամարտ»
«Ընկ. Մուսայելյան»:

Քնդամենը 2 զրահագնացք:

1. Փետրվարի 19-ին մութն
ընկնելուն պես «Ընկ.
Մուսայելյան» զրահագնաց-
քին գուրս գալ դեպի Շի-
րազլու կայարանը, պարենի
գնացքի յետելից, խնդիր ու-
նենալով վերջինիս պաշտ-
պանությունը:

2. «Ազատամարտ» զրա-
հագնացքին նահանջն սկսել
վերջապահ զորամասերի հետ,
պաշտպանելով յետ նահան-
ջող զորամասերին:

2. Հայթայթման պետին մտահոգիել մասնավոր շու-
կալում գնումներ կատարելու և մասնատրման միջոցով
